Տ Ա Ր Ե Կ Ա Ն Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

2012 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2013

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ 49

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 56

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 60

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 66

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 71

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 77

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ .. 84

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ 91

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 104

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 109

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 115

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ 120

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ…… 126

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 130

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը

2012 թվականին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ հանրապետության 6 մարզկենտրոններում, մասնավորապես՝ Վանաձորում, Գավառում, Իջևանում, Գյումրիում, Եղեգնաձորում, Կապանում հիմնվել են Պաշտպանի մարզային գրասենյակներ:

Ներկայումս Պաշտպանի աշխատակազմում գործում է 5 վարչություն՝ քաղաքացիների ընդունելության և նամակների վարչություն, քաղաքացիական և քաղաքական իրավունքների վարչություն, քրեադատավարական իրավունքների վարչություն, իրավական վերլուծության վարչություն, արտաքին կապերի վարչություն: Բացի այդ Պաշտպանն ունի 4 խորհրդական՝ զինծառայողների և ազատազրկվածների հարցերով, երեխաների և փախստականների հարցերով, կանանց և շրջակա միջավայրի պահպանության հարցերով, հաշմանդամություն ունեցող անձանց և փոքրամասնությունների հարցերով: Պաշտպանն ունի նաև երկու տեղակալ:

Անձանց դիմումների վիճակագրություն

Պաշտպանը և իր աշխատակազմը իրավական ծառայություն է մատուցել 7395 մարդու: Պաշտպանի իրավասություններին վերաբերող 999 բողոքների ուսումնասիրության արդյունքում վերականգնվել են 557 անձանց խախտված իրավունքները: 2011թ–ի համեմատ Պաշտպանի աշխատակազմի կողմից վարույթ ընդունած գործերի ընդհանուր թիվն աճել է 39%-ով, իսկ դրական լուծում ստացած գործերի թիվն աճել է 38%-ով: 2012 թվականին պետական մարմինների կողմից մարդու իրավունքների խախտման մասին 31 որոշում է կայացվել: Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ամփոփ վիճակագրությունը ըստ պետական մարմինների և ըստ մարզերի ներկայացված է Հավելվածում:

116 թեժ գծի և արագ արձագանքման ծառայություն

Պաշտպանի թեժ գծի ծառայությունը գործում է և տրամադրում է քաղաքացիներին իրավաբանական խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում Պաշտպանի ներկայացուցիչները արագ արձագանքմամբ այցելում էին դեպքի վայր և օգնում տեղում: 2012թ. թեժ գիծն ընդունել է 1219 ահազանգեր: Արագ արձագանքումը հիմնականում իրականացվել է, երբ անձն անհիմն բերման է ենթարկվել իրավապահ մարմինների կողմից կամ ենթարկվել է բռնության: Արագ արձագանքմամբ քաղաքացիներին աջակցություն է տրամադրվել նաև հավաքների և այլ զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանության հետ ծագած խնդիրների պարագայում: Ընդհանուր առմամբ իրականացվել է 145 արագ արձագանքում, տրամադրվել՝ 1074 իրավաբանական խորհրդատվություն:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Դիմումներ ՀՀ Սահմանադրական դատարան

2012 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մի շարք դիմումներ է ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան, որոնց արդյունքում.

- վարչական իրավախախտում կատարելու դեպքում քաղաքացին դատախազի որոշմամբ այլևս չի կարող է ձերբակալվել և պահվել ընդհուպ մինչև 10 օր,
- անձիք կարող են ստանալ արտերկրում գործող նոտարի կողմից հաստատված լիազորագիր՝ կենսաթոշակ ստանալու նպատակով,
- կազմակերպությունները կարող են արդյունավետ բողոքարկել ֆինանսական հաշտարարի որոշումները դատարանում,
- հարկային արգելանքի ինստիտուտը կարող է կիրառվել միայն օրենքով նախատեսված այլ միջոցների կիրառումը սպառելուց հետո,
- կանխարգելվեցին անձի իրավական վիճակը ծանրացնող դրույթների հետադարձ ուժի կիրառումը, ինչպես նաև անձանց դատարան դիմելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ դեպքերը,
- հստակեցվեց վարչական դատարանի հայցադիմումի ընդունումը մերժելու գործընթացը,
- մի շարք իրավական դրույթների, մասնավորապես դրանց հետադարձ ուժի կիրառելիության վերաբերյալ Սահմանադրական դատարանը հայտնեց իրավական դիրքորոշում:

Օրենսդրական առաջարկություններ և զեկույցներ

2012 թվականի ընթացքում Պաշտպանը ներկայացրել է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված շուրջ 60 օրենսդրական առաջարկություններ, որոնք մեծամասամբ ընդունվել են նախագծերի հեղինակների կողմից, մասնավորապես.

- Կառավարության համապատասխան որոշման մեջ հաշմանդամ երեխաներ տեղափոխող տրանսպորտային միջոցների համար հատուկ նշանների և կայանատեղերի նախատեսումը, որի հետևանքով ծնողները այլևս չեն տուգանվում:
- ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ անչափահասի մասնակցությամբ հարցաքննության և առերեսման անցկացման կարգի բարելավումը, ձերբակալված կամ կալանավորված անձանց՝ ազատության սահմանափակման պահից սկսած անվճար բժշկական հետազոտություն անցնելը և անվճար եզրակացություն ստանալու իրավունքի ապահովումը, անձին ձերբակալելու պահից իր իրավունքների մասին տեղեկացնելը և այլն;
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝ հետագայում քրեական գործով պատասխանատվությունից ազատվելու նպատակով՝ գործին մասնակցող անձի կողմից որպես վկա իր, իր ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքից օգտվելու ապահովումը; դատարանի կողմից ապացույցներ պահանջելու ընթացակարգի հստակեցումը; որոշ դատական ակտերի բողոքարկման սահմանափակումների վերացումը և այլն;

- «Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝ հարկային մարմնի կողմից առանց դատարանի որոշման գույքի վրա արգելանք դնելը, հարկային մարմինների՝ իրեր վերցնելու անիրավաչափ լիազորության վերացումը, ոգելից խմիչքների արտադրության արտոնագիր ստացած անձանց համար ձեռնարկատիրական գործունեության այլ տեսակով զբաղվելու արգելքի վերացումը և այլն:
- ՀՀ Ընտրական օրենսգրքի վերաբերյալ՝ անձը հաստատող փաստաթղթում դրվող դրոշմակնիքի ինստիտուտի փոխարինումը մատների թանաքոտման ինստիտուտով, թեկնածուների գրանցման համար վերջին հինգ տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու պահանջի հստակեցումը, հաշմանդամների ընտրական իրավունքի ապահովումը և այլն:

Պաշտպանի կողմից ուսումնասիրվել են մի շարք այլ օրենքների նախագծեր, ինչպիսիք են՝ «Ընտանեկան բռնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Խղճի և կրոնական ազատությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը, որոնց վերաբերյալ նույնպես ներկայացվել են մի շարք առաջարկներ:

Պաշտպանը ներկայացրել է տարեկան զեկույց և 4 արտահերթ հրապարակային զեկույցներ: Պաշտպանը մանրակրկիտ ներկայացրել է 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումները և խնդիրները հատուկ արտահերթ զեկույցով: Առանձին զեկույցներ են ներկայացվել նաև ՀՀ-ում Խոշտանգումների դեմ կոնվենցիայի իմպլեմենտացիայի վերաբերյալ, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների Միջազգային դաշնագրի իրականացման վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ-ի կողմից Երեխաների իրավունքների կոնվենցիայի իրականացման վերաբերյալ:

<u>«Խտրականության դեմ» օրենքի նախագիծ</u>

2012 թվականի հոկտեմբերին Պաշտպանի աշխատակազմը, հաշվի առնելով խտրականության դրսևորման արատավոր երևույթի առկայությունը և դրա կանխարգելմանն ուղղված գործողությունների կարևորությունը, ձեռնամուխ է եղել մշակելու «Խտրականության դեմ» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծի պատրաստման գործընթացում աշխատակազմը ներգրավել է ԵՄԽԽ կողմից տրամադրված միջազգային փորձագետների և մի շարք հասարակական կազմակերպությունների ներուժը: Բացի այդ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի հետ ձեռք են բերվել նախնական համաձայնություններ՝ նախագիծը ավարտման փուլում վերանայելու և փորձագիտական եզրակացություն տալու համար:

Հայտարարություններ

2012 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից արվել են մի քանի տասնյակ հայտարարություններ ՀՀ դատական իշխանության թերացումների, կենսաթոշակառուների իրավունքների խախտումների, կանանց, սոցիալապես անապահով խավերի, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ:

Ելնելով ՀՀ օրենսդրության և միջազգային նորմերի պահանջներից, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությունից, ինչպես նաև ղեկավարվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներով՝ 2012 թվականի մարտին Պաշտպանը կոչ էր արել ՀՀ ոստիկանությանը թույլատրել Մաշտոցի պուրակում խաղաղ ցուցարարներին վրանի տեղադրումը:

2012 թվականի ապրիլի 5-ին Պաշտպանը բաց նամակով դիմել էր ՀՀ Ազգային ժողովի նախագահին՝ 2011 թվականի սեպտեմբերի 30-ին ՀՀ զինված ուժերում զոհված 8 զինծառայողների գործերով ակնկալելով ԱԺ նախագահի գնահատականներն ու դիրքորոշումները յուրաքանչյուր գործի խնդրով բարձրացված խախտումների առկայության կամ բացակայության վերաբերյալ, ինչպես նաև՝ զոհվածների իրավահաջորդներին հնարավոր իրավաքաղաքական աջակցությունը ՀՀ Ազգային ժողովի կողմից:

Անդրադարձ կատարելով նաև 2012 թվականի հունիսի 15-ին ՀՀ կառավարության կողմից ներկայացված և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենսդրական փոփոխությունների փաթեթին, որով Սևանա լճից ջրի բացթողման տարեկան ծավալ 170 միլիոն խմ-ի փոխարեն սահմանվեց 320 միլիոն խմ՝ Պաշտպանը կոչ էր արել իրավասու բոլոր պետական մարմիններին որոշումների կայացման յուրաքանչյուր գործընթաց իրականացնել օրենքի անշեղ պահպանմամբ, այն է՝ հասարակական լսումների կազմակերպմամբ:

Այցելություններ կալանավայրեր, զորամասեր և այլ փակ հաստատություններ

Պաշտպանը և իր ներկայացուցիչները, մի շարք հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացրել են 151 այցելություններ քրեակատարողական հիմնարկներ, ոստիկանության բաժիններ, ձերբակալված անձանց պահման վայրեր, զորամասեր, հոգեբուժարաններ, մանկատներ, հատուկ դպրոցներ, տուն-ինտերնատներ, գիշերօթիկ հաստատություններ: Այցելությունների արդյունքում բացահայտվել և/կամ վերհանվել են մի շարք մտահոգիչ խնդիրներ, մասնավորապես՝ նախաքննության և հետաքննության փուլում՝ ոստիկանության բաժիններ բերման ենթարկված կամ հրավիրված անձանց հարցաքննությունների ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից խոշտանգումների, դաժան, անմարդկային և այլ ֆիզիկական և հոգեբանական վատ վերաբերմունքի դեպքեր, անձանց փակ հաստատություններ ընդունելիս արտաքին զննության պատշաճ չկատարման դեպքեր, հացադուլ հայտարարած անձանց դաժան և անմարդկային պայմաններում պահելու դեպքեր, քրեակատարողական հիմնարկների համատարած գերբնակեցման խնդիրը և այլն: Որպես Ազգային

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

կանխարգելման մեխանիզմ (ԱԿՄ)՝ Պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների և բռնությունների կանխարգելման բաժինը և 2012 թվականին ստեղծված Պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհուրդը խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի կամ պատժի դեպքերի բացահայտման և կանխարգելման նպատակով նախաձեռնել է շուրջ 136 այցելություններ փակ և կիսափակ հաստատություններ (քրեակատարողական հիմնարկներ, ոստիկանության բաժիններ, ձերբակալված անձանց պահման վայրեր, կարգապահական մեկուսարաններ, զորամասեր, հոգեբուժարաններ, մանկատներ, հատուկ դպրոցներ, տուն-ինտերնատներ, գիշերօթիկ հաստատություններ): Որոշ հաստատություններում իրականացվել են կրկնակի կամ 3 և ավել անգամ այցելություններ: Այցելությունների արդյունքում վերհանված հիմնական խնդիրներն են՝ բերման ենթարկված կամ հրավիրված անձանց՝ օրենքով սահմանված առավելագույնը երեք ժամից ավել ոստիկանության բաժիններում պահելը; ՁՊՎ-ներում պահման համար օրենքով սահմանված 72 ժամը գերազանցելը; նախաքննության և հետաքննության փուլում ոստիկանության բաժիններ բերման ենթարկված կամ հրավիրված անձանց հարցաքննությունների ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից ֆիզիկական և հոգեբանական վատ վերաբերմունքի դրսևորումը; անձանց ՁՊՎ-ներ, ՔԿՀ-ներ և ռազմական ոստիկանության կալանատներ տեղափոխելիս արտաքին զննություն պատշաճ չկատարումը; ՔԿՀ-ների գերբնակեցումը; որոշ դեպքերում՝ քրեակատարողական հիմնարկի անբավարար պայմանների հետևանքով հացադուլ հայտարարած անձանց պատժախցերում պահելը; ՀՀ պաշտպանության զորամասերում, հոգեբուժարաններում կենցաղային պայմանները, ինչպես նաև մանկատների, հատուկ դպրոցների, տուն-ինտերնատների բժշկական ծառայությունը կանոնակարգված և ՀՀ առողջապահության նախարարության չափորոշիչներին համապատասխանեցված չլինելը:

<u>Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ</u>

Մասնագիտական քննարկումներ են կազմակերպվել Պաշտպանին ներկայացված օրենսդրական նախագծերի ամբողջական ուսումնասիրման, ինչպես նաև խոցելի խմբերի պաշտպանության ոլորտներում առկա մի շարք համակարգային խնդիրների լուծման նպատակով, մասնավորապես՝ քրեական, քաղաքացիական, վարչական դատավարությունների նոր օրենսգրքերի նախագծերի վերաբերյալ, «Խտրականության դեմ» օրենքի նախագծի մշակման անհրաժեշտության վերաբերյալ, «Խղճի և կրոնական ազատությունների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, ընտանեկան բռնության վերաբերյալ սեմինար քննարկում Գյումրիում մանկապարտեզների աշխատողների համար, քննարկում Սևանից ջրի բացթողման մասին կառավարության որոշման վերաբերյալ: Քննարկումների նպատակը հիշյալ խնդիրների վերաբերյալ հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական նախաձեռնությունների կարծիքների հավաքագրումն էր՝ դրանք Պաշտպանի կողմից առաջարկվող օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների փաթեթներում ներառելու համար: Նման կերպ նաև ամրապնդվում է համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ՝ դարձնելով այն առավել արդյունավետ, իսկ ներկայացվող առաջարկները արտահայտում են նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների դիրքորոշումները՝ այդպիսով մասնակից դարձնելով նրանց համակարգային խնդիրների լուծմանը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ քննարկումներ են իրականացվել և բարձրացվել են մի շարք համակարգային խնդիրներ: Այսպես, մանկատան շրջանավարտներին բնակարաններով ապահովելու խնդրի բարձրաձայնումից հետո Կառավարության հաջորդող նիստում վարչապետը անդրադարձ կատարեց խնդրին՝ նշելով, որ մշակվել է մանկատան շրջանավարտներին բնակարանով ապահովելու նոր հայեցակարգ, որով պետությունը պարտավորվում է վերջիններիս ապահովել բնակելի տարածքներով: Ավելին՝ Երևանի Թբիլիսյան խճուղի 3 հասցեում գտնվող ուսումնաարտադրական մասնաշենքում կառուցվում են հանրակացարանային տիպի մի քանի տասնյակ բնակարաններ:
Բնապահպան ակտիվիստների հետ հանդիպման արդյունքում Պաշտպանի մոտ ձևավորվեց հստակ դիրքորոշում Մաշտոցի պուրակում տեղադրված տաղավարների օրինականության վերաբերյալ, որի շնորհիվ Պաշտպանի աշխատակազմը ակտիվ ներգրավվեց տեղի ունեցող գործընթացներում, բնապահպանների կողմից տարվող պայքարում: Պաշտպանը հայտարարությամբ, այնուհետև տարբեր հարցազրույցների և ելույթների ժամանակ հայտնեց իր դիրքորոշումը վրանի տեղադրման արգելքի անօրինական լինելու վերաբերյալ, իսկ Պաշտպանի արագ արձագանքման խմբի աշխատակիցները յուրաքանչյուր ահազանգի դեպքում հսկողություն էին իրականացնում ոստիկանության գործողությունների ընթացքում օրինականության պահպանման նկատմամբ՝ արձանագրելով և բարձրաձայնելով բոլոր խախտումները:
Անչափահասների արդարադատության վերաբերյալ քննարկմանը ներկա էին 25 անչափահաս իրավախախտներ, որոնք եկել էին Պաշտպանի գրասենյակ ծանոթանալու Պաշտպանի գործունեությանը, ինչպես նաև ստանալու իրենց հուզող մի շարք հարցերի պատասխաններ: Արդյունքում բացահայտվեցին անչափահասների արդարադատության հետ կապված մի շարք խնդիրներ:

Հանդիպումներ են կազմակերպվել ազգային փոքրամասնությունների երիտասարդ ներկայացուցիչների, փախստական կանանց, թիվ 194 դպրոցի աշակերտների, Երևանի տնտեսական քոլեջի ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է Պաշտպանի աշխատակազմի գործունեությունը, դիմելու կարգը, անդրադարձ է կատարվել ընդհանրապես մարդու իրավունքներին, ինչպես նաև քննարկվել են վերջիններիս կողմից բարձրացված բազմաթիվ հարցեր:

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է մարդու իրավունքներին նվիրված օլիմպիադա: Օլիմպիադայի ընթացքում անցկացվել է դատախաղ, հաղթողներին շնորհվել պատվոգրեր և մրցանակներ՝ այդ կերպ ավելի ոգևորելով մասնակիցներին առավել իրազեկ լինելու մարդու իրավունքների, դրանց պաշտպանության միջոցների վերաբերյալ:

Հունիսի 1-ի կապակցությամբ միջոցառում է կազմակերպվել դպրոցների աշակերտների համար: Երևանի շուրջ 7 դպրոցների ավարտական դասարանների աշակերտները հյուրընկալվեցին Պաշտպանի աշխատակազմում, ծանոթացան Պաշտպանի գործունեությանը, տեղի ունեցավ քննարկում երեխաների իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ ֆիլմի դիտում:

Պաշտպանը երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ զեկույց է ներկայացրել ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտե: Զեկույցը ներկայացնում էր երեխաների իրավունքների պաշտպանության 8 ոլորտներում առկա հիմնախնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկները: Զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտողությունները Կոմիտեի կողմից կներկայացվեն սույն թվականի մայիսին:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ

2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի 116 թեժ գիծը թե նախընտրական շրջանում և թե ընտրությունների օրը գործել է շուրջօրյա: Ընդհանուր առմամբ Պաշտպանը ընտրական իրավունքների իրացման վերաբերյալ ստացել է 310 ահազանգ: Նախընտրական քարոզչության ընթացքում ստացվել է 106 ահազանգ. 64-ը՝ Երևանից, 42-ը՝ մարզերից: Ընտրության օրը ստացվել է 204 ահազանգ. 114-ը՝ Երևանից, 90-ը՝ մարզերից: Ստացված ահազանգերով Պաշտպանի արագ արձագանքման խմբերը 119 դեպքերում տեղում տրամադրել են իրավական աջակցություն: Առաջնորդվելով Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով՝ Պաշտպանը 2012թ-ի մայիսի 6-ի ՀՀ Ազգային Ժողովի ընտրությունների վերաբերյալ հանդես եկավ արտահերթ զեկույցով:

Համագործակցության հուշագրեր

Համագործակցության հուշագրեր են ստորագրվել մի շարք կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ 2012թ. հուլիսին Պաշտպանը համագործակցության հուշագիր է ստորագրել Հայաստանում Օքսֆամ կազմակերպության հետ՝ հաստատելով համագործակցության լայն շրջանակ Մարդու իրավունքների պաշտպանի մարզային գրասենյակների և Օքսֆամի կողմից Վայոց Ձորի, Սյունիքի, Շիրակի և Տավուշի մարզերում հիմնված քաղաքացիական կենտրրոնների (ՔԿ) միջև: 6 տարի ժամկետով կնքված հուշագրի շրջանակներում կողմերը իրականացնելու են մարդու իրավունքների՝ մասնավորապես քաղաքական, քաղաքացիական, տնտեսական և սոցիալական իրավունքների ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ համատեղ ծրագրերի մշակում, խնդիրների լուծմանն ուղղած մարտավարության մշակում, օրենսդրության մեջ առկա բացերի շտկմանն ուղղված առաջարկների ներկայացում, ինչպես նաև՝ հասարակության իրազեկում տվյալ խնդիրների վերաբերյալ:

Մեկ այլ կազմակերպության՝ Թուֆենկյան հիմնադրամի կանանց աջակցման կենտրոնի հետ ակտիվ համագործակցության արդյունքում, աջակցություն է տրամադրվում ընտանեկան բռնության զոհ հանդիսացող կանանց այն դեպքերում, երբ նրանց խնդրի լուծումը դուրս է Պաշտպանի իրավասություններից, ինչպես նաև հիմնադրամի հետ համատեղ միջոցներ են ձեռնարկվում տարբեր համակարգային խնդիրների լուծման համար:

2012թ. հունիսին Մարդու իրավունքների պաշտպանը և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչը ստորագրել են փոխհամագործակցության հուշագիր: Հուշագրի շրջանակներում գրասենյակները սկիզբ են դրել համագործակցությանը՝ Հայաստանում փախստականների իրավունքների պաշտպանությանը վերաբերող մի շարք խնդիրների լուծման ուղղությամբ: ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի աջակցությամբ 2012թ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը գործարկել է ծրագիր՝ ուղղված մարդու իրավունքների և ազատությունների ոլորտում փախստականների և ապաստան

փնտրողների իրավական իրազեկման մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև իրենց իրավունքների պաշտպանության մեթոդների իրականացմանը:

Շվեյցարիայի դեսպանատան հետ համագործակցության արդյունքում իրականացվել է ընտանեկան բռնության վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված ծրագիր Լոռու, Շիրակի մարզերում, ինչպես նաև Երևանում: Ծրագրի սկզբում և վերջում իրականացված սոցհարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ 6 ամսվա ընթացքում ավելացել են Պաշտպանին ուղղված դիմում-բողոքները, բարձրացվել է նման հարաբերություններում ոստիկանության դերի վերաբերյալ իրազեկումը:

2012թ. Մարդու իրավունքների պաշտպանը և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) հայաստանյան առաքելության տնօրենը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակներում նախատեսվում է ԱՄՆ ՄԶԳ-ի տեխնիկական աջակցությունը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին և մարզային ներկայացուցչություններին, ինչպես նաև աշխատակազմի ինստիտուցիոնալ ներուժի և կարողությունների հզորացմանը միտված ծրագրերի իրականացում:

2012թ. հոկտեմբերին Մարդու իրավունքների պաշտպանը և ՄԱԿ-ի մշտական համակարգող/ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչը ստորագրել են փոխհամագործակցության հուշագիր, որի արդյունքում առավել ամրապնդվել է երկու ինստիտուտների միջև համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Հուշագրի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմը անհրաժեշտության դեպքում Հայաստանում ՄԱԿ–ի գործակալություններին կտրամադրի փորձագիտական խորհրդատվություն և փորձաքննություն մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների վերաբերյալ, ինչպես նաև կօժանդակի ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակին՝ ՄԱԿ-ի ծրագրերում ներգրավել նաև մարդու իրավունքների հիմնախնդիրները և մշակել մարդու իրավունքների ընդհանուր ռազմավարություն: Համաձայն հուշագրի՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակն իր հերթին տեղեկատվություն կտրամադրի Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին՝ համատեղ առաջնահերթ խնդիրներն ու համագործակցության ոլորտները հստակեցնելու նպատակով:

<u>Միջազգային համագործակցություն</u>

2012թ. Պաշտպանի աշխատակազմի և գործընկեր միջազգային կազմակերպությունների՝ Եվրոպական միության, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Եվրոպայի խորհրդի, «Քաուսթերփարթ ինթերնեյշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության, ՄԱԿ-ի, և այլ երկրների օմբուդսմենների գրասենյակների կողմից իրագործվել են մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի կարողությունների հզորացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

Մասնավորապես, 2012 թ. մեկնարկել է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Ընտրությունների ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների հզորացում» ծրագիրը: Ծրագրի գործարկման արդյունքում հանրապետության 6 մարզկենտրոններում, մասնավորապես՝ Վանաձորում, Գավառում, Իջևանում, Գյումրիում, Եղեգնաձորում, Կապանում հիմնվել են Պաշտպանի

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

աշխատակազմի ներկայացուցչություններ և գործարկվել է ավելի ընդլայնված և արդյունավետ արագ արձագանքում: Մարզային գրասենյակների հիմնադրմամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը առավել հասանելի դարձավ մարզերի բնակիչների համար և ավելի արդյունավետորեն սկսեց աջակցել մարդու իրավունքների պաշտպանության խթանմանը:

Հայաստանում Շվեյցարիայի համադաշնության դեսպանատան աջակցությամբ 2012թ մեկնարկել է «Ընտանեկան բռնության զոհերի իրավագիտակցության բարձրացում և մատչելի արդարադատություն» ծրագիրը, որի նպատակն է վերականգնել Հայաստանում ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց և երեխաների իրավունքները, ինչպես նաև իրազեկել կանանց և երեխաներին ընտանեկան բռնության վերաբերյալ իրենց իրավունքների պաշտպանության հնարավորությունների, այդ թվում՝ ոստիկանության, դատախազության ու այլ պետական մարմինների պարտականությունների մասին: Վեց ամիս շարունակվող այս ծրագիրն իրականացվել է Երևանում ու մարզերում և ներառել ընտանեկան բռնությունից տուժած բազմաթիվ շահառուների:

Հաշվետու ժամանակաշրջանում Գերմանիայի դաշնային հանրապետության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ Պաշտպանի աշխատակազմը գործարկել է «Ազատազրկման վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի զոհերին իրավական օգնության տրամադրում» ծրագիրը, որն իր մեջ ներառել է շրջիկ իրավաբանների ներգրավում, որոնք իրավական խորհրդատվություն էին տրամադրում ազատազրկման վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի զոհ դարձած անձանց:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի աջակցությամբ 2012թ. հուլիսի 1-ից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մեկնարկել է ծրագիր՝ ուղղված մարդու իրավունքների և ազատությունների ոլորտում փախստականների և ապաստան փնտրողների իրավական իրազեկման մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև իրենց իրավունքների պաշտպանության մեթոդների իրականացմանը:

2012թ. դեկտեմբերին Հայաստանում Բրիտանական դեսպանատան հետ համագործակցության արդյունքում նախնական հաստատվել են երկու ծրագրեր՝ ուղղված Խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի և Խոշտանգումների կանխարգելման խորհրդի գործունեության խթանմանը, ինչպես նաև՝ երիտասարդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ քաղաքական և քաղաքացիական կյանքին մասնակցության զարգացմանը:

Ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2012թ շարունակվել է ակտիվ համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի/ ՄԱՄՀ/ միջև: ՄԱՄՀ-ի աջակցությամբ Պաշտպանի աշխատակազմի երեխաների իրավապաշտպանը մասնակցել է ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեի 2012թ. հոկտեմբերի 8-12-ը տեղի ունեցած մինչնստաշրջանային աշխատանքային խմբի հանդիպմանը: ՄԱՄՀ-ի հետ համագործակցությամբ 2012թ. մշակվել է նաև երեխաների իրավունքների խախտման դեպքերի մասին Պաշտպանի աշխատակազմին առավել արդյունավետ տեղեկացնելու մեխանիզմի ստեղծումը, ինչպես նաև «Հայաստանում երեխաների իրավունքների իրացման խթանում. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հզորացում» ծրագիրը Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարություն ներկայացնելու համար:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Բացի այդ, ՄԱՄՀ-ն աջակցել է Պաշտպանի աշխատակազմին ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեի ներկայացվող զեկույցի անգլերեն թարգմանության հարցում. երկու գրասենյակների կողմից տարվա ընթացքում կազմակերպել են համատեղ միջոցառումներ, ինչպիսիք են Երեխաների միջազգային օրը և այլ հանդիպումներ:

Եվրոպական միության խորհրդատվական խումբն /ԵՄԽԽ/ իր ծրագրի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմին ներկայացրել է առաջարկություններ և քաղաքականության ուղենիշներ, մասնավորապես, քրեակատարողական հիմնարկներում խոշտանգումների կանխարգելման, դիմում-բողոքների քննարկման գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև ԵՄ-Հայաստան Մարդու իրավունքների երկխոսության և ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների հետ համագործակցության ոլորտում: Բացի այդ, ԵՄԽԽ-ն ակտիվ ներդրում է ունեցել Պաշտպանի աշխատակազմի կողմից պատրաստվող “Խտրականության դեմ” օրինագծի մշակման հարցում:

2012թ. “Քաունթերփարթ ինթերնեյշնլը” (այսուհետ՝ ՔԻ) շարունակել է իր հետևողական աջակցությունը Պաշտպանի աշխատակազմին, որով, հատկապես, իրականացվել է 2012թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմի 116 թեժ գծի և արագ արձագանքման խմբերի աշխատանքների մասին զանգվածային իրազեկումը, ինչպես նաև ՔԻ-ը տրամադրել է առաջարկություններ աշխատակազմի իրավական կարգավիճակի, ռազմավարական և տարեկան աշխատանքային պլանավորման վերաբերյալ:

2012թ. առավելապես կարևորվել է Պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների միջև համագործակցության խթանմամբ: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմը հատուկ զեկույցներ է ներկայացրել ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեին՝ ՀՀ-ում Խոշտանգումների դեմ կոնվենցիայի իմպլեմենտացիայի վերաբերյալ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին՝ ՀՀ-ի կողմից ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների Միջազգային դաշնագրի իրականացման վերաբերյալ, ինչպես նաև ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեին՝ վերջինիս, Հայաստանի մասով 2012թ հոկտեմբերի 8-12-ը տեղի ունեցած մինչնստաշրջանային աշխատանքային խմբի հանդիպման համար՝ ՀՀ-ի կողմից Երեխաների իրավունքների կոնվենցիայի իրականացման վերաբերյալ: Ներկայացված բոլոր զեկույցները հասանելի են աշխատակազմի պաշտոնական կայքէջում:

<u>Միջազգային հանդիպումներ</u>

2012թ. Պաշտպանը և իր աշխատակազմը մասնակցել են մի շարք կոնֆերանսների, վերապատրաստման դասընթացների և այլ միջազգային հանդիպումների, որոնց ընթացքում ձեռք են բերվել համաձայնություններ՝ փորձի փոխանակման և միջազգային իրավապաշտպան կառույցներում Պաշտպանի դերի բարձրացման վերաբերյալ: Մասնավորապես, 2012թ. Պաշտպանը մասնակցել է «Խոսքի ազատությունը և Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիան» աշխատանքային հանդիպմանը Հաագայում, որի ընթացքում քննարկվել են Մարդու իրավունքների մասին Եվրոպական կոնվենցիայի 5 արձանագրությունները, մասնավորապես՝ խոսքի ազատության իրավունքը:

2012թ. ապրիլին Պաշտպանը մասնակցել է Եվրոպայի Օմբուդսմենների ինստիտուտի խորհրդի նիստին Ֆլորենցիայում: Նիստի շրջանակներում Պաշտպանը

Եվրոպայի Օմբուդսմենների ինստիտուտի խորհրդի անդամների հետ քննարկել է քաղաքացիական իրավունքների ոլորտում ուսումնասիրությունների և գիտական հետազոտությունների արդյունքները, տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային Օմբուդսմենների ինստիտուտներին գիտական աջակցության տրամադրումը, փորձի փոխանակման ապահովումը՝ ազգային, Եվրոպական և միջազգային մակարդակով: Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև համագործակցությունը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի, ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական օմբուդսմենի եւ այլ միջազգային կազմակերպությունների հետ:

Բացի այդ, Ֆրանսիայի մարդու իրավունքների պաշտպանի հրավերով Պաշտպանը 2012թ. հունիսին մասնակցել է Փարիզում կայացած «Օմբուդսմենի դերի բարձրացումը» խորագրով Միջերկրածովյան Օմբուդսմենների Ընկերակցության (ՄՕԸ) 6-րդ աշխատանքային հանդիպմանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են Օմբուդսմենի լիազորությունները, Օմբուդսմենների գործառույթները խոցելի խմբերի պաշտպանության ոլորտում, մարդու իրավունքների կրթության ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչպես նաև ՄՕԸ անդամների փոխհամագործակցության մեխանիզմները և կապերի ամրապնդումը:

2012թ. սեպտեմբերին Պաշտպանը հանդիպել է Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել է Հայաստանում մարդու իրավունքների ընդհանուր վիճակը, արձանագրված դրական զարգացումներն ու առկա մարտահրավերները, Պաշտպանի աշխատակազմի հիմնական ձեռքբերումները, խոսվել է Ազգային Կանխարգելման Մեխանիզմին քաղաքական աջակցություն ցուցաբերելու մասին: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը պատրաստակամություն է հայտնել համագործակցել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ՝ ինստիտուտի կարողությունների զարգացման և մարդու իրավունքների համակարգային խնդիրների լուծման շրջանակներում մարդու իրավունքների ոլորտում տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու և ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների հետ համագործակցելու հարցում:

Բոլիվիայի Լրագրողների Հիմնադրամի հրավերով 2012թ. հոկտեմբերին Պաշտպանը մասնակցել է Բուհական ուսումնական ծրագրերում լրագրության զարգացման վերաբերյալ մասնագիտական քննարկմանը: Քննարկումը եղել է ԶԼՄ-ների մասին օրենքի, լրագրողական էթիկայի, մուլտիմեդիա/օնլայն լրագրության, լրագրողների համար կարևոր արդի սոցիալական խնդիրների (գենդերային, ռասայական, ազգային, կրոնական և այլն) լուսաբանման համակարգի ներդրման վերաբերյալ:

2012թ. փորձի փոխանակման և վերապատրաստման նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են Շվեյցարիայի Ազգային Կանխարգելման Մեխանիզմի (ԱԿՄ) կողմից կազմակերպած Եվրոպական ԱԿՄ ծրագրին, Ֆրանսիայի Օմբուդսմենի հրավերով Փարիզում կայացած «Օմբուդսմենների դերը լավ կառավարման և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդման հարցում» խորագրով աշխատանքային հանդիպմանը, Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի կողմից Ստրասբուրգում կազմակերպած «Հակախտրականություն. վերջին միտումներն ու մարտահրավերները» աշխատանքային հանդիպմանը, Բելգրադում կայացած «ԱԿՄ 9-րդ աշխատաժողով»-ին՝ Եվրոպայի Խորհրդի հրավերով: Պաշտպանի աշխատակազմի որոշ աշխատակիցներ մասնակցել են

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

սեպտեմբերին Լեհաստանում կայացած «ԵՄ Արևելյան Գործընկերության Երկրների Օմբուդսմենների համագործակցությունը» հանդիպմանը՝ Լեհաստանի Օմբուդսմենի հրավերով, Վիեննայում ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) և ԵԱՀԿ Իռլանդիայի նախագահության կողմից կազմակերպած ֆորումին՝ հավաքների ազատության վերաբերյալ, ինչպես նաև 2012թ. դեկտեմբերին Պաշտպանի ԱԿՄ խորհրդի անդամներից մի քանիսը, Եվրոմիության ԹԱԷՔՍ ծրագրի շրջանակներում ճանաչողական այց են կատարել Մադրիդի առողջապահական և սոցիալական խնամքի հաստատություններ:

<u>Պաշտպանի գործունեության խոչընդոտները</u>

Պաշտպանի աշխատակազմում կա նյութական և ֆինանսական միջոցների սղություն: 2014 թվականին Պաշտպանի և իր աշխատակազմի գործունեությունը նվազագույնը նույն ծավալներով իրականացնելու համար անհրաժեշտ է 65 միլիոն դրամի բյուջետային հավելում: 2012 թվականին այդ գումարի պակասորդը լրացվել է միջազգային գործընկերների կողմից:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ

Պաշտպանի աշխատակազմ դիմած անձանց քանակը	7395
Պաշտպանի աշխատակազմին ներկայացված գրավոր դիմումներ	2420
Պաշտպանի աշխատակազմի կողմից տրամադրված բանավոր խորհրդատվություններ	2375
Դրական լուծում ստացած դիմում-բողոքներ (ըստ անձանց)	557
ՀՀ դատարանների դեմ ուղղված դիմում-բողոքներ	211

Ըստ պետական մարմինների՝ վարույթ ընդունած գործերի տասնյակ /ընդհանուր թիվը՝ 999/

ՀՀ ոստիկանություն	184
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	181
ՀՀ քաղաքապետարաններ	173
ՀՀ արդարադատության նախարարություն	130
ՀՀ պաշտպանության նախարարություն	103
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն	58
ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի կոմիտե	36
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	16
Այլ մարմիններ	118

01.01.2012-31.12.2012 ժամանակահատվածում գրավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

Երևան	1157
Լոռի	282
Շիրակ	272
Գեղարքունիք	175

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Կոտայք	117
Սյունիք	85
Արարատ	75
Տավուշ	73
Վայոց ձոր	51
Արմավիր	45
Արագածոտն	37
Անհասցե	51
Ընդամենը	*2420*

01.01.2012-31.12.2012 ժամանակահատվածում խոցելի խմբերից ստացված բողոքների վիճակագրություն

Հաշմանդամություն ունեցող անձինք	152
Ազատազրկվածներ	139
Տարեց մարդիկ	138
Սոցիալապես անապահով խավեր	78
Երեխաներ	45
Փախստականներ	32
Զինծառայողներ	27
Անօթևաններ	23
Կանայք	10
Բռնադատվածներ	8
Ազգային փոքրամասնություններ	5
Սեռական փոքրամասնություններ	2
Կրոնական փոքրամասնություններ	1
Ընդամենը	*660*

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ պաշտպանության նախարարությունը հսկողություն է իրականացնում պարտադիր զինվորական ծառայության զորակոչի և վարժական հավաքների անցկացման նկատմամբ, ապահովում է զինված ուժերում պաշտպանության բնագավառի օրենսդրության պահանջների կատարումը, իրականացնում է ընդհանուր կամ մասնակի զորահավաքների անցկացումը, իր իրավասության սահմաններում ապահովում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանությունը և այլն:

2012 թվականին ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2012 թվականի ընթացքում զինծառայողների կողմից կանոնագրքային կանոնների և կանոնադրական փոխհարաբերությունների խախտման վերաբերյալ հայտնաբերվել են ընդհանուր թվով շուրջ 400 դեպքեր:
- Առողջական խնդիրներով զինվորական ծառայության զորակոչված զինծառայողները առհասարակ չեն տեղեկացվել իրենց զինվորական ծառայության հակացուցված ձևերի մասին:
- Նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների որոշումների վերաբերյալ ստացվել է շուրջ 1000 դիմում-բողոք, որը վկայում է այն մասին, որ անձանց զորակոչելիս՝ մանրակրկիտ բուժհետազոտության արդյունավետ կազմակերպումը բժշկական հանձնաժողովներին չի հաջողվել:
- Որոշ դեպքերում առողջական խնդիրներով զինվորական ծառայության զորակոչված զինծառայողները զորամասերի հրամանատարության կողմից իրենց առողջական վիճակի հետ անհամատեղելի հրամաններ են ստացել և կատարել:
- Զորամասերում գրանցվել են ոչ պատշաճ բուժօգնության տրամադրման դեպքեր:
- ՀՀ զինված ուժերի որոշ սպաներ ցանկություն են հայտնել զինվորական ծառայության անցնելու մասին պայմանագիրը վաղաժամկետ լուծել, սակայն բարձրագույն հրամանատարական կազմը անհիմն ձգձգել է զեկուցագրի ստորագրումը:
- Չլուծված է մնացել շատ զինծառայողների բնակարանային պայմանների ապահովման խնդիրը:
- Գրանցվել են զինծառայողների կողմից քաղաքացիների հանդեպ անհարգալից վերաբերմունքի դրսևորման մի շարք դեպքեր:
- Գրանցվել են բազմաթիվ դեպքեր, երբ Նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների որոշումները սահմանված կարգով չեն տրամադրվել անձանց:
- Նախարարության ռազմական ոստիկանության աշխատակիցները, իրենց

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

գործառույթներն իրականացնելիս, առանձին դեպքերում թույլ են տվել իրենց պաշտոնական դիրքի չարաշահումներ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- 2012 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքը:
- Ըստ պաշտոնական տվյալների՝ ընթացիկ տարում, նախորդ տարիների համեմատությամբ, նվազել են զինված ուժերում տեղի ունեցած մահվան դեպքերը:
- Զինծառայողների կողմից կանոնագրքային կանոնների և կանոնադրական փոխհարաբերությունների խախտման դեպքերը կանխարգելելու նպատակով իրականացվել են պրոֆիլակտիկ և կանխարգելիչ բնույթի միջոցառումներ:
- 2012 թվականին թվով 157 զինծառայողներ ապահովվել են բնակարաններով, իսկ ծառայության վայրում ծառայողական բնակարանների բացակայության դեպքում զինծառայողների կողմից վարձակալված բնակարանների դիմաց Նախարարությունը տրամադրել է դրամական փոխհատուցում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախարարության կողմից հայտնած տվյալների համաձայն՝ 2012 թվականի ընթացքում զինծառայողների կողմից կանոնագրքային կանոնների և կանոնադրական փոխհարաբերությունների խախտման վերաբերյալ հայտնաբերվել են ընդհանուր թվով շուրջ 400 դեպքեր: Նախարարությունից հայտնել են, որ իրավապահ մարմինների հետ համատեղ իրականացվում են պրոֆիլակտիկ և կանխարգելիչ բնույթի միջոցառումներ՝ նմանատիպ խախտումները հետագայում կանխելու նպատակով, մասնավորապես, զորամասերում անանուն սոցհարցումների անցկացման, հասարակական կազմակերպությունների կողմից կամ ԶԼՄ-ների միջոցով հրապարակված նյութերի առնչությամբ անցկացվող ուսումնասիրությունների և ծառայողական քննությունների կատարման ու այլ միջոցներով: Ողջունելի է նաև այն, որ Նախարարության կողմից նման երևույթները բացառելու նպատակով անցկացվում են մարդու իրավունքների վերաբերյալ տարբեր դասընթացներ և դասախոսություններ: Թեև կանոնագրքային կանոնների և կանոնադրական փոխհարաբերությունների խախտման դեպքերի կապակցությամբ իրականացվել են ծառայողական քննություններ և մեղավորները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, և Նախարարության կողմից իրականացվել են համալիր միջոցառումներ այս խնդրի կանխարգելման նպատակով, այնուամենայնիվ, նշյալ դեպքերի քանակը վկայում է այն մասին, որ շարունակում է թերի մնալ զինծառայողների մոտ զինվորական կարգապահության պահանջների անշեղ կատարման պարտքի, անձնական արժանապատվության, զորային ընկերականության և զինվորական պարտքի ու պատվի գիտակցման կայացումը: Նման մթնոլորտը միայն խթանում է զինվորական կարգապահության կանոնների խախտմանը: 2012 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքը հստակ սահմանել է, որ Զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման համար պատասխանատու են բոլոր խմբերի հրամանատարները (պետերը), մյուս սպայական ու ենթասպայական անձնակազմը, հետևաբար, կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդումը զորամասերի հրամանատարական անձնակազմի ուղղակի պարտականությունն է:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Առողջական խնդիրներով զինվորական ծառայության զորակոչված զինծառայողների իրավունքների հետ կապված հարցերը շարունակում են մնալ չլուծված: Այսպես, համաձայն 26.02.2010 թվականի Նախարարության 175-10 հրամանի՝ եթե շարքային կազմի պարտադիր զինծառայողն անհատական կարգով ճանաչվում է պիտանի ոչ շարային ծառայությանը կամ պիտանի ծառայությանը՝ սահմանափակումով, ապա ԿՌԲՀ-ի որոշման մեջ նշվում է, թե ծառայության որ ձևերն են տվյալ անձին հակացուցված (օրինակ՝ ֆիզիկական մեծ լարվածություն պահանջող աշխատանքներ, ցրտի կամ խոնավության երկարատև ազդեցություն, գիշերային հերթապահություն, և այլն): Այսինքն, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ԿՌԲՀ-ի կողմից հետազոտված ոչ շարային ծառայության ենթակա կամ շարային ծառայության՝ սահմանափակումներով ենթակա զինծառայողը, ստանալով ԿՌԲՀ-ի համապատասխան որոշումը, տեղեկանում է, թե ծառայության որ ձևերն են տվյալ անձին հակացուցված: Զորակոչիկները նախքան զինվորական ծառայության անցնելը ԿԲՀ-ի կողմից ենթարկվում են փորձաքննության: Ավելին, ԿԲՀ-ն զորակոչիկների առողջական վիճակի մասին գրավոր եզրակացություն է տալիս, եթե նրանք պիտանի են ճանաչվել կամ պիտանի են սահմանափակումով կամ պիտանի են ոչ շարային ծառայության: ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք: Մեր կողմից առաջարկություն էր արվել, որ նախքան զինվորական ծառայության փաստացի անցնելը առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկներին հնարավորություն ընձեռվի ծանոթանալու իրենց վերաբերող որոշմանը և այդ որոշման մեջ հստակ նշվի, թե ծառայության, որ ձևերն են վերջիններիս հակացուցված: Նախարարության կողմից այս առաջարկության վերաբերյալ միջոցառումներ դեռևս չեն ձեռնարկվել:

2012 թվականին գրանցվել են Նախարարության ռազմաբժշկական հանձնաժողովի որոշումների վերաբերյալ շուրջ 1000 դիմում-բողոքներ: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից կրկնակի փորձաքննության արդյունքում 42 դիմում-բողոքների վերաբերյալ որոշումները փոխվել են: Բողոքների նման քանակը խիստ մտահոգիչ է, քանի որ դա վկայում է բժշկական հանձնաժողովների ոչ արդյունավետության և/կամ հանրության վստահության պակասի մասին: Նախարարության ռազմաբժշկական հանձնաժողովները իրենց հետազոտությունները չեն իրականացնում հանրության համար բավարար թափանցիկությամբ: Ոլորտի մասնագետների կողմից հայտնած տեղեկությունների համաձայն՝ բացակայում են այս թերությունները վերհանելու կամ բացառելու հստակ մեխանիզմներ:

2012 թվականի ընթացքում առողջական խնդիրների պատճառով զինվորական ծառայության ընթացքում մահացել է 6 զինծառայող, որոնց մեջ եղել են ինչպես պիտանի ոչ շարային ծառայության համար, այնպես էլ պիտանի շարային ծառայության համար սահմանափակումներով զինծառայողներ: Նախարարության հավաստմամբ, այդպիսի զինծառայողների նկատմամբ առանձին հաշվառում է իրականացվում և նրանց նկատմամբ խիստ վերահսկողություն է սահմանված հրամանատարության կողմից: Նույնիսկ ֆիզիկական պատրաստության պարապմունքների ժամանակ նրանց գործողությունները հսկվում են բժիշկների կողմից: Սակայն Նախարարությունից հայտնել են նաև, որ զորամասի մարտունակության պահպանման անհրաժեշտությունից ելնելով, երբեմն լինում են դեպքեր, երբ հրամանատարությունը ստիպված է լինում ընդգրկել պիտանի ոչ շարային ծառայության համար կամ պիտանի ծառայությանը սահմանափակումով

ճանաչված զինծառայողներին՝ որոշակի խնդիրներ լուծելու համար (սահմանելով անհրաժեշտ հսկողություն նրանց առողջական վիճակի նկատմամբ): Գիտակցելով զորամասի մարտունակության կարևորությունը Հայաստանի Հանրապետության անվտանգության համար՝ այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրության 43 և 44-րդ հոդվածները սահմանում են այն դեպքերը և հիմքերը, երբ մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներն ու ազատությունները կարող են ժամանակավորապես սահմանափակվել, այդ թվում նաև՝ պետական անվտանգության, ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Չնայած նշված հոդվածների կարևորագույն հիմքերին՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված են որոշ իրավունքներ, որոնք առհասարակ սահմանափակման ենթակա չեն: Վերոնշյալի օրինակ է հանդիսանում 17-րդ հոդվածը, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Պիտանի ոչ շարային ծառայության համար կամ պիտանի ծառայությանը սահմանափակումով ճանաչված զինծառայողներին պատահական չէ, որ տրվում է նման կարգավիճակ, քանի որ այն հանդիսանում է վերջիններիս առողջական խնդիրների հետևանքը: Ուստի, այդ անձանց նույնիսկ պետության անվտանգության կամ, ինչպես նշվել է Նախարարության կողմից, զորամասի մարտունակության պահպանման անհրաժեշտությունից ելնելով ներգրավվելը որոշակի խնդիրներ լուծելու համար, անտեսելով, որ վերջիններիս առողջությանը հակացուցված է այդ գործողությունների կատարումը, կարող է որակվել որպես դաժան և/կամ անմարդկային վերաբերմունք իրենց հանդեպ, որն, անկախ իրավիճակի կարևորությունից կամ հիմնավորումից, ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրությանը և անընդունելի է ժողովրդավարական հասարակությունում: Միաժամանակ, առողջական խնդիրների պատճառով զինվորական ծառայության ընթացքում 6 զինծառայողների մահվան փաստերը վկայում են, որ նշված անձանց հանդեպ չի իրականացվում պատշաճ բժշկական հսկողություն:

Մտահոգիչ է, որ Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2012 թվականին ՀՀ ԶՈՒ զորամասերում ոչ պատշաճ բուժօգնության տրամադրման դեպքեր չեն արձանագրվել: Սակայն, հակառակ նշվածի, առողջական խնդիրների պատճառով զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների 6 մահվան դեպքերի առիթով կատարված ծառայողական քննությունների արդյունքներով կարգապահական տույժերի են ենթարկվել մի շարք բժիշկ-մասնագետներ: Ոլորտի մասնագետների կարծիքով դա վկայում է նրա մասին, որ, այնուամենայնիվ, գրանցվել են բժիշկների կողմից պաշտոնական լիազորությունների ոչ պատշաճ իրականացման դեպքեր:

2012 թվականին կրկին անգամ գրանցվել են դեպքեր, երբ ՀՀ զինված ուժերի որոշ սպաներ ցանկություն են հայտնել զինվորական ծառայության անցնելու մասին պայմանագիրը վաղաժամկետ լուծել, սակայն բարձրագույն հրամանատարական կազմը անհիմն ձգձգել է այդ զեկուցագրերի ստորագրումը: Նախարարությունը դա պայմանավորում է արձակման դիմելու հիմքերի ու պատճառների ուսումնասիրությամբ, հնարավորության դեպքում դրանք լուծելու համար միջոցների ձեռնարկմամբ: Նախարարությունից հայտնել են նաև, որ որոշ դեպքերում ձգձգումները կարող են պայմանավորված լինել պայմանագիրը վաղաժամկետ լուծելու ցանկություն հայտնած զինծառայողների զբաղեցրած պաշտոնների կադրերի սղությամբ: Ողջունելի է Նախարարության այն մոտեցումը, որի արդյունքում խորը և մանրմասնորեն ուսումնասիրվում են զինծառայողների մտահոգությունները և/կամ բողոքները, սակայն

նշվածը հնարավոր է նաև իրագործել սեղմ և ողջամիտ ժամկետներում, այլ ոչ ամիսների ընթացքում: Միաժամանակ, հաշվի առնելով, որ սպաների համար զինվորական ծառայությունը ընտրված աշխատանքի ձև է, ուստի անընդունելի է ամիսներով պայմանագրի վաղաժամկետ լուծարելու անձի օրինական պահանջը չբավարարելը, քանի որ նման իրավիճակը, ըստ էության, հավասարեցվում է հարկադիր աշխատանքի, որը ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային չափանիշներով արգելված է:

Դեռևս լուծում չի ստացել զինծառայողների բնակարանային պայմանների ապահովման խնդիրը: Ողջունելի է, որ Նախարարությունը շատ դեպքերում տրամադրում է վարձակալած բնակարանների դիմաց դրամական փոխհատուցման թույլտվություն: Սակայն, այնուամենայնիվ, զինծառայողների բնակարանային հաշվառում իրականացնելը և դրանցով ապահովելու գործընթացը դեռևս հստակ կանոնակարգված չէ: Մտահոգիչ են նաև սահմանամերձ զորամասերում ծառայություն անցնող սպաների բնակարանային պայմանների բարելավման խնդիրները:

Ուսումնասիրվել են բողոքներ, որոնք վերաբերել են զինծառայողների կողմից քաղաքացիների հանդեպ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու դեպքերին և որոնք հիմնականում դրսևորվել են վիրավորական արտահայտություններ և սպառնալիքներ կատարելու միջոցով: Ի պատասխան մեր հարցմանը, Նախարարությունից հայտնել են, որ նման դեպքերի կապակցությամբ, իրավախախտողների նկատմամբ ձեռնարկվել են զինվորական կանոնագրքերով նախատեսված համապատասխան միջոցներ, հարուցվել են քրեական գործեր և վերջիններս ենթարկվել են ինչպես կարգապահական, այնպես էլ՝ քրեական պատասխանատվության: Գտնում ենք, որ հարկավոր է հետամուտ լինել զինծառայողների կողմից քաղաքացիների հանդեպ անհարգալից վերաբերմունքի դրսևորումների բացառման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկմանը, քանի որ նման դեպքերը ոչ միայն հանդիսանում են ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, այլև լուրջ վնաս են հասցնում ամբողջ համակարգի հանդեպ հասարակության վստահությանը և հեղինակությանը: Անհրաժեշտ է նաև ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումների ձեռնարկումը, որոնք պետք է կրեն շարունակական բնույթ:

Գրանցվել են դեպքեր, երբ զորակոչիկի կողմից պահանջած բժշկական կամ ռազմաբժշկական հանձնաժողովի կայացրած որոշումների տրամադրումը ձգձգվել է կամ առհասարակ չի տրամադրվել շահագրգիռ անձանց: Նման վարչարարության արդյունքում քաղաքացին, իսկզբանե, հնարավորություն չի ունենում դիմելու վերադաս մարմիններին կամ դատարան՝ նշված որոշումը բողոքարկելու համար: Արդյունքում չի պահպանվում Սահմանադրությամբ ամրագրված՝ անձանց արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը: Բացի այդ, նշված խնդրի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ բժշկական հանձնաժողովի որոշումները տրամադրվում են միայն զորակոչիկի կողմից պահանջվելու դեպքում: Բժշկական հանձնաժողովը, հանդիսանալով վարչական մարմին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր վարչական ակտի ընդունումից հետո եռօրյա ժամկետում պետք է այն հանձնի վարույթի մասնակիցներին, անկախ նրանից թե մասնակիցները պահանջել են վարչական ակտը, թե ոչ: Ուստի բժշկական հանձնաժողովների կողմից որոշումների տրամադրման վերաբերյալ նման պրակտիկան հակասում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և միայն նպաստում է իրենց որոշումների հանդեպ հասարակության մեջ անվստահության մթնոլորտի ամրապնդմանը:

Առանձին դեպքերում Նախարարության ռազմական ոստիկանության աշխատակիցները իրենց գործառույթներն իրականացնելիս թույլ են տվել իրենց

պաշտոնական դիրքի չարաշահումներ: Ավելին, Նախարարության ՌՈ աշխատակիցների կողմից իրականացված հետաքննչական գործողությունների վերաբերյալ ուսումնասիրվել են բողոքներ, մասնավորապես, վերջիններիս կողմից անձանց հանդեպ հոգեկան և ֆիզիկական ճնշումների գործադրման մասին՝ տեղեկություններ ստանալու նպատակով: 2012 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից նախաձեռնած ոլորտի իրավապաշտպանների և մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում նույնպես բարձրացվել է այս խնդիրը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Խիստ միջոցներ ձեռնարկել զորամասերում բոլորի կողմից անշեղորեն կարգապահության և կանոնադրական կարգի պահպանման նկատմամբ, ինչպես նաև, թերություններ և/կամ խախտումներ հայտնաբերելու դեպքում, պատասխանատվության ենթարկել համապատասխան զորամասերի հրամանատարներին՝ ի կատարումն «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի պահանջների:
- Ձեռնարկել միջոցներ՝ պիտանի ոչ շարային ծառայության և պիտանի շարային ծառայության համար սահմանափակումներով զինծառայողների՝ առողջությանը հակացուցված ծառայության ձևերի մասին նախքան զինվորական ծառայության անցնելը պատշաճ տեղեկացնելու համար և նախաձեռնությամբ հանդես գալ վերոգրյալը օրենսդրությամբ ամրագրելու համար:
- Մշակել հստակ մեխանիզմներ բժշկական հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման և թերացումների բացառման նպատակով:
- Բացառել զորամասերի հրամանատարության կողմից՝ առողջական խնդիրներով զինվորական ծառայության զորակոչված զինծառայողներին ուղղված՝ իրենց առողջական վիճակի հետ անհամատեղելի հրամաններ արձակելու պրակտիկան:
- Հետամուտ լինել ՀՀ ԶՈՒ զորամասերի բժիշկ-սպաների բժշկական պատշաճ հսկողություն իրականացնելու ուղղությամբ և թերացումների դեպքում կիրառել պատասխանատվության խստագույն միջոցներ:
- Միջոցներ ձեռնարկել՝ սպաների կողմից զինվորական ծառայության անցնելու մասին պայմանագրի վաղաժամկետ լուծման ողջամիտ ժամկետների պահպանման ուղղությամբ:
- Հետամուտ լինել զինծառայողների բնակարանային պայմանների ապահովման խնդրի լուծմանը:
- Իրականացնել քաղաքացիների նկատմամբ զինծառայողների կողմից անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքերը կանխարգելող միջոցառումներ, ձեռնարկել ուսումնադաստիարակչական միջոցառումներ:
- Ձեռնարկել միջոցներ ԿԲՀ-ների կողմից զորակոչիկներին իրենց վերաբերող որոշումների տրամադրման պարտադիր կարգը պահպանելու համար:
- Հետամուտ լինել ՌՈ կողմից տեղի ունեցող չարաշահումների կանխարգելմանը և իրավախախտներին պատասխանատվության ենթարկելուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ արդարադատության նախարարությունը ապահովում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, նոտարական գործունեության, Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացները: Արդարադատության նախարարությունը ապահովում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի հարկադիր կատարումը, դատական փորձաքննությունների, վարչական վարույթի ապահովումը և այլն: Նախարարությունը իրականացնում է նաև վերահսկողություն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, քրեակատարողական ծառայության գործունեության օրինականության նկատմամբ, ինչպես նաև ապահովում է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու օրենքով նախատեսված լիազորությունը:

2012 թվականին Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության ամենամեծ խնդիրը և բացթողումը վերաբերում է արդար դատաքննության իրավունքին և, հատկապես, դատական իշխանության համակարգում առկա անարդարություններին և ապօրինություններին: Բացի նշված հիմնական խնդիրներից տարվա ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված այլ խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դատարաններ

- Խիստ մտահոգիչ է դատական իշխանության համակարգում առկա անարդարությունների և ապօրինությունների բազմաթիվ դեպքերի առկայությունը:
- Բազմաթիվ են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության պարագայում Արդարադատության խորհրդի կողմից կարգապահական վարույթի հարուցման, սակայն այնուհետև դատավորին կարգապահական պատասխանատվության չենթարկելու դեպքերը:
- Մի շարք դեպքեր են արձանագրվել, երբ ՀՀ Վճռաբեկ դատարան բողոքարկված դատական ակտերը դատարանի կողմից, չեն ենթարկվում մանրամասն ուսումնասիրության և, արդյունքում, չեն վերացվում առկա դատական սխալները: Այս ամենի հետևանքով խախտվում են անձանց անկախ և անկողմնակալ դատարանի կողմից քննության իրավունքը: Նման քաղաքականությունը լրջորեն խոչընդոտում է օրենքի միատեսակ կիրառությանը, ճիշտ մեկնաբանությանը և իրավունքի զարգացմանը:

Քրեակատարողական հիմնարկներ (այսուհետ՝ ՔԿՀ)

- Առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ կապված քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) գերբնակեցման վերացման, ժամկետանց դեղորայքների տրամադրման բացառման, ՔԿՀ-ների աշխատակիցների

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

պարտականությունների չարաշահումների և կոռուպցիոն երևույթների վերացման, հանձնուքների ընդունման հետ:

- Խիստ մտահոգիչ է տեսակցությունների տրամադրման և ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակների բացակայության խնդիրը:
- Շարունակվում է չլուծված մնալ հացադուլ հայտարարած կալանավորների կամ դատապարտյալների համար առանձին խցերի, ինչպես նաև՝ տարրական սանիտա-բահիգիենիկ պայմանների բացակայության խնդիրը: Հացադուլավորների իրավունքները և պարտականությունները առհասարակ կարգավորված չեն օրենսդրությամբ:
- Էական խախտումներ են հայտնաբերվել կապված ՔԿՀ-ներում պահվող դատապարտյալներին և կալանավորված անձանց տրվող սննդամթերքի որակի, քանակի հետ: Դատապարտյալները և կալանավորված անձինք իրենց մտահոգությունն էին հայտնել նաև պատրաստվող ճաշերի բազմազանության վերաբերյալ:
- Անհետևանք են մնում ՔԿՀ-ից դուրս բուժզննում և բուժսպասարկում իրականացնելու, ինչպես նաև ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխելու դատապարտյալների դիմումները ՔԿՀ-ի վարչակազմի կողմից, որոնք պայմանավորված են շահադիտական դրդումներով:
- Ստացվել են բազմաթիվ բողոքներ Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ կալանավորված կամ ազատազրկման դատապարտված անձանց անձնագիր ստանալու գործընթացի տևողության և մատչելիության, ինչպես նաև ՔԿՀ-ների վարչակազմերի կողմից վարչարարության ժամկետների խախտման վերաբերյալ:
- Անհապաղ հստակեցման կարիք ունի պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու դրանց չափորոշիչները:

Նոտարական գրասենյակներ և Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն (այսուհետ՝ ՔԿԱԳ)

- Ստացվել են բազմաթիվ բողոքներ առ այն, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող նոտարների կողմից ձևավորվել էր անօրինական պրակտիկա, համաձայն որի՝ փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկությունը վավերացնելու գործընթացի արդյունքում նոտարների մոտ չեն պահվում տվյալ փաստաթղթերի օրինակները: Արդյունքում անձինք ստիպված են եղել կրկին անգամ կատարել համապատասխան վճարումներ:
- ՔԿԱԳ մարմինների կողմից մի շարք դեպքերում քաղաքացիներից ապօրինաբար պարտադիր նոտարական վավերացմամբ լիազորագրեր են պահանջվել, ինչը օրենքի խախտում է հանդիսանում:
- Բազմաթիվ են դեպքերը, երբ նոտարական գրասենյակներում և ՔԿԱԳ գործակալություններում գոյանում են հերթեր և կուտակումներ: Շարունակում են չհստակեցված մնալ նոտարական ծառայությունների դիմաց գանձվող վճարների սակագները, որն էլ իր հերթին նպաստում է կոռուպցիոն դրսևորումներին:

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն (այսուհետ՝ ԴԱՀԿ)

- Մտահոգության տեղիք է տալիս, որ ձևավորված անօրինական պրակտիկայի համաձայն՝ ծառայության կողմից կատարողական գործողությունների իրականացման համար սահմանված երկամսյա ժամկետը չի պահպանվում:
- Բազմաթիվ են դեպքերը, երբ ԴԱՀԿ ապահովող ծառայության աշխատակիցների կողմից ոչ հետևողական աշխատանքների իրականացման արդյունքում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի պահանջները չեն կատարվում, հետախուզման մեջ գտնվող պարտապան ֆիզիկական անձանց հայտնաբերելու ուղղությամբ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվում, դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտերի պահանջները չարամտորեն չեն կատարվում, ինչի հետևանքով համապատասխան մեղավոր անձիք պատասխանատվության չեն ենթարկվում:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- ՀՀ Նախագահի կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը:
- 2012-2016 թվականների ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ռազմավարական ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՆ-ի կողմից մշակվել են մի շարք իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին նախագծեր:
- Նոտարական և ՔԿԱԳ գործակալության ծառայության որակի բարձրացման ուղղությամբ կազմակերպվել են աշխատողների վերապատրաստման դասընթացներ և անցկացվել են որակավորման քննություններ:
- Իրականացվել են ՔԿԱԳ բաժինների էլեկտրոնային կառավարման համակարգի լրամշակման աշխատանքներ, որի արդյունքում քաղաքացիական կացության ակտերի գրանցումները, ակտերի պատճենների ու տեղեկանքների տրամադրումն իրականացվում է էլեկտրոնային տարբերակով:
- 2012 թվականի ընթացքում Նախարարության կողմից պատրաստվել են վահանակներ և քաղաքացիական կացության ակտային գրանցման յուրաքանչյուր տեսակի ընթացակարգի և փաստաթղթերի ցանկի վերաբերյալ ուղեցույցներ (բուկլետներ), որոնք 2013 թվականից տեղադրված կլինեն ՔԿԱԳ բոլոր տարածքային բաժիններում և ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալությունում՝ քաղաքացիների իրազեկվածության ապահովման նպատակով:
- 2012 թվականի հոկտեմբերի 8-ին ՀՀ ԱՆ-ի կողմից մշակվել է «Այլընտրանքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում շարունակվում է չլուծված խնդիր մնալ արդար դատաքննության իրավունքի իրականացումը, և հատկապես դատական իշխանության համակարգում առկա անարդարությունները և ապօրինությունները: Նշված լրջագույն խնդրի լուծման կապակցությամբ 2012-2016 թվականների ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ռազմավարական ծրագրի շրջանակներում Նախարարության կողմից պետք է մշակվեն մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենքների նախագծեր: Պաշտպանի գնահատմամբ այս ծրագիրը նախատեսում է դատական իշխանության բարեփոխումների այն մեխանիզմները, որոնք կարող են լուծել հանրության համար ամենացավոտ՝ արդարադատության բացակայության խնդիրը: Մասնավորապես, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերի և հիմքերի վերաբերյալ բարեփոխումները, դատախազության գործունեության արդյունավետության և մատչելիության բարձրացումը, ինչպես նաև իրավական համակարգի այլ ոլորտների բարելավմանն ուղղված փոփոխությունների իրականացումը իրական հիմք կարող են դառնալ այդ համակարգերի և ոլորտների բարեփոխման համար: Համաձայն ակնկալվող փոփոխությունների՝ կարգապահական վարույթում արդարության երաշխիքների ապահովման նպատակով Արդարադատության խորհուրդը միաժամանակ օժտված չի լինելու հետևյալ երկու լիազորություններով. ա) կարգապահական վարույթի հարուցում և բ) կարգապահական տույժի վերաբերյալ որոշման կայացում: Մեկ մարմնի ձեռքում կարգապահական վարույթի հարուցման և դրա արդյունքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունների կենտրոնացումն էականորեն նվազեցնում է այդ վարույթի օբյեկտիվությունը և արդարությունը: Այսպես, 2012 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի նախաձեռնությամբ դատավորների նկատմամբ հարուցվել է 9 կարգապահական վարույթ, որոնցից 4 կարգապահական վարույթներով ՀՀ արդարադատության նախարարի միջնորդության հիման վրա, 4 դատավորներ ՀՀ արդարադատության խորհրդի կողմից ստացել են տույժեր, 3 կարգապահական վարույթները ՀՀ արդարադատության նախարարի հրամանով կարճվել են, իսկ 2 կարգապահական վարույթներ գտնվում են ընթացքի մեջ: Այնուամենայնիվ, ոլորտի մասնագետները նույնպես այն կարծիքին են, որ միայն այսպիսի գործողությունների իրականացումը չի կարող արդյունավետորեն բարելավել ներկայիս դատական համակարգը: Իսկ կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորների թիվը չի արտացոլում ոլորտում առկա խախտումների իրական քանակը: Հավելենք, որ ՀՀ Նախարարության Կանոնադրության համաձայն վերջինիս խնդիրներից է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու օրենքով նախատեսված լիազորության իրականացման ապահովումը, ինչը ուղղակիորեն ամրագրված է ՀՀ Դատական օրենսգրքի 155-րդ հոդվածում, համաձայն որի՝ արդարադատության նախարարը իրավունք ունի հարուցելու կարգապահական վարույթ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ: Հարկ ենք համարում նշել, որ պատահական չէ, որ ՀՀ Նախագահի « ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը, ծրագրից բխող միջոցառումների ցանկը և ծրագրի աշխատանքային խմբի կազմը հաստատելու մասին» կարգադրությամբ, որի նպատակն է դատական իշխանության առջև ծառացած խնդիրների լուծումը, հիմնական

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

պատասխանատու է նախատեսվել հենց Նախարարությունը: Միաժամանակ Նախարարությունը հանդես է գալիս օրենսդրական նախաձեռնությամբ՝ ոլորտում օրենսդրական նորամուծություններ կատարելու և վերհանված խնդիրները շտկելու նպատակով: Ուստի վերջինս պետք է ցուցաբերի նախաձեռնողականություն ոլորտում նոր մեխանիզմներ ներդնելու և չլուծված խնդիրներ վերհանելու նպատակով, ինչը վկայում է Նախարարության և մեր կողմից արձանագրված դատական իշխանության խնդիրների անմիջական կապի մասին:

Շարունակվում է մտահոգիչ մնալ այն հանգամանքը, որ ՀՀ Վճռաբեկ դատարան բողոքարկված վերաքննիչ և վարչական դատարանների դատական ակտերը, դատարանի կողմից, որպես կանոն, չեն ենթարկվում մանրամասն ուսումնասիրության և հիմնականում մնում են անփոփոխ: Ավելին, հաճախ են դեպքերը, երբ Հայաստանում որևէ դատավոր իրեն թույլ է տալիս հակահիրավական որոշում կամ վճիռ կայացնել, քանի որ միշտ չէ, որ Վճռաբեկ դատարանը այդ ակնհայտ ապօրինի վճիռը կբեկանի, իսկ Արդարադատության խորհուրդը դրա համար դատավորին կենթարկի պատասխանատվության: Արդյունքում խախտվում է անձանց անկախ և անկողմնակալ դատարանի կողմից քննության իրավունքը, ինչպես նաև նման քաղաքականությունը խոչընդոտում է օրենքի միատեսակ կիրառությանը, ճիշտ մեկնաբանությանը և իրավունքի զարգացմանը:

Պաշտպանը՝ որպես ազգային կանխարգելման մեխանիզմ, 2012 թվականի իր գործունեության ընթացքում կրկին անգամ արձանագրել է քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցման վերացման, ժամկետանց դեղորայքների տրամադրման բացառման, տեսակցությունների տրամադրման, ինչպես նաև վարչակազմի և դատապարտյալների միջև եղած օրինական փոխհարաբերությունների հաստատման խնդիրները: ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում առհասարակ բացակայում է երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակներ, ինչը շենքի անբավարար պայմանների արդյունք է: Խնդրի վերաբերյալ Նախարարությունը հայտնել է, որ դատապարտյալներին տրամադրվում են Երևան քաղաքում գտնվող այլ քրեակատարողական հիմնարկներում երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակներում տեսակցության հնարավորություն: Քրեակատարողական հիմնարկում երկարատև տեսակցությունների սենյակներ նախատեսված չլինելը խոչընդոտում է դատապարտյալների երկարատև տեսակցությունների իրավունքի իրականացման մատչելիությունը և չի կարող նպաստել այդ անձանց ուղղմանը: Քրեակատարողական հիմնարկներում հանձնուքներն ընդունելու, տեսակցությունները կազմակերպելու, խցերը օդափոխելու և այլ դեպքերում արձանագրվել են տարբեր տեսակի բազմաթիվ խախտումներ: Որոշ քրեակատարողական հիմնարկներում դեռևս պահպանվում են կոմունալ-կենցաղային անբավարար պայմաններ: Պաշտպանի կողմից բազմիցս բարձրացվել է այն դիրքորոշումը, որ նման համակարգային խախտումները կարող են վերացվել բացառապես օրենսդրական նախաձեռնությամբ՝ համապատասխան կարգ և չափորոշիչներ սահմանելու միջոցով:

Խիստ մտահոգիչ է քրեակատարողական հիմնարկներում հացադուլ հայտարարած կալանավորների կամ դատապարտյալների համար առանձին խցերի բացակայության հարցը, իսկ, երբեմն, տարրական սանիտարահիգիենիկ պայմանների բացակայությունը: Հացադուլ հայտարարած կալանավորների կամ դատապարտյալների համար առանձին խցերի բացակայությունը կարող է հանգեցնել դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Նշվածի օրինակ է հանդիսանում հացադուլ հայտարարած անձի ներկայությամբ այլ դատապարտյալների սնվելը: Ավելին,

դեռևս որևէ իրավական ակտով սահմանված չեն հացադուլավորների իրավունքները և պարտականությունները:

Չնայած այն հանգամանքին, որ քրեակատարողական վարչության կողմից մշտական հսկողություն է իրականացվում քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին և կալանավորված անձանց տրվող սննդամթերքի որակի, քանակի, ինչպես նաև պատրաստվող ճաշերի բազմազանության նկատմամբ, այնուամենայնիվ Նախարարության կողմից «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ներում իրականացված ծառայողական քննությունների արդյունքում հինգ քրեակատարողական ծառայողների նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր, ինչպես նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությանը հանձնարարվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ ծառայողական քննության ընթացքում բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ: Նշվածը վկայում է, որ չնայած Նախարարության կողմից ձեռնարկված միջոցների, խնդիրները ամբողջությամբ լուծելու համար չեն ձեռնարկվել համակարգային միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն վերոնշյալ խնդիրների վերացմանը:

Մտահոգիչ է, որ շարունակվում են ստացվել բազմաթիվ դիմում-բողոքներ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պատիժ կրող դատապարտյալներից այն մասին, որ ՔԿՀ-ից դուրս իրենց բուժզննում և բուժսպասարկում իրականացնելու, ինչպես նաև ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխելու իրենց դիմումները ՔԿՀ-ի վարչակազմի կողմից մնում են անհետևանք: Կալանավորված անձանց և դատապարտյալների քաղաքացիական բուժհաստատություններում կամ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում բուժում ստանալու վերաբերյալ դիմումները քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի կողմից պետք է մանրամասն ուսումնասիրվեն և վերլուծվեն, և անհրաժեշտության դեպքում, ստացիոնար բուժման կարիք ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները պետք է տեղափոխվեն քաղաքացիական մասնագիտացված բուժհաստատություններ կամ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ: Խնդրահարույց է այն, որ առ այսօր բացակայում են հստակ չափորոշիչներ, որոնց հիման վրա քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի կողմից պետք է ուսումնասիրվեն դիմումները:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում բարձրացվել է խնդիր Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ կալանավորված կամ ազատազրկման դատապարտված անձանց անձնագիր ստանալու գործընթացի տևողության և մատչելիության վերաբերյալ: ՀՀ արդարադատության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշման հավելված 5-ի 39-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, սակայն անձնագիր չունեցող դատապարտյալի անձնագրավորումն իրականացվում է Բաժանմունքների կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այնուամենայնիվ, կալանավորված կամ ազատազրկման դատապարտված անձի կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով անձնագիր ստանալու գործընթացի տևողության հստակ ժամկետ նախատեսված չէ: Խիստ մտահոգիչ է նաև այն, որ չնայած ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի գործողությունները վերոնշյալ անձանց անձնագիր ստանալու համար իրենից ներկայացնում են վարչական վարույթի մի ձև, սակայն «Վարչարարության հիմունքների և

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը (30 օր) նույնպես չի պահպանվում: Նույն օրենքը նախատեսում է, որ օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Դեռևս հստակեցված չէ և դրա կարիքն ունի պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու դրանց չափորոշիչները, ինչպես նաև այն հարցը, որ սահմանված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդություններ ունեցող դատապարտյալները պատժի հետագա կրումից ազատելու նպատակով չեն ներկայացվում Նախարարության միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին, ինչը չի բխում ՀՀ կառավարության 2006թ.-ի N825-Ն որոշման էությունից: Այս կարևորագույն խնդրի լուծման նպատակով Նախարարության կողմից մշակվել է «ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Միաժամանակ ողջունելի է, որ Նախարարության կողմից պատրաստվել է նման նախագիծ, սակայն վերոնշյալ հրատապ հարցի լուծման նպատակով ձեռնարկված կառավարության որոշման նախագիծը դեռևս չի ներկայացվել ՀՀ կառավարության հաստատմանը:

2012 թվականին Պաշտպանին են հասցեագրվել մի շարք դիմում-բողոքներ, որոնցում բարձրացվել է այն խնդիրը, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող նոտարների կողմից ձևավորվել է պրակտիկա, որի համաձայն ՝ փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկությունը վավերացնելու գործընթացից հետո նոտարների մոտ չեն պահվում տվյալ փաստաթղթերի օրինակները: Մինչդեռ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նոտարի վավերացրած կամ հաստատած փաստաթղթի օրինակների քանակը որոշում են դրանց վավերացման կամ հաստատման համար դիմած անձինք, սակայն դրանք պետք է կազմվեն առնվազն երկու օրինակից, որոնցից մեկը պահվում է նոտարի մոտ: Ի պատասխան Պաշտպանի գրությանը, Նախարարությունից հայտնել էին, որ համակարծիք են Պաշտպանի դիրքորոշման հետ և կոնկրետ միջոցներ են ձեռնարկվում՝ նոտարների կողմից փաստաթղթերի պահպանման հետ կապված թերությունները վերացնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ իրավապաշտպան մարմինների հետ Պաշտպանի աշխատակազմի կողմից կազմակերպած հարցազրույցները փաստում են, որ վերոնշյալ խնդիրը շարունակում է մնալ չլուծված: Մեր կողմից բարձրացված խնդրի շրջանակներում հատկապես կարևորում ենք նոտար Աշխեն Հարությունյանի 2012թ. մայիսի 11- ի պատասխան գրությունը՝ ուղղված քաղաքացի Յուրի Հայրապետյանին, որտեղ ի թիվս այլ տեղեկությունների նշվել է. "Նոտարի մոտ ստորագրության իսկությունը վավերացնելիս օրինակ չի պահպանվում", ինչն ինքնին վկայում է, որ 2011թ.-ից ի վեր ոլորտում առկա վերոնշյալ խնդիրը դեռևս պատշաճ լուծում չի ստացել: Բացի այդ, ստացվել են նաև բողոքներ, որոնք վերաբերել են Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող նոտարների կողմից նույն գործարքի համար տարբեր չափի վճարներ գանձելու վերաբերյալ: Մեր արագ արձագանքման աշխատակիցների կողմից իրականացված շրջայցերի արդյունքում կրկին անգամ հաստատվել է այս խնդրի առկայությունը, նույնիսկ գրանցվել են դեպքեր, երբ ծառայությունների համար սահմանված գնացուցակը փակցված է եղել նոտարի առանձնասենյակում: Ավելին, նույն այդ գնացուցակների վրա փակցված սակագները կրկին անգամ նախատեսում են նոտարների համար հայեցողության հնարավորություն: Շրջայցերի արդյունքում գրանցվել են նաև կուտակումների դեպքեր: Խիստ մտահոգիչ է, որ 26.05.2011թ. ՀՀ Կառավարության թիվ 733 որոշմամբ չեն սահմանվում նոտարների կողմից

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

մատուցվող վճարովի ծառայությունների հստակ և կոնկրետ սակագներ: Այսպես, օրինակ՝ նշված որոշման Հավելվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ այլ անշարժ գույքի դեպքում անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման (փոխանակման, առուվաճառքի, հանձնման և այլն) պայմանագրերը վավերացնելու համար գանձվում է վճար նվազագույն աշխատավարձի 10-15-ապատիկի չափով: Ողջունելի է ոլորտը բարեփոխելու ուղղությամբ Նախարարության կողմից մի շարք միջոցառումների ձեռնարկումը, սակայն մտահոգիչ է այն, որ նշված և նմանատիպ մի շարք այլ դեպքերում նոտարի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարի չափի որոշումը շարունակում է մնալ նոտարների հայեցողությանը:

Դեռևս չլուծված խնդիրների շարքում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման (այսուհետ՝ ՔԿԱԳ) մարմինների կողմից որոշ դեպքերում քաղաքացիներից ապօրինաբար պարտադիր նոտարական վավերացմամբ լիազորագրեր պահանջելը, ինչը հակասում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածին և ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջներին: ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից օրենքով սահմանված փաստաթղթերից բացի քաղաքացիներից պահանջվել են նաև հայցվող խնդրի հետ որևէ կապ չունեցող փաստաթուղթ կամ գործողության կատարում: Խնդրի լուծման նպատակով Նախարարության կողմից պատրաստվել են վահանակներ և քաղաքացիական կացության ակտային գրանցման յուրաքանչյուր տեսակի ընթացակարգի և փաստաթղթերի ցանկի վերաբերյալ ուղեցույցներ (բուկլետներ), որոնք սակայն, միայն 2013 թվականից պետք է տեղադրված լինեն ՔԿԱԳ բոլոր տարածքային բաժիններում և ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալությունում:

Նոտարական և ՔԿԱԳ գործակալության ծառայության որակի բարձրացման ուղղությամբ կազմակերպվել են աշխատողների վերապատրաստման դասընթացներ, որը չի կարող լիովին լուծել այն խնդիրները, որոնք ծառացած են վերոնշյալ կառույցների առջև: Հարկավոր է մշակել հստակ ծրագրեր, կազմակերպել քննարկումներ և ձեռնարկել այլ տեսակի միջոցառումներ վերը նշված խնդիրների լուծման համար: Նոտարների և ՔԿԱԳ գործակալությունների թվաքանակի ավելացման ուղղությամբ Նախարարությունն անցկացրել է նոտարների թեկնածուների որակավորման քննություն, որի արդյունքում անցած մասնակիցներից նշանակվել են նոտարներ՝ ավելացնելով Երևան քաղաքի նոտարների թիվը ընդամենը 2-ով, ինչպես նաև ավելացվել են ՔԿԱԳ աշխատակիցների ընդամենը 2 հաստիք: Ողջունելի են ոլորտում ձեռնարկված նման բարեփոխումները, սակայն այնուամենայնիվ, մտահոգիչ է, որ այսպիսի փոփոխությունների միջոցով անհնար է վերացնել հերթերի և կուտակումների խնդիրները, որոնք առկա են նոտարական գրասենյակներում և ՔԿԱԳ գործակալություններում: Մասնավորապես, ՔԿԱԳ գործակալություններում անընդմեջ գոյացող հերթերի և կուտակումների, ինչպես նաև մի շարք դեպքերում ՔԿԱԳ մարմինների կողմից քաղաքացիներից ապօրինաբար պարտադիր նոտարական վավերացմամբ լիազորագրեր պահանջելն ինքնին վկայում են այդ մարմինների աշխատակիցների մասնագիտական ցածր պատրաստվածության մասին: Միևնույն ժամանակ հատկանշական է, որ Նախարարության կանոնադրության 7-րդ կետի համաձայն՝ Նախարարության գործառույթները չեն սահմանափակվում միայն ՔԿԱԳ մարմինների գործունեության մասնագիտական հսկողությամբ, այլ նաև ներառում են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման գործունեության ապահովումը; քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության ապահովումը, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման

քաղաքականության, մեթոդոլոգիայի, հրահանգների մշակումն ու հաստատումը: Նոտարական գրասենյակներում խախտումները բացահայտելու և դրանց նկատմամբ կանխարգելման միջոցներ ձեռնարկելու կապակցությամբ Նախարարության կողմից կազմակերպված ստուգայցերի, անմիջական հարցումների ընթացքում 2012 թվականին նոտարների նկատմամբ իրականացվել է ընդամենը 14 կարգապահական վարույթ՝ հիմնված ինչպես ստուգումների, այնպես էլ քաղաքացիների դիմումների վրա, որոնց արդյունքում կիրառվել են թվով 14 կարգապահական տույժեր: Ողջունելի է Նախարարության կողմից որդեգրած քաղաքականությունը նշված խնդիրների լուծման համար, սակայն գործնականում դրանք անբավարար են՝ ՔԿԱԳ մարմինների և նոտարական ծառայության որակի բարձրացման համար:

Նախարարության ԴԱՀԿ ծառայության մարմինների գործողություններում (անգործություններում) շարունակվում են կոպտագույն խախտումները: Պաշտպանին են հասցեագրվել բազմաթիվ դիմում-բողոքներ, որոնցում բարձրացվել է այն խնդիրը, որ ձևավորված պրակտիկայի համաձայն ԴԱՀԿ ծառայության կողմից կատարողական գործողությունների իրականացման համար սահմանված երկամսյա ժամկետը չի պահպանվում: Գիտակցելով, որ վերոնշյալ պրակտիկան հանդիսանում է օրենսդրական բացի հետևանք, Պաշտպանի կողմից միաժամանակ առաջարկություն էր կատարվել Նախարարությանը հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու նպատակով, նախատեսելով վարչական վարույթի իրականացման դեպքում կատարողական վարույթը կասեցնելու կամ կատարողական գործողությունները հետաձգելու համար համապատասխան դրույթներ, որի արդյունքում այլևս չէր խախտվի օրենսդրությամբ սահմանված երկամսյա ժամկետը: Ողջունելի է, որ Նախարարությունը, արձագանքելով նշված առաջարկությանը, այն ներառել էր «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում:

Ստացվել են նաև բողոքներ ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների կողմից անհետևողական աշխատանքների հետևանքով դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի պահանջները չկատարելուն, հետախուզման մեջ գտնվող պարտապան ֆիզիկական անձանց հայտնաբերելու ուղղությամբ համապատասխան քայլեր չձեռնարկելուն, դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի պահանջները չարամտորեն չկատարող պետական մարմինների խախտումները չարձանագրելուն և պատասխանատվության չենթարկելուն: Պաշտպանին ուղղված դիմում-բողոքի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ անհապաղ կատարման ենթակա կատարողական թերթը փոխանցվել է գույքի ճշգրիտ գտնվելու վայրի ԴԱՀԿ ապահովող ծառայության Էրեբունու տարածքային բաժին, որտեղ եռօրյա ժամկետում չի հարուցվել կատարողական վարույթ և չեն իրականացվել անհապաղ կատարողական գործողություններ, ավելին՝ առանց որևէ իրավական հիմքի կատարողական թերթը փախանցվել է ԴԱՀԿ ապահովող ծառայության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժին: Միաժամանակ, պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին դեռևս 23.07.2010թ. ներկայացված և գործում առկա հայտարարագիրը ևս փաստում է, որ Երևան քաղաքում գտնվող անշարժ գույքը համասեփականության իրավունքով պատկանել է պարտապանին: Այսպիսով, ՀՀ ԴԱՀԿ ապահովող ծառայության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով կատարողական վարույթի հարուցման արհեստականորեն և չհիմնավորված ձգձգման, անհապաղ կատարողական

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

գործողություններ չիրականացնելու արդյունքում արգելանք չի դրվել պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա, ինչն էլ հնարավորություն է տվել պարտապանին օտարել վերը նշված գույքը, ինչի հետևանքով խախտվել են պարտատիրոջ իրավունքները: 2012 թվականին ԴԱՀԿ աշխատակիցների կողմից իրենց վերապահված լիազորությունների ոչ պատշաճ կատարման վերաբերյալ ՀՀ ԱՆ օրինականության վերահսկողության տեսչության կողմից ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունում իրականացվել է 1 ծառայողական քննություն, որի արդյունքում 1 հարկադիր կատարող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև կազմվել են 8 տեղեկանքներ՝ խախտումների վերաբերյալ, որոնք ուղարկվել են ԴԱՀԿ ծառայություն՝ հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով: Նշված ոլորտում պատասխանատվության ենթարկելու նման քաղաքականությունը չի կարող նպաստել ոլորտում առկա խնդիրների կանխարգելմանը և/կամ վերացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հետևողական լինել 2012-2016 թվականների ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ռազմավարական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը և ուժեղացնել հսկողությունը դատական համակարգի նկատմամբ, շարունակել օգտագործել օրենքով սահմանված միջոցները, խախտումները վերացնելու համար:
- Ձեռնամուխ լինել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության պարագայում Արդարադատության խորհրդի կողմից կարգապահական վարույթի հարուցման և այնուհետև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրականացմանը՝ վարույթի օբյեկտիվությունն ու արդարությունը ապահովելու նպատակով:
- Նախաձեռնել բարեփոխումներ ուղղված ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ստանձնած լիազորությունների պատշաճ կատարման իրականացմանը, մասնավորապես, դատարան բողոքարկված դատական ակտերի մանրամասն ուսումնասիրությանն ու իրավաչափ որոշումների կայացմանը:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ ՔԿՀ-ներում հանձնուքներն ընդունելու, գերբնակեցման վերացման, խցերը օդափոխելու, ժամկետանց դեղորայքների տրամադրման բացառման, տեսակցությունների տրամադրման, վարչակազմի և դատապարտյալների միջև եղած օրինական փոխհարաբերությունների բացակայության խնդիրների լուծման, ինչպես նաև «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակների կառուցման ուղղությամբ:
- Համապատասխան իրավական ակտով սահմանել հացադուլավորների իրավունքները և պարտականությունները:
- Արդյունավետ հսկողություն իրականացնել ՔԿՀ-ներում պահվող դատապարտյալների և կալանավորված անձանց տրվող սննդամթերքի որակի, քանակի, ինչպես նաև պատրաստվող ճաշերի բազմազանության նկատմամբ:
- Բարձրացնել ՔԿՀ-ներում դատապարտյալներին և կալանավորներին ցուցաբերվող բուժօգնության որակը և բարելավել ՔԿՀ-ներում կոմունալ-կենցաղային անբավարար պայմանները:
- Անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժման կարիք ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալներին տեղափոխել քաղաքացիական մասնագիտական

բուժհաստատություն կամ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ:

- Միջոցներ ձեռնարկել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից անձնագիր ստանալու գործընթացի, մասնավորապես՝ դատապարտյալի դիմումին հաջորդող փաստաթղթերի հավաքագրման փուլի համար հստակ ժամկետներ սահմանելու վերաբերյալ:
- Ձեռնարկել միջոցներ Նախարարության կողմից մշակված «ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն հաստատելու և պրակտիկայում արդյունավետ կիրառելու ուղղությամբ:
- Հետամուտ լինել նոտարների կողմից փաստաթղթերի պահպանման հետ կապված թերությունները վերացնելու ուղղությամբ:
- Նոտարական և ՔԿԱԳ գործակալության ծառայությունների որակի բարձրացման նպատակով կազմակերպել հատուկ դասընթացներ, սեմինարներ, քննարկումներ և այլ տարատեսակ միջոցառումներ, ինչպես նաև ապօրինի գործողությունների, հերթերի և կուտակումների բացառման նպատակով ձեռնարկել արդյունավետ և հետևողական միջոցառումներ: Միջոցներ ձեռնարկել օրենսդրությամբ (ՀՀ կառավարության 26.05.2011թ. թիվ 733 որոշում) հստակեցնելու նոտարական ծառայությունների դիմաց գանձվող վճարների սակագները:
- Արդյունավետ հսկողություն իրականացնել ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների նկատմամբ, հարկ եղած դեպքում մեղավոր անձանց ենթարկել համապատասխան պատասխանատվության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ ոստիկանությունը կոչված է հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից պաշտպանելու մարդու կյանքն ու առողջությունը, սեփականությունը, ինչպես նաև այլ իրավունքներն ու ազատությունները, հասարակության ու պետության շահերը:

2012 թվականին ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) իրավասության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Գրանցվել են մի շարք դեպքեր, երբ հետաքննության և նախաքննության մարմինները ցուցմունքներ կորզելու նպատակով, անձանց ենթարկել են դաժան, անմարդկային, ինչպես նաև պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:
- Բազմաթիվ դեպքերում անձն անհիմն «հրավիրվել է» Ոստիկանության բաժին, իր կամքին հակառակ պահվել բաժնում՝ փաստացի զրկվելով ազատությունից:
- Ոստիկանության աշխատակիցների կողմից հանցագործության մասին քաղաքացիների հաղորդումները քննարկելիս՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգը չպահպանելու մի շարք դեպքեր են գրանցվել:
- Ստացվել են բողոքներ, որ Ոստիկանության բաժիններ բերման ենթարկված կամ ձերբակալված անձինք զրկվել են փաստաբան ունենալու իրավունքից:
- 2012 թվականի ընթացքում Ոստիկանության ծառայողների կողմից անձանց խաղաղ հավաքներ անցկացնելու և դրանց ընթացքում առնվազն մեկ վրան տեղադրելու խոչընդոտման դեպքեր են գրանցվել:
- Ուսումնասիրվել են քաղաքացիների բողոքները, որոնք վերաբերել են ՀՀ Ոստիկանության ծառայողների կողմից անհարկի ձգձգումներով քննչական գործողությունների իրականացմանը
- Առկա են խնդիրներ փախստականին տրվող Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի ճանաչման և կիրառման բնագավառում:
- Չի ցուցաբերվում պատշաճ ուշադրություն ընտրությունների ժամանակ ընտրակաշառքի բաժանման դեպքերը կանխելու, դրանք բացահայտելու և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:
- Որոշ դեպքերում ՀՀ անձնագրային և վիզաների վարչությունում ու տարածքային ստորաբաժանումներում ՀՀ քաղաքացու անձնագիր տրամադրելու ՀՀ օրենքով սահմանված ժամկետները չեն պահպանվել:
- Ստացվել են բողոքներ Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների հանդեպ անհարգալից վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Էապես և նշանակալիորեն բարելավվել է խաղաղ հավաքների ընթացքում Ոստիկանության գործելաոճը:
- 2012 թվականի ընթացքում Ոստիկանության օրինախախտ ծառայողները բազմաթիվ դեպքերում պատասխանատվության են ենթարկվել:
- ՀՀ ոստիկանապետի ցուցումի համաձայն վերացվել է ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար նախատեսված տուգանքի տեղում վճարելու պրակտիկան:
- Հասարակական անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով՝ տեսախցիկներ են տեղադրվել Երևան քաղաքի տարբեր խաչմերուկներում:
- Ձեռնարկվել են միջոցներ համայնքային Ոստիկանության ստորաբաժանումների ամենօրյա գործունեության զարգացման ուղղությամբ:
- 2012 թվականի հունիսի 1-ից Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում շահագործվել է կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգը:
- Փախստականի կարգավիճակ ստացած անձանց տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերը միջազգայնորեն հաստատված չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով Ոստիկանության կողմից նախապատրաստվել է «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2012 թվականի ընթացքում եղել են մի շարք բողոքներ, որ հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմինները ցուցմունքներ ստանալու նպատակով անձանց ենթարկել են դաժան, անմարդկային, ինչպես նաև պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Նշված խնդրի վերաբերյալ Պաշտպանին առընթեր խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհրդի կողմից իրականացված այցելությունների արդյունքում պարզվել է, որ անձիք հիմնականում ենթարկվում են բռնությունների, երբ գտնվում են Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում: Հաշվի առնելով նաև այն, որ ուսումնասիրությունների ընթացքում բազմաթիվ դեպքեր են գրանցվել, երբ ձերբակալված, բերման ենթարկված կամ Ոստիկանության բաժին մուտք գործած անձանց հաշվառման մատյաններում չեն գրանցել, մեր կողմից համապատասխան միջանկյալ զեկույցներում կատարվել էր առաջարկություն, որ ուժեղացվի վերահսկողությունը Ոստիկանության բաժիններում՝ մասնավորապես հարցաքննությունների ընթացքը մշտապես տեսաձայնագրելու միջոցով: ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի Հանրապետությանը վերաբերող իր առաջարկություններում նույնպես կարևորել է հարցաքննությունների ընթացքի տեսաձայնագրումը: Ողջունելի է այն, որ 2012 թվականի ընթացքում Ոստիկանության ծառայողների կողմից անձանց խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի 1 դեպք է արձանագրվել Ոստիկանության աշխատակիցների կողմից, որի կապակցությամբ ՀՀ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

հատուկ քննչական ծառայության կողմից քրեական գործ է հարուցվել, սակայն նշված քանակը որևէ կերպ չի արտացոլում իրականում այս խնդրի հետ կապված իրավիճակը: Խիստ մտահոգիչ է այն, որ Ոստիկանության աշխատակիցների կողմից բռնությունների, խոշտանգումների փաստերի վերաբերյալ մեր կողմից բարձրացված խնդիրները բավարար խորությամբ չեն ուսումնասիրվել և/կամ դրանց ուսումնասիրության համար արագ միջոցառումներ չեն իրականացվել:

2012 թվականի ընթացքում շարունակվել է կիրառվել անձանց անհիմն և ապօրինի Ոստիկանության բաժին «հրավիրվելու» պրակտիկան, որի արդյունքում անձինք, իրենց կամքին հակառակ, պահվել են բաժնում՝ փաստացի զրկվելով ազատությունից: Պաշտպանի արագ արձագանքման խմբի միջամտությամբ գրանցվել են տասնյակ դեպքեր, երբ միայն նրանց միջամտության արդյունքում Ոստիկանություն «հրավիրված» անձիք ազատ են արձակվել Ոստիկանության համապատասխան բաժնից: «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը, որով առաջնորդվում են իրավապահ մարմինների աշխատակիցները անձին բաժին կամ ստորաբաժանումներ հրավիրելիս որևէ իմպերատիվ պարտականություն չի նախատեսում անձանց համար: Գիտակցելով, որ նշված պրակտիկան իրականցվում է նաև անձանց իրավագիտակցության ցածր լինելու հետևանքով, Պաշտպանը հանդես եկավ հայտարարությամբ, որով ներկայացվեց անձանց իրավունքը՝ իրավապահ մարմինների կողմից «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա կատարված յուրաքանչյուր հրավերի դեպքում չներկայանալ բաժին կամ ստորաբաժանում:

Շարունակվում է չլուծված մնալ Ոստիկանության աշխատակիցների կողմից հանցագործության մասին քաղաքացիների հաղորդումները քննարկելիս՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգը չպահպանելու վերաբերյալ խնդիրը: 2012 թվականին կրկին անգամ գրանցվել են դեպքեր, երբ հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված թվով 3 որոշումներից որևէ մեկը կայացնելու փոխարեն Ոստիկանության աշխատակիցների կողմից կազմվել է եզրակացություն և «կցվել է շարք», որի արդյունքում անձը զրկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածով նախատեսված բողոքարկման իրավունքից, քանի որ նշված հոդվածը նախատեսում է «որոշման», այլ ոչ թե «եզրակացության» բողոքարկման հիմքերն ու կարգը: Գրանցվել են նաև դեպքեր, երբ խախտվել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման համար սահմանված ժամկետները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի («Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը») համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առթիվ օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Ողջունելի է այն փաստը, որ վերոնշյալ խնդիրների կապակցությամբ 10-ից ավել Ոստիկանության ծառայողներ ենթարկվել են պատասխանատվության՝ կարգապահական տույժերի, խիստ զգուշացումների և այլն: Խիստ մտահոգիչ է, որ նման խնդիրներ դեռևս առկա են, ինչը վկայում է որոշ աշխատակիցների պրոֆեսիոնալիզմի պակասի մասին:

2012 թվականին ստացվել են բողոքներ, այն մասին, որ Ոստիկանության բաժիններ բերման ենթարկված կամ ձերբակալված անձինք զրկվել են փաստաբան ունենալու իրավունքից: Ոստիկանության իրավասու պաշտոնատար անձինք չեն ապահովել բերման ենթարկվածի՝ փաստաբան հրավիրելու և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, քանի դեռ բերման ենթարկված անձի վերաբերյալ չի կազմվել ձերբակալման

արձանագրություն կամ չի կայացվել խափանման միջոց ընտրելու մասին որոշում: Այդ կերպ խախտվել է անձի՝ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքը: Նշված խնդրին անդրադարձել էին նաև միջազգային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետությանը վերաբերող իրենց համապատասխան եզրակացություններում: Ավելին, նման պրակտիկան նաև ուղղակիորեն հակասում է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ սահմանված կարգին: Նշված որոշմամբ դատարանը հստակ սահմանել է, որ բերման ենթարկված անձը ստանում է բերվածի կարգավիճակ և օգտվում առնվազն հետևյալ իրավունքներից. ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը, բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին, գ) հրավիրելու իր փաստաբանին, դ) լռելու: Ողջունելի է այն հանգամանքը, որ նվազել է այս խնդրի վերաբերյալ բողոքների քանակը, ինչպես նաև այն, որ Ոստիկանության ղեկավարության կողմից պատասխանատվության են ենթարկվել այն անձիք, ովքեր խոչընդոտել են և/կամ չեն ապահովել անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Սակայն հարկավոր է հրատապ միջոցներ ձեռնարկել գործնականում այս խնդրի վերացման և Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված կարգին անվերապահորեն հետևելու ուղղությամբ:

Գրանցվել են դեպքեր, երբ ՀՀ ոստիկանության ծառայողները չեն ապահովել և/կամ խոչընդոտել են անձանց խաղաղ հավաքներ անցկացնելու և դրանց ընթացքում առնվազն մեկ վրան տեղադրելու իրավունքը: Այսպես, հավաքներ անցկացնելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են այդ ոլորտի հատուկ օրենքով, այն է՝ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքում բացակայում է հավաք անցկացնելիս վրաններ կամ այլ ժամանակավոր կառույցներ տեղադրելու վերաբերյալ արգելքի մասին դրույթը: Ավելին, նախատեսվում է նաև խաղաղ բնույթ ունեցող հավաքներին ոստիկանության կողմից աջակցություն ցուցաբերելու պարտականության վերաբերյալ դրույթ: Նշված մոտեցումը համապատասխանում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում սահմանված մոտեցմանը համաձայն, որի՝ հավաքների ազատության իրավունքի էությունից է բխում ցուցարարների կողմից իրենց տեսակետները արտահայտելու համար բավարար հնարավորության ապահովման պարտավորության պահպանման անհրաժեշտությունը: Հավաքի ժամանակավոր բնույթի վերաբերյալ եզրույթը չպետք է կանխարգելի ոչ մշտական կառույցների և վրանների տեղադրումը: 11-րդ հոդվածի համատեքստում ՄԻԵԴ-ի կողմից սահմանված անկյունաքարային մոտեցումը դրսևորվել է հավաքների ազատության իրավունքի ապահովման առնչությամբ ցուցարարների համար՝ իրենց տեսակետները արտահայտելուն ուղղված բավարար հնարավորության ապահովման մեջ: Եթե հավաքը մեծ անհարմարություն չի պատճառում այլ անձանց, ապա իշխանությունները պետք է հավաքի ժամանակավոր լինելու պայմանը գնահատելիս համապատասխանաբար առաջադրեն առավել մեղմ պահանջներ: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից, կենդանի փաստաթուղթ է հանդիսանում և պետք է մեկնաբանվի «արդի օրվա պայմանների» լույսի ներքո՝ հասարակության զարգացմանը զուգընթաց: Ուստի հավաքներ անցկացնելու և դրանց ընթացքում առնվազն մեկ վրան տեղադրելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումը ոչ միայն հանդիսանում է ՀՀ օրենսդրության խախտում, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի խախտում:

Ուսումնասիրվել են քաղաքացիների բողոքներ, որոնք վերաբերել են Ոստիկանության ծառայողների կողմից անհարկի ձգձգումներով քննչական

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

գործողությունների իրականացմանը: Հիմնականում բողոքները վերաբերել են առանց անհրաժեշտության երկարատև հարցաքննություններ անցկացնելուն: Ոստիկանությունից այս խնդրի կապակցությամբ հայտնել են, որ ՀՀ ոստիկանության 7 ծառայող ենթարկվել են կարգապահական տույժի: Նման աշխատառճը լրջորեն վնասում է Ոստիկանության համակարգի հանդեպ անձանց վստահության և համագործակցության ցանկության բարձրացմանը:

Դեռևս առկա են նաև խնդիրներ փախստականին տրվող Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի ճանաչման և կիրառման բնագավառում: Համաձայն «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1417-Ն որոշման՝ ՀՀ-ում ապաստան ստացած փախստականներին կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տալու իրավասությունը վերապահված է ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: Կառավարության սույն որոշման համաձայն՝ ճամփորդական փաստաթուղթը համարվում է փախստականի անձը հաստատող փաստաթուղթ, որի բովանդակությունը կազմող բոլոր կետերը տպագրվում են հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Սակայն փաստաթուղթը ոչ բոլոր դեսպանատների կողմից է ճանաչվում, քանի որ այնտեղ անձի տվյալները (ազգանուն, անուն, երկիր, ծննդավայր, սեռ) գրված են միայն անգլերեն լեզվով, ինչն իր հերթին խնդիրներ է առաջացնում ՀՀ պետական մարմիններին ճամփորդական փաստաթուղթը ներկայացնելիս, որի հետևանքով Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի միջոցով երկրից մեկնող անձինք հաճախ ունենում են խնդիրներ սահմանը հատելիս:

2012 թվականին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների ժամանակ Ոստիկանությունը պատշաճ ուշադրություն չի դարձրել ընտրական գործընթացների ժամանակ համատարած ընտրակաշառքների բաժանման հարցերին: Նախընտրական փուլում և քվեարկության օրը ընտրակաշառք բաժանելու մասին Ոստիկանությունում գրանցվել է 102 դեպք, որոնցից մեծ մասի վերաբերյալ կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով, և ահազանգերից միայն 8-ի դեպքում է քրեական գործ հարուցվել: Նշված տվյալները վկայում են այն մասին, որ Ոստիկանությունը նշված ոլորտում չի ձեռնարկվել բավարար միջոցներ հանցավոր դեպքերը հայտնաբերելու և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու համար: Մտահոգիչ է, որ վերոնշյալ դեպքերով ուսումնասիրությունները անհարկի երկար են տևել, որը նույնպես խոչընդոտ է հանդիսացել փաստերի հավաքագրման և դեպքերի բացահայտման համար: Ուստի՝ կարելի է փաստել, որ հետաքննության և նախաքննության ընթացքում ձեռնարկված գործողությունները արդյունավետ չեն եղել:

2011 թվականի նոյեմբերի 30-ին ընդունվեց «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքի 5-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ անձնագիրը Հայաստանի Հանրապետությունում տրամադրվում (փոխանակվում) է դիմում ներկայացնելու օրվան հաջորդող 15-րդ աշխատանքային օրը կամ քաղաքացու ցանկությամբ առավել սեղմ ժամկետներում՝ գանձվող վճարի դիմաց: Սակայն գործնականում գրանցվել են որոշ դեպքեր, երբ ՀՀ անձնագրային և վիզաների վարչությունում (ԱՎՎ) ու տարածքային ստորաբաժանումներում ՀՀ քաղաքացու անձնագիր տրամադրելու վերաբերյալ քաղաքացիների դիմումները մերժվել են և ՀՀ օրենքով սահմանված ժամկետները չեն պահպանվել: Ի պատասխան մեր գրությանը՝ ՀՀ Ոստիկանությունից հայտնել են, որ ՀՀ քաղաքացու անձնագրի տրամադրման ձգձգումը պայմանավորված է եղել 2012 թվականի

1-ին կիսամյակի ընթացքում անձնագրերի սակավության և նոր ներդրված համակարգի ծրագրային և տեխնիկական թերություններով: Ողջունելի է այն հանգամանքը, որ ԱՎՎ պետը հանդես էր եկել մի շարք հայտարարություններով, որոնց միջոցով իրազեկել էր հանրությանը վերոնշյալ խնդրի առկայության մասին: Սակայն, բոլոր դեպքերում օրենքով սահմանված կարգը մշտապես պետք է պահպանվի, և առաջացող թերությունները չպետք է խոչընդոտ հանդիսանան անձնագիր ստանալու համար:

2012 թվականի ընթացքում ստացվել են բազմաթիվ բողոքներ այն մասին, որ Ոստիկանության ծառայողները իրենց գործառույթներն իրականացնելիս անհարգալից վերաբերմունք են դրսևորել քաղաքացիների հանդեպ: Սույն խնդրի վերաբերյալ մեր հարցմանն ի պատասխան Ոստիկանությունից հայտնել են, որ արձանագրվել են Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու 10-ից ավելի դեպքեր, որոնցով կատարված ծառայողական քննությունների արդյունքներով 2 ծառայողներ ենթարկվել են քրեական պատասխանատվության, 5 ծառայողներ ազատվել են Ոստիկանությունում ծառայությունից, 11 ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժերի և այլն: Ողջունելի են Ոստիկանության ղեկավարության կողմից ձեռնարկված նման խիստ միջոցներն այս խնդրի կապակցությամբ, սակայն նման դեպքերը լրջորեն վնասում են ՀՀ ոստիկանության նկատմամբ հանրության մեջ վստահության և հարգանքի ձևավորմանը: Գտնում ենք, որ անհրաժեշտ է օրինախախտ ծառայողներին պատասխանատվության ենթարկելուց բացի նախաձեռնել համակարգային միջոցառումների իրականացում, որոնք ուղղված կլինեն Ոստիկանության բոլոր ծառայողների էթիկայի կանոնների և պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը:

2012 թվականին «Կենտրոն» հեռուստաընկերության «Ուրվագիծ» հաղորդման հեղինակ Պետրոս Ղազարյանը դիմել էր Պաշտպանին և հայտնել, որ լրագրողական գործունեություն իրականացնելիս՝ Ոստիկանությունը սպառնացել է իրեն: Նման բողոքի պատճառ էր հանդիսացել Ոստիկանության կողմից պատրաստված և «Արմենիա» հեռուստաընկերությամբ հեռարձակված «Հերթապահ մաս» հաղորդման ժամանակ ներկայացված տեսանյութը, ինչը Ոստիկանության արձագանքն էր այդ մարմնի վերաբերյալ Պետրոս Ղազարյանի հնչեցրած քննադատությանը: Ոստիկանության անունից այդ տեսանյութում Պետրոս Ղազարյանին խորհուրդ էր տրվում. «... եթե, այնուամենայնիվ, որոշել եք հարց լուծել՝ ձեր իմացությանն ու կարողությանը հարիր թեմա ու թիրախ ընտրեք, թե չէ հարցի ծանրությունից կկքվեք»: Ուսումնասիրելով վերոնշյալ բողոքը՝ պարզ էր դարձել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածով նախատեսված՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեության խոչընդոտման քրեորեն հետապնդելի արարքի ուղղակի հատկանիշները բացակայում են: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԻԵԴ նախադեպային որոշումներով հաստատվել է, որ անընդունելի է այնպիսի գործողությունների ձեռնարկումը կամ նույնիսկ այնպիսի մթնոլորտի ստեղծումը, որոնք կդրդեն անձանց երկմտել, վախենալ իրենց խոսքի ազատության իրացման համար, ուստի Ոստիկանության նշյալ գործողությունները համահունչ չէին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից որդեգրած քաղաքականության հետ: Այդ իսկ պատճառով Պաշտպանը այս անընդունելի խնդրի կապակցությամբ հանդես էր եկել հայտարարությամբ, որից հետո նման այլ դեպքեր չեն գրանցվել:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձերբակալված կամ բերման ենթարկված անձանց նկատմամբ բռնություններն ու անմարդկային վերաբերմունքը կանխելու նպատակով բարձրացնել Ոստիկանության աշխատակիցների մասնագիտական որակավորման մակարդակն ու ուժեղացնել վերահսկողությունը Ոստիկանության բաժիններում, մասնավորապես՝ հարցաքննությունների ընթացքը մշտապես տեսաձայնագրող սարքեր տեղադրելու միջոցով:
- Ակտիվացնել հսկողությունը հանցագործության մասին հաղորդումներին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգով ընթացք չտալու արատավոր պրակտիկան բացառելու ուղղությամբ:
- Օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնելիս անձանց բաժին կամ ստորաբաժանում «հրավիրելիս» գործնականում մշտապես պարտադիր տեղեկացնել «հրավիրված» անձանց այդ գործընթացի կամավորության և վերջիններիս հրաժարվելու իրավունքի մասին:
- Ոստիկանության բաժիններում անցկացվող ծառայողական պարապմունքների ծրագրերում ընդգրկել և հետամուտ լինել Վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված՝ բերման ենթարկվածին իր իրավունքների մասին անհապաղ տեղեկացնելու պահանջն ապահովելուն, անհարկի երկարատև քննչական գործողությունների և փաստաբանի մասնակցության ապահովման հետ կապված խնդիրներ վերացնելու ուղղությամբ:
- Հետամուտ լինել խաղաղ բնույթ ունեցող հավաքներին Ոստիկանության կողմից աջակցություն ցուցաբերելու պարտականության պահպանմանը, այդ թվում նաև միջազգային փորձով հաստատված առնվազն մեկ վրանի իրավունքի ապահովմանը:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ փախստականի կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը օրենքի պահանջներին համապատասխանեցնելու և կիրառելիությունը ապահովելու ուղղությամբ:
- Իրականացնել անհրաժեշտ և արդյունավետ միջոցառումներ ընտրությունների ժամանակ ընտրակաշառքի դեպքերը կանխելու և/կամ դրանք բացահայտելու ուղղությամբ:
- Անհրաժեշտության դեպքում անհապաղ միջոցներ ձեռնարկել անձնագրերի տրամադրման հետ կապված հնարավոր խնդիրների վերացման ուղղությամբ և հետամուտ լինել «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքով սահմանված անձնագրի տրամադրման ժամկետների պահպանմանը:
- Ոստիկանության ծառայողների համար իրականացնել հատուկ միջոցառումներ պրոֆեսիոնալիզմի, էթիկայի կանոնների մասին իրազեկման բարձրացման և քաղաքացիների հետ հարգալից հաղորդակցման ապահովման նպատակով:
- Ձերծ մնալ օրինական լրագրողական գործունեություն իրականացնող անձանց անուղղակի սպառնալիքներ տալուց:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության դատախազությունը (այսուհետ՝ Դատախազություն) իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ և այլն:

Հատուկ քննչական ծառայությունն (այսուհետ՝ Ծառայություն) իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի հետ կապված հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն և այլն:

2012 թվականին Դատախազության և Ծառայության իրավասության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ դատախազություն

- Շարունակվում է չլուծված մնալ դատախազական հսկողության արդյունավետ իրականացման խնդիրը հետաքննության և նախաքննության մարմինների նկատմամբ:
- Խիստ մտահոգիչ են դատախազական հսկողության թերացման հետևանքով բազմաթիվ քաղաքացիների իրավունքների սահմանափակումները և խախտումները, ինչպես նաև լիազորությունների չարաշահումները:
- Խիստ մտահոգիչ է, որ դեռևս լիարժեք և օբյեկտիվ բացահայտված չեն կամ չավարտված են մնում խաղաղ պայմաններում բանակում մահացած անձանց գրեթե տասնամյա հնության քրեական գործերը:
- Շարունակվում է չլուծված մնալ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման համար սահմանված տասնօրյա ժամկետը չպահպանելու խնդիրը:
- Չեն ձեռնարկվել բավարար միջոցներ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրակաշառք տալու դեպքերը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրման համար:

- Մտահոգիչ է այն, որ Դատախազությունը խափանման միջոց ընտրելու հարցը լուծելիս, նախապատվությունը մշտապես տալիս է կալանավորման միջնորդություն դատարան ներկայացնելուն:
- Գրանցվել են ՀՀ ոստիկանության ձերբակալվածների պահման վայրերում գտնվող ձերբակալված, ինչպես նաև կալանավորված անձանց իրավունքների մի շարք խախտումներ՝ դատախազական ոչ բավարար վերահսկողության հետևանքով:

ՀՀ հատուկ քննչական ծառայություն

- Ծառայությունը հետամուտ չի եղել ուսումնասիրել կամ խորությամբ չի ուսումնասիրել ինչպես իրեն ուղղված գրություններում, այնպես էլ մամուլում առկա պաշտոնատար անձանց կողմից դաժան վերաբերմունքի դեպքերի մասին տեղեկությունը:
- Ծառայությունը բավարար արդյունավետությամբ չի կատարել իր գործառույթները՝ կապված մարտի 1-ի 10 զոհերի մահվան փաստով կատարված նախաքննության հետ:
- Բազմաթիվ դեպքերում տեղի են ունեցել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ, մասնավորապես՝ չեն պահպանվել քրեական գործերի նախաքննության օրենքով սահմանված ժամկետները: Ավելին, մի շարք դեպքերում վարույթ ընդունվել են արդեն իսկ ժամկետանց գործեր, սակայն որևէ պատասխանատվության միջոց իրավախախտների նկատմամբ չի կիրառվել:
- Արձանագրված մի քանի տասնյակ դեպքերում Ծառայությունը քննության առած գործերը հետագայում ուղարկել է այլ մարմիններ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Էապես և նշանակալիորեն բարելավվել է խաղաղ հավաքների ընթացքում ոստիկանության գործելաոճը:
- Հաճախակի է դարձել Դատախազության կողմից հարուցված քրեական գործերի փոխանցումը Ծառայությանը՝ ինչը նպաստել է այդ գործերի առավել արդյունավետ ուսումնասիրմանը:
- Դատախազության կողմից պատրաստվել են ոլորտում առկա օրենսդրական բացերը լրացնող մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր:
- Նախորդ տարվա համեմատ 2012 թվականի ընթացքում աճել է Ծառայության կողմից վարույթում քննված գործերի քանակը:
- Դատախազությունը և Ծառայությունը հիմնականում ապահովել են իրենց գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ դատախազություն

Դատախազությունը Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Սակայն շարունակվում է չլուծված մնալ դատախազական հսկողության արդյունավետ իրականացման խնդիրը հետաքննության և նախաքննության մարմինների նկատմամբ: Դատախազության կողմից հսկողության թերացումը հանգեցնում է քաղաքացիների իրավունքների սահմանափակումների և խախտումների, ինչպես նաև հետաքննության և նախաքննության մարմինների կողմից իրենց լիազորությունների չարաշահումների: Պաշտպանին ուղղված բողոքները վկայում են, որ եղել են դեպքեր, երբ նախապատրաստված նյութերով անձանց տրված բացատրություններում առկա են եղել էական հակասություններ, իսկ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից կայացվել են «նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշումներ: Այսինքն՝ չեն իրականացվել անհրաժեշտ քննչական գործողություններ: Այնինչ, քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Ուստի, այն դեպքերում, երբ նյութերի նախապատրաստման փուլում հնարավոր չէ պարզել գործի հանգամանքները, քրեական հետապնդում իրականացնող մարմինը՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար պարտավոր է առկա նյութերով կայացնել քրեական գործ հարուցելու մասին որոշում, որի շրջանակներում օրենսդիրը քննչական գործողություններ իրականացնելու համար որևէ սահմանափակում չի նախատեսում, այլ ոչ թե եղած նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: Նշյալ խնդիրները հանգեցնում են քաղաքացիների իրավունքների և շահերի՝ մասնավորապես, քրեական հետապնդում իրականացնող մարմինների առջև արդյունավետ իրավական պաշտպանություն ստանալու իրավունքի խախտումների:

ՀՀ զինվորական դատախազության կողմից իրականացվել են միջոցառումներ՝ զինված ուժերում մահվան դեպքերը պարզելու, մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Չնայած ձեռնարկված որոշակի դրական բարեփոխումների, այնուամենայնիվ, խիստ մտահոգիչ են ընթացիկ տարում ՀՀ զինված ուժերում ծառայության ընթացքում զոհված կամ սպանված զինծառայողների ծնողների և մտերիմների դժգոհությունները, որոնք վերաբերել են ՀՀ զինվորական դատախազության ոչ պատշաճ հսկողության արդյունքում նախաքննությունն իրականացնող մարմնի կողմից ոչ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննության իրականացմանը: Խիստ մտահոգիչ է, որ դեռևս չբացահայտված կամ չավարտված են մնում խաղաղ պայմաններում բանակում մահացած անձանց գրեթե տասնամյա հնության քրեական գործերը: ՄԻԵԴ-ի մի շարք նախադեպային որոշումներով հստակ սահմանվել է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները մահվան ելքով գործերի դեպքում պարտավորվում են

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

հնարավորինս սեղմ, ողջամիտ ժամկետներում իրականացնել արդյունավետ նախաքննություն: Ավելին, այդ քրեական գործերով ընթացող նախաքննությունների վերաբերյալ տուժողների բարեկամների և մտերիմների մոտ դեռևս առկա են հիմնավոր մտահոգություններ: Մեր դիրքորոշումն է, որ միայն նախկին (նույնիսկ տասնամյա հնության) գործերի լրիվ և օբյեկտիվ քննությունն ու այդ գործերով արդարության վերականգնումը կարող է ապահովել այսօրվա մահվան դեպքերի քննության նկատմամբ վստահությունը և վաղվա բռնությունների ու սպանությունների կանխարգելումը:

Դեռևս բազմաթիվ են դեպքերը, երբ հետաքննության կամ նախաքննության մարմինները խախտում են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված 10-օրյա ժամկետները: Ավելին, Դատախազության կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվել՝ կանխելու այն դեպքերը, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված թվով 3 որոշումներից որևէ մեկը կայացնելու փոխարեն ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից կազմվել է եզրակացություն և «կցվել է շարք», որի արդյունքում անձը զրկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածով նախատեսված բողոքարկման իրավունքից, քանի որ նշված հոդվածը նախատեսում է «որոշման», այլ ոչ թե «եզրակացության» բողոքարկման հիմքերն ու կարգը: Չնայած այն հանգամանքին, որ խնդիրն իրականում ոչ արդյունավետ օրենսդրական կարգավորման հետևանք է, այնուամենայնիվ, այս պարագայում անթույլատրելի է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգի չպահպանումը: Տվյալ խախտումների բացառման համար հարկավոր է Դատախազության արդյունավետ և հետևողական հսկողության իրականացումը հետաքննության և նախաքննության մարմինների կողմից օրենսգրքով սահմանված ժամկետները և կարգը պահպանելու նկատմամբ: Այն դեպքերում, երբ չեն պահպանվել օրենսգրքով սահմանված ժամկետները, անհրաժեշտ է հարուցել կարգապահական վարույթ և պատասխանատվության ենթարկել օրինախախտներին: Միևնույն ժամանակ ողջունելի է, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի ընդունմամբ նախաքննական մարմիններին կտրվեն ավելի ճկուն և արդյունավետ ժամկետներում գործերի քննության հնարավորություն:

2012 թվականին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների ժամանակ գրանցվել են բազմաթիվ դեպքեր, որոնք վերաբերել են ընտրակաշառք տալուն: Դատախազության հայտնած տվյալների համաձայն հարուցվել է ընդամենը 7 գործ, այն դեպքում, երբ միայն ՀՀ ոստիկանությունը ստացել է 70-ից ավելի ահազանգ, որոնք վերաբերել են ընտրակաշառք տալուն: Նշվածը վկայում է այն մասին, որ Դատախազության վերահսկողության շրջանակներում համապատասխան ժամկետներում չեն ձեռնարկվել անհրաժեշտ միջոցառումներ, մասնավորապես՝ ցուցումներ քննիչներին, հնարավորինս շուտ չեն իրականացվել քրեական դատավարությամբ նախատեսված գործողություններ՝ դեպքերի ուսումնասիրության համար: Վերոգրյալը խոչընդոտ է հանդիսանում նման հանցավոր արարքների կանխարգելման և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու համար:

Մտահոգիչ է նաև այն, որ Դատախազությունը խափանման միջոց ընտրելու հարցը լուծելիս, նախապատվությունը մշտապես տալիս է կալանավորման միջնորդություն դատարան ներկայացնելուն: Մինչդեռ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, բացի կալանավորումից նախատեսված են նաև այլ խափանման միջոցներ: Միջազգային փորձում, ինչպես նաև ՄԻԵԴ նախադեպային որոշումներում ընդունվել է այն մոտեցումը, համաձայն որի՝ կալանավորումը պետք է դիտվի, որպես բացառիկ խափանման միջոց և

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

կիրառվի այն դեպքում, երբ օրենսգրքով սահմանված մյուս խափանման միջոցներով հնարավոր չէ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը քրեական վարույթի ընթացքում: Կալանավորումը, որպես խափանման միջոցի միայն բացառիկ դեպքերում կիրառելը, կարող է նաև նպաստել ՔԿՀ-ների բեռնաթափմանը:

Քաղաքացիների պնդմամբ ընթացիկ տարում ոչ բոլոր դեպքերում է Դատախազությունը տեղեկացվել կամ արդյունավետ միջամտել քրեակատարողական հիմնարկներում բռնությունների և խոշտանգումների հնարավոր դրսևորումներին օրենսդրությամբ սահմանված կարգով արձագանքելու գործընթացին, չնայած այն հանգամանքին, որ նշված գործընթացը Դատախազության համակարգում խիստ կանոնակարգված է: Նաև հարկ է նշել, որ շատ դեպքերում Դատախազության ոչ բավարար հսկողության արդյունքում խախտվել են ՀՀ ոստիկանության ձերբակալվածների պահման վայրերում (այսուհետ՝ ՁՊՎ) գտնվող ձերբակալված անձանց իրավունքները, մասնավորապես, թույլ է տրվել այդ անձանց ՁՊՎ-ներում պահելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետների անօրինական երկարաձգում:

ՀՀ հատուկ քննչական ծառայություն

Պաշտպանի կողմից 2012 թվականի ընթացքում պաշտոնատար անձանց կողմից դաժան վերաբերմունքի (բռնության դրսևորումների), ոստիկանության բաժիններում անձանց ապօրինի պահելու, նրանց ազատությունից անօրինական հիմքերով փաստացի զրկելու դեպքերի վերաբերյալ գրություններ են ուղարկվել Ծառայություն, սակայն դրանց արդյունքում քրեական գործեր հիմնականում չեն հարուցվել: Ծառայության կողմից հայտնած դիրքորոշումից կարելի է եզրակացնել նաև այն, որ 2012 թվականին մամուլում տեղ գտած վերոնշյալ խնդիրների վերաբերյալ հայտարարություններին Ծառայությունը հետամուտ չի եղել և/կամ ոչ պատշաճ խորությամբ է ուսումնասիրել, չնայած Քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները քրեական գործ հարուցելու առիթ են հանդիսանում: Ողջունելի է այն, որ 2012 թվականին Ծառայության կողմից քրեական գործի ուսումնասիրման ընթացքում բացահայտվել և մեղադրանք է առաջադրվել ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնի ՔՀԲ օպերլիազորների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պաշտոնական լիազորությունները չարաշահելու և պաշտոնական կեղծիքի հանցակազմերով: Սակայն, կարելի է եզրակացնել, որ Ծառայությունը բավարար հետևողականություն չի դրսևորել պաշտոնատար անձանց կողմից բռնության դրսևորումների վերաբերյալ հայտարարությունների ուսումնասիրմանը, որը չափազանց կարևոր է, թե՛ մեղավոր անձանց պատժելու և թե՛ նման արարքները հետագայում կանխարգելելու համար:

Մեր կողմից նախկինում բարձրացվել էին Ծառայության աշխատանքների նկատմամբ քննադատությունները՝ կապված 2008թ. մարտի 1-ի 10 զոհերի մահվան փաստով կատարված նախաքննության անարդյունավետության հետ: Զոհված անձանց ընտանիքների անդամներն ու հարազատները այն համոզման են, որ Ծառայությունը բավարար արդյունավետությամբ չի կատարել իր գործառույթները: Նշված խնդրի առնչությամբ իր խիստ քննադատությունն է հայտնել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությանը վերաբերող իր եզրակացությունում: Այդ

եզրակացությամբ անդրադարձ է կատարվել 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին և կարևորվել է այդ իրադարձությունների ժամանակ ուժի անհամաչափ կիրառման համար պատասխանատու իրավապահների և ղեկավարների հայտնաբերման և նրանց պատասխանատվության ենթարկելու համար արդյունավետ միջոցառումների իրականացումը: Դրական է, որ նշված գործերի քննության վերաբերյալ Ծառայությունը հրապարակել է կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն, այդուհանդերձ խիստ մտահոգիչ է նախաքննության նման ձգձգումը և նշված գործերի ամբողջական և վերջնական բացահայտման չիրականացումը:

Ի պատասխան քրեական գործերի նախաքննության՝ օրենքով սահմանված ժամկետների պահպանման նկատմամբ հետևողականության դրսևորման հարցին՝ նախաքննության ժամկետների երկարաձգումը հիմնավորելու նպատակով Ծառայությունը ներկայացրել է տարբեր հիմքեր, մասնավորապես՝ բազմաէպիզոդ, հասարակական հնչեղություն ունեցող, մեծածավալ քննչական գործողություններ պահանջող, առանձնակի բարդություն ունեցող, փորձաքննությունների և մասնագիտական ստուգումների կատարման հետ կապված գործեր: Սակայն նշում է կատարվում են նաև այն գործերի մասին, որոնք Ծառայության վարույթ են ընդունվել արդեն իսկ ժամկետանց վիճակում: Վերոնշյալից ակնհայտ է, որ մի շարք դեպքերում տեղի են ունեցել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ: Ավելին, ժամկետների չպահպանումը չի ապահովում անձի սահմանադրորեն ամրագրված իրավական երաշխիքները, ինչն ինքնին օրինախախտում է: Այդ տրամաբանությունից ելնելով՝ անհասկանալի է, թե ինչու Ծառայությունը չի սկսել այդ գործերի վերաբերյալ քննությունը օրինախախտներին պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Ողջունելի է այն, որ 2012 թվականի ընթացքում Ծառայության վարույթում քննվել է 204 քրեական գործ՝ նախորդ տարվա 193-ի դիմաց, այսինքն՝ 11 գործով ավելի, որից 62-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 74-ը ուղարկվել է այլ մարմին: Ծառայության վարույթում քննվել են ՊԵԿ աշխատակիցների կողմից սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործեր, ինչպես նաև գործեր, որոնց սուբյեկտ են հանդիսացել ՀՀ ՊՆ ու ԶՈՒ ներկայացուցիչներ և ՀՀ Ոստիկանության աշխատակիցներ: Սակայն մտահոգիչ է այն, որ 74 գործ Ծառայության կողմից ուղարկվել է այլ մարմիններ այդ թվում՝ ՀՀ ՊՆ, Ոստիկանություն և այլ մարմիններ: ՀՀ օրենսդրությամբ երաշխավորվել է Հատուկ քննչական ծառայության անկախությունը և որևէ գերատեսչության ենթակայության տակ չգտնվելը, որը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված հատուկ սուբյեկտների մասնակցությամբ քրեական գործերը: Նման անկախությամբ օժտված չեն այլ գերատեսչությունների համապատասխան նախաքննություն իրականացնող մարմինները, ուստի Ծառայության կողմից ուսումնասիրված դեպքերի հետագա փոխանցումը այլ մարմիններ ոչ միշտ է ապահովվում այդ գործերի բազմակողմանի, օբյեկտիվ, լրիվ ուսումնասիրությունը: Հարկավոր է օրենսդրորեն ամրագրել, որ Ծառայության կողմից ուսումնասիրված գործերը ավարտվեն վերջիններիս կողմից, ինչպես նաև հարկավոր է լայնացնել Ծառայության ենթակայության տակ գտնվող գործերի շրջանակը և հնարավորություն տրամադրել վերջիններիս, ըստ անհրաժեշտության, վարույթ ընդունել նաև այլ քննչական մարմիններին ենթակա գործերը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ դատախազություն

- Խստացնել և առավել արդյունավետ դարձնել հսկողությունը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, մինչ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումը և ուժի մեջ մտնելը:
- Հետամուտ լինել քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելուն՝ օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումների իրականացման համար գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումն ապահովելու համար:
- ՀՀ զինված ուժերում ծառայության ընթացքում զոհված կամ սպանված զինծառայողների գործերի կապակցությամբ իրականացնել արդյունավետ հսկողություն նախաքննությունն իրականացնող մարմնի նկատմամբ և դրսևորել հետևողականություն մեղավորներին պատժելու ուղղությամբ՝ նման դեպքերը կանխարգելելու համար:
- Ձեռնարկել միջոցներ խաղաղ պայմաններում բանակում մահացած անձանց գրեթե տասնամյա հնության քրեական գործերը բացահայտելու և/կամ ավարտելու համար:
- Արդյունավետ հսկողություն իրականացնել հետաքննության և նախաքննության մարմինների կողմից օրենքով սահմանված ժամկետների պահպանման նկատմամբ:
- Ընտրությունների ժամանակ տեղի ունեցող խախտումներին արձագանքել հնարավորինս սեղմ ժամկետներում՝ հաշվի առնելով այդ խախտումները բացահայտելու բարդությունը և դրանց քողարկված բնույթը:
- Կալանավորումը, որպես խափանման միջոց ընտրել միայն բացառիկ դեպքերում, երբ այլ խափանման միջոցով հնարավոր չէ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը քրեական վարույթի ընթացքում:
- Ձեռնարկել միջոցներ քրեակատարողական հիմնարկներում Դատախազական հսկողության մեխանիզմներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ, ինչպես նաև բացառել ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների խախտման դեպքերը:

ՀՀ հատուկ քննչական ծառայություն

- Իրականացնել հետևողական քաղաքականություն պաշտոնատար անձանց կողմից բռնության դրսևորումների բոլոր դեպքերը խորը ուսումնասիրելու համար:
- Կատարել անհրաժեշտ գործողություններ և օպերատիվ հետախուզական միջոցառումներ՝ 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ հարուցված քրեական գործերի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ բացահայտման նպատակով:
- Դրսևորել առանձնակի հետևողականություն նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության օրենքով սահմանված ժամկետների

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

պահպանման նկատմամբ: Իրականացնել օպերատիվ միջոցառումներ նման տեսակի խախտումները կանխելու, իսկ փաստի առկայության դեպքում՝ անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով:

- Նախաձեռնողականություն ցուցաբերել՝ օրենսդրորեն ամրագրելու, որ Ծառայության կողմից ուսումնասիրված գործերը ավարտվեն վերջիններիս կողմից, այլ ոչ փոխանցվեն այլ մարմիններ, ինչպես նաև լայնացնել Ծառայության ենթակայության տակ գտնվող գործերի շրջանակը և հնարավորություն տրամադրել վերջիններիս, ըստ անհրաժեշտության, վարույթ ընդունել նաև այլ քննչական մարմիններին ենթակա գործերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ապահովելով պետական բյուջեի մուտքերը և հարկային ու մաքսային վարչարարությունը՝ իրականացնում է հարկ վճարողների սպասարկում, հարկ վճարողների հաշվառում, հարկերի և այլ պարտադիր վճարների հավաքման կազմակերպում, հարկ վճարողների բողոքների քննարկում և որոշումների ընդունում, վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարույթի իրականացում, ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ և տրանսպորտային միջոցներ տեղափոխելիս՝ մաքսասակագնային մեխանիզմների կիրառման, ներմուծման ու արտահանման սահմանված կարգի կիրառման ապահովում, մաքսային հսկողության ու ձևակերպումների կազմակերպում և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն:

2012 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մտահոգիչ են բազմաթիվ դեպքեր, երբ հարկային կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձինք միաժամանակ զբաղվում են նաև ձեռնարկատիրական գործունեությամբ: Առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ առանձին դեպքերում ՊԵԿ պաշտոնատար անձը (կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը) օգտագործել է պաշտոնական դիրքը, և իր հետ առնչվող ընկերությունը մրցակցային առավելություններ է ստացել միևնույն շուկայում գործող այլ տնտեսվարողի նկատմամբ:
- Հստակ և արդյունավետ միջոցներ չեն ձեռնարկվել ստվերային տնտեսությունը, հատկապես խոշոր բիզնեսում, էականորեն նվազեցնելու ուղղությամբ:
- 2012 թվականին գրանցվել են բազմաթիվ դեպքեր, երբ հարկային մարմնի աշխատակիցները, ստուգումներ իրականացնելիս, առանց բավարար հիմնավորումների և/կամ պատճառաբանության վերցրել են հարկատուների աշխատավայրում գտնվող իրերը:
- Նախքան հարկային արգելանքի կիրառումը չի իրականացվել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող այլ միջոցների սպառումը, որի հետևանքով կայացվել է չափազանց մեծ քանակի (շուրջ 5700) որոշումներ հարկային արգելանք կիրառելու վերաբերյալ:
- Հարկային ոլորտը կարգավորող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու դեպքում եղել են ողջամիտ ժամկետների նախատեսման մի շարք խախտումներ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- ՊԵԿ-ի կողմից հարկային և մաքսային ոլորտին վերաբերող օրենքների նախագծերի վերաբերյալ չեն կազմակերպվել ձեռնարկատերերի կամ այլ շահագրգիռ անձանց հետ պատշաճ հանրային քննարկումներ:
- Արձանագրվել են հարկային և մաքսային ծառայողների կողմից տնտեսվարողների հետ շփման ընթացքում էթիկայի և վարքագծի կանոնների խախտման մի շարք դեպքեր:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում պարզեցվել են ավելացված արժեքի հարկի գծով հարկային հարաբերությունները, որոշ ապրանքների ակցիզային հարկի հաշվարկումը և վճարումը, ներդրվել է պրոգրեսիվ եկամտային հարկային համակարգ, ինչպես նաև բարելավվել է սուբյեկտների համար հարկման համակարգը:
- Ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ հարկ վճարողների ներկայացրած հաշվարկների ու հաշվետվությունների վերլուծություններն ու ուսումնասիրությունները ժամանակին ու պատշաճ կատարելու և աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով:
- 2012 թվականին վերափոխվել են հարկային և մաքսային ծառայությունների կայքէջերը, որոնց մշակման համար կիրառվել են նոր մոտեցումներ և տեխնոլոգիաներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շարունակվում է չլուծված մնալ հարկային կամ մաքսային ծառայողների կողմից իրենց կատարվող աշխատանքի հետ համատեղ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու լրջագույն խնդիրը: Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը համապատասխանաբար սահմանում են, որ մաքսային ծառայողն իրավունք չունի զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, ինչպես նաև անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Նմանատիպ դրույթներ են նախատեսված նաև «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում: Հարկային և մաքսային ծառայողների նկատմամբ օրենքով կիրառվող սահմանափակումները ստեղծված են ապահովելու առողջ մրցակցությունը տնտեսության ոլորտում, ինչպես նաև բացառելու կոռուպցիոն դրսևորումները: Հարկային և մաքսային ծառայողների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը նաև առաջացնում է շահերի լրջագույն բախում: Մտահոգիչ է նաև, երբ ձեռնարկատիրական գործունեություն են ծավալում նշված մարմինների ծառայողների մտերիմ ազգականները և բարեկամները, և այն արդյունավետ չի վերահսկվում ոլորտի լիազոր մարմնի կողմից, որն էլ իր հերթին հանգեցնում է օրենսդրության տարատեսակ խախտումների: 2012 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից նախաձեռնած ոլորտի իրավապաշտպանների և մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում ստացվել են բազմաթիվ բողոքներ վերոնշյալ խնդրի վերաբերյալ:

2012 թվականին Հայաստանի Հանրապետությունում առկա ստվերային տնտեսության խնդիրը մնացել է չլուծված: ՊԵԿ-ը պարտավոր է ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնց շնորհիվ ստվերային տնտեսությունը կբերվի վերահսկելի օրինական

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

դաշտ, որով կնպաստի հարկային մուտքերի ավելացմանը և ունակ կլինի կատարել սոցիալական ծախսերը, որոնք այդքան մեծ նշանակություն ունեն: Ըստ մեր աղբյուրների ՀՀ-ում ստվերային տնտեսությունը լրջագույն մաս է կազմում մոտ երեսունհինգից-քառասունհինգ տոկոս (35-45%): Տնտեսության ստվերայնությունը պայմանավորող հիմնական գործոններն են՝ կոռուպցիան, հարկային դաշտը, բազմաթիվ օրենսդրական բացերը, համակարգի ոչ արդյունավետ աշխատանքը և այլն: Միայն այս գործոնների վերացման արդյունքում հնարավոր կլինի Հայաստանի Հանրապետությունում նվազեցնել ստվերային տնտեսությունը և դրա շնորհիվ գրանցել երկրում զգալի տնտեսական աճ: Սակայն, դեռևս ոլորտի լիազոր մարմնի կողմից արդյունավետ միջոցառումներ չեն իրականացվել, որի մասին վկայում է ստվերային տնտեսության տոկոսը:

Ստացվել են նաև բողոքներ, երբ հարկային մարմնի կողմից ստուգումներ իրականացնելիս առանց բավարար հիմնավորումների և/կամ պատճառաբանությամբ վերցվել են հարկատուների աշխատավայրում գտնվող իրերը, օրինակ՝ համակարգիչը և այլն: Հարկային մարմնի տվյալ լիազորությունը կարող է հանգեցնել անձանց տնտեսական գործունեության ազատության և սեփականության տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու անհիմն սահմանափակման: «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «զ» կետը նախատեսում է, որ ստուգումն իրականացնող անձինք կարող են ցանկացած դեպքում «վերցնել» իրեր, եթե դրանք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին: Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ ստուգման նպատակը տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելն է: Նշված սահմանումից պարզ չէ թե, որ դեպքում կարող է անձի իրը անմիջականորեն առնչվել ստուգման նպատակների հետ և թե ինչպես է դա որոշվում: Այսինքն, հստակ չափորոշիչների բացակայության դեպքում, ստուգումն իրականացնող անձինք կարող են «վերցնել» իրեր նույնիսկ այն դեպքում, երբ բացակայում է որևէ հիմնավորված կասկած, որ տնտեսվարող սուբյեկտը թույլ է տվել խախտում կամ նշված իրը ստուգումների իրականացման համար որևէ էական նշանակություն կարող է ունենալ: Պարզ չէ նաև, թե ինչ չափորոշիչների հիման վրա է որոշվում, արդյոք ստուգումն իրականացնող անձի կողմից վերցված իրերը խոչընդոտում են տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին, թե՝ ոչ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածով նախատեսվում է հարկային մարմնի հարկ վճարողի գույքի արգելադրման ինստիտուտը: Միայն 2012 թվականի ընթացքում հարկային մարմնի կողմից կայացվել են պարտավորություններ ունեցող հարկ վճարողների գույքի և դրամական միջոցների նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ թվով 5715 որոշումներ: ՀՀ Սահմանադրությամբ և մի շարք միջազգային պայմանագրերով սահմանվում է յուրաքանչյուրի իրավունքը՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է նաև, որ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանությունները պարզվել էր, որ «զրկել» եզրույթը ենթադրում է ոչ միայն սեփականության իրավունքի դադարում, այլև

այնպիսի սահմանափակում, որի արդյունքում սեփականատերը զրկվում է իրեն պատկանող գույքը իր հայեցողությամբ տիրապետելու, ըստ նշանակության օգտագործելու և այն տնօրինելու հնարավորությունից: Իսկ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթի բովանդակության համաձայն՝ անձին «զրկել» սեփականությունից հնարավոր է միայն դատական կարգով, այն էլ՝ օրենքով նախատեսված դեպքերում: Ավելին «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի համաձայն՝ գույքի արգելադրման մասին որոշման ժամկետն է 1 ամիս և պարզ չէ, թե ինչ նպատակ է հետապնդվում, երբ նախատեսվում է վարչական մարմնի կողմից կայացրած որոշման տևողությունը 1 ամիս: Անհրաժեշտ է նաև անդրադառնալ այն հարցին, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքում ամրագրված չեն այն հստակ չափորոշիչները, որոնց հիման վրա կայացվում է գույքի վրա արգելանք դնելու մասին հարկային մարմնի որոշումը: Ավելին, օրենքով նախատեսված է, որ այդ որոշում կայացնելը հարկային մարմնի իրավունքն է: Այսինքն, հստակ չափորոշիչների բացակայության, ինչպես նաև վարչական մարմնի ցանկության և/կամ գնահատման հիման վրա՝ անձի սեփականության իրավունքը սահմանափակող (զրկող) որոշումները խթանում են այնպիսի իրավիճակի առաջացմանը, երբ հնարավոր են չարաշահումներ և խտրական վերաբերմունքի դրսևորումներ անձանց հանդեպ: Չնայած ՀՀ օրենսդրության պահանջներին, գործնականում հարկային մարմնի կողմից գույքի նկատմամբ արգելանքը կիրառվել է առանց հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցների սպառման: Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր հարցադրումները և Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքները այս հարցի վերաբերյալ՝ վիճահարույց խնդիրը պարզելու նպատակով 2012 թվականին Պաշտպանը դիմում է ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանը իր որոշման մեջ նշել է, որ գույքի նկատմամբ արգելանքի կիրառումը պետք է իրականացվի միայն հարկային պարտավորությունների կատարումն ապահովող այլ հնարավորությունների սպառման պարագայում և խիստ վերահսկելի ձևով: Այսինքն, հարկային մարմնի կողմից գույքի նկատմամբ արգելանքը կարող է կիրառվել միայն այլ՝ տույժեր, կրկնապատկվող տույժեր և այլ հնարավորությունների սպառման դեպքում և իրականացվելու է միայն դատական խիստ վերահսկողության պարագայում:

Հարկային օրենսդրության առաջարկվող որոշ փոփոխություններ չեն համապատասխանել ՀՀ օրենսդրության պահանջներին: Այսպես, «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի և «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի համար նախատեսվել էր ուժի մեջ մտնելու կոնկրետ ժամկետ՝ 2013 թվականի հունվարի 1-ը: Այնինչ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց համար պարտականություններ սահմանող, ինչպես նաև դրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, եթե այդ նորմատիվ իրավական ակտերով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ կամ եթե սույն օրենքով ուղղակի այլ բան նախատեսված չէ: Իսկ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հարկի դրույքաչափի փոփոխություն, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները, եթե դրանք պարունակում են հարկ վճարողի գործելու պայմանները խստացնող դրույթներ, ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակումից ոչ շուտ, քան 30 օր հետո: Պատահական չէ, որ վերոնշյալ իրավական ակտերով նախատեսվում են այնպիսի ժամկետներ, որոնք կարող են հանդիսանալ ողջամիտ տնտեսվարող սուբյեկտների համար: Ուստի՝ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի և «Ակցիզային հարկի մասին» ՀՀ

օրենքների ուժի մեջ մտնելու ժամկետները չեն կարող դիտարկվել ողջամիտ՝ առաջացնելով, արդյունքում, անհարկի բարդություններ հարկային հարաբերությունների սուբյեկտների համար:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է, որ օրենքի նախագիծ մշակող մարմինը, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկումն այդ նախագծի վերաբերյալ ապահովելու նպատակով, նախագծի ազդեցության գնահատողներին ներկայացնելու հետ մեկտեղ պարտավորվում է կազմակերպել նաև հանրային քննարկումներ: 2012 թվականին տեղի ունեցան համակարգային փոփոխություններ՝ հարկային ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտերում: Հաշվի առնելով այն, որ այդ հարկային օրենսդրության փոփոխությունների փաթեթը ամբողջությամբ վերաբերում էր հարկային իրավահարաբերություններին, նախքան այն շրջանառության մեջ դնելը ՊԵԿ-ը պարտավորվում էր այդ փաթեթի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ: Սակայն ՊԵԿ-ի կողմից հասարակական կազմակերպությունների կամ այլ շահագրգիռ անձանց հետ պատշաճ քննարկումներ չեն կազմակերպվել և վերջիններիս կողմից ներկայացված դիտողությունները և/կամ առաջարկությունները հաշվի չեն առնվել: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ մի շարք հասարակական կազմակերպություններ Պաշտպանին հասցեագրել էին բողոքներ ՊԵԿ-ի կողմից պատշաճ հանրային քննարկումներ չանցկացնելու, ինչպես նաև վերոնշյալ փաթեթով առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ: Նման դեպքերում ոչ միայն չեն պահպանվում ՀՀ օրենսդրության պահանջները, այլև բնակչության իրազեկվածության բարձրացման համար ստեղծվում են արհեստական խոչընդոտներ: Ի պատասխան մեր հարցմանը ՊԵԿ-ից հայտնել էին, որ 2012 թվականի ընթացքում պարբերաբար կազմակերպվել են իրազեկման միջոցառումներ (ժողովներ, հանդիպումներ, սեմինարներ)՝ հարկային և մաքսային օրենսդրության և վարչարարության առավել հրատապ թեմաներով, սակայն նշված իրազեկման միջոցառումները պետք է իրականացվեն ոչ միայն առավել հրատապ, այլև ընդհանուր բնույթ կրող հարկային և մաքսային օրենսդրության և վարչարարության թեմաներով: Ավելին, նշված միջոցառումները պետք է մշտապես կրեն շարունակական և կայուն բնույթ:

Ողջունելի է այն, որ 2012 թվականին տեղի ունեցած հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում պարզեցվեցին ավելացված արժեքի հարկի գծով հարկային հարաբերությունները, որոշ ապրանքների ակցիզային հարկի հաշվարկումը և վճարումը, ներդրվեց պրոգրեսիվ եկամտային հարկային համակարգ, ինչպես նաև բարելավվեց սուբյեկտների համար հարկման համակարգը: Սակայն անհրաժեշտ ենք համարում, որ փոփոխությունները ուղղված լինեն Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը և առկա խոչընդոտների վերացման: Մեր կողմից ուսումնասիրվել են նաև մի շարք բողոքներ, որոնք վերաբերվել են հարկային տեսչության կողմից անձանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ոչ իրավաչափորեն սահմանափակմանը: Այսպես, «Էլագրա» ՍՊԸ-ն զրկված էր առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեություն իրականացնելու իր իրավունքից, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Իջևանի տարածքային հարկային տեսչության ոչ իրավաչափ գործողության և/կամ անգործության հետևանքով, մասնավորապես՝ առանց պատշաճ իրավական հիմքերի մերժել էր նրա գործունեություն սկսելու մասին տրված հայտարարություններն ու հսկիչ-դրամարկղային մեքենաների՝ հարկային մարմնում գրանցումը: Սակայն, «Էլագրա» ՍՊԸ-ի կողմից ամբողջությամբ պահպանվել էին առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեություն

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

սկսելու համար ՀՀ գործող օրենսդրության պահանջները, այդ թվում՝ ՀՀ մաքսային օրենսգրքով, «Պետական սահմանի մասին», «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջները: Նման գործողությունները խոչընդոտ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը:

Շարունակում են չլուծված մնալ որոշ խնդիրներ, որոնք վերաբերում են հարկային և մաքսային վարչարարությանը: Մասնավորապես, Պաշտպանի կողմից ստացվել են դիմում-բողոքներ կապված տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումներ իրականացնելու հետ, երբ տեղի է ունեցել օրենքով ամրագրված ստուգման ժամկետների խախտում, վերստուգում իրականացնելիս բացակայել են դրա հիմքերը, ինչպես նաև շատ դեպքերում ստուգում իրականացնող անձը չի կատարել «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված իր պարտականությունը՝ չխոչընդոտել տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին: Վերոնշյալ և վարչարարության հետ կապված այլ խնդիրները կարող են լուրջ խոչընդոտ հանդիսանալ տնտեսվարողների ազատ զարգացման համար: Խիստ մտահոգիչ ենք համարում նաև այն բողոքները համաձայն, որոնց հարկային և մաքսային ծառայողների կողմից անձանց հետ շփման ընթացքում էթիկայի և վարքագծի կանոնների խախտումներ են տեղի ունեցել: Նշվածը հիմնականում արտահայտվում է անձանց նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու միջոցով, օրինակ՝ վիրավորական արտահայտություններ են հնչեցվել, անձանց հետ շփվելիս օգտագործվել է «դու» անձնական դերանունը և այլն: Մտահոգիչ է նաև այն, որ չնայած հարկային և մաքսային ծառայողները իրենց գործունեությամբ պարտավոր են նպաստել իրենց զբաղեցրած պաշտոնի և իրենց կողմից ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը, գործնականում տեղի է ունեցել հակառակը: Նշված ծառայողների կողմից էթիկայի և վարքագծի կանոնների խախտման դեպքերը ունենում են ճիշտ հակառակ ազդեցությունը հասարակությունում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բացառել դեպքերը, երբ հարկային կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձինք զբաղվում են նաև ձեռնարկատիրական գործունեությամբ և պատասխանատվության ենթարկել Օրենսդրության պահանջները խախտողներին:
- Ձեռնարկվել հստակ միջոցներ Հայաստանի Հանրապետությունում ստվերային տնտեսությունը նվազեցնելու նպատակով:
- Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, որ հարկային մարմնի կողմից ստուգումներ իրականացնելիս միայն բավարար հիմնավորումների և/կամ պատճառաբանության առկայության դեպքում հնարավոր լինի վերցնել հարկատուների աշխատավայրում գտնվող իրերը, ինչպես նաև սահմանելով թե ինչ չափորոշիչների հիման վրա է որոշվում՝ արդյոք ստուգումն իրականացնող անձի կողմից վերցված իրերը խոչընդոտում են տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին, թե՝ ոչ :
- Գույքի նկատմամբ արգելանքը կիրառել միայն այլ՝ տույժեր, կրկնապատկվող տույժեր և այլ հնարավորությունների սպառման դեպքում:

- Հարկային ոլորտը կարգավորող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու դեպքում, առաջնորդվել ողջամիտ ժամկետներ նախատեսելու պայմանով:
- Օրենքների նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին ապահովել հասարակական կազմակերպությունների մասնակցությունը:
- Ձեռնարկել միջոցներ ուղղված հարկային օրենսդրության կատարելագործմանը, Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը և առկա խոչընդոտների վերացմանը:
- Միջոցներ ձեռնարկել հարկային և մաքսային վարչարարությանը վերաբերող խնդիրները վերացնելու ուղղությամբ, միաժամանակ իրականացնել մշտադիտարկում հարկային և մաքսային ծառայողների կողմից էթիկայի կանոնների պահպանման ոլորտում, իսկ խախտումներ հայտնաբերելիս՝ կիրառել պատասխանատվության միջոցներ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՄՓՈՓՈՒՄ

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը բարեխիղճ և ազատ մրցակցության համար ապահովում է անհրաժեշտ միջավայր, կանխարգելում, սահմանափակում և նախազգուշացնում է հակամրցակցային գործունեությունը, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ իրականացնում վերահսկողություն: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրացումը նպաստում է մարդկանց սոցիալ-տնտեսական իրավունքների առավել պաշտպանվածությանը:

2012 թվականին Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Քաղաքացիների սոցիալական վիճակի և տնտեսական իրավունքների ոտնահարման հիմնական պատճառը շարունակում է մնալ իրական և լիարժեք տնտեսական մրցակցության բացակայությունը:
- Հիմնականում հատվածական են ուսումնասիրվել հակամրցակցային դրսևորումները: Սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրվել և հանրությանը ներկայացվել են հաճախ միայն ոչ էական և ոչ համակարգային խնդիրներ հարուցող խախտումները:
- Բազմաթիվ գերիշխող դիրք ունեցող խոշոր բիզնեսների հակամրցակցային գործունեությունը չի վերհանվել և չեն ձեռնարկվել իրական և արդյունավետ քայլեր ազատ տնտեսության ձևավորման համար:
- Շարունակել է ցածր մնալ հասարակության կողմից Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկացվածության և վստահության մակարդակը, ինչի մասին է վկայում Հանձնաժողովին ներկայացված բողոքների սակավաթվությունը (ընդամենը՝ 28):

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Հանձնաժողովը ԵՄ անդամ երկրների գործընկերների հետ նախաձեռնել է տարբեր սեմինար-քննարկումներ ՀՀ «Պետական օժանդակության վերահսկման մասին» օրենքի նախագծերի մշակման ուղղությամբ:
- Հանձնաժողովի կողմից պետական գնումների ոլորտում կատարված ուսումնասիրության արդյունքում 2012 թվականի ընթացքում բացահայտվել են մի

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

շարք տնտեսվարող սուբյեկտների մասնակցությամբ հակամրցակցային համաձայնության դեպքեր:

- Հանձնաժողովն իր պաշտոնական կայքի միջոցով կազմակերպել և իրագործել է առցանց հարցումներ՝ մի շարք բնագավառներում բարեփոխումներ իրականացնելու նպատակով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2012 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից նախաձեռնած ոլորտի իրավապաշտպանների և մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում ստացվել են բազմաթիվ բողոքներ նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտման միջոցով գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից ներկայացրած տվյալներով 2012 թվականին արձանագրվել են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների՝ «Նատալի Ֆարմ» և «Սիթի Պետրոլ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտման միջոցով գերիշխող դիրքի չարաշահման 2 դեպքեր, ինչի կապակցությամբ նշված սուբյեկտների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ: Այնուամենայնիվ, խիստ մտահոգիչ, որ Հանձնաժողովը 2012 թվականին ուսումնասիրում և բացահայտում է Հայաստանի Հանրապետության մրցակցային օրենսդրության խախտումները նախորդ ժամանակաշրջանի՝ 2011 թվականի տվյալների հիման վրա: Նշվածը վկայում է այն մասին, որ Հանձնաժողովը չի ձեռնարկել բավարար միջոցներ տնտեսական մրցակցության ապահովման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում բարձրացնելու համար, քանի որ գործնականում 2012 թվականին առկա են եղել բազմաթիվ բողոքներ նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտման միջոցով գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ: Հակամենաշնորհային նման քաղաքականությունը չի կարող լուծել ոլորտում առկա խիստ մտահոգիչ խնդիրները և չի կարող խթանել Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ապահովումը:

Շարունակում է մտահոգիչ խնդիր մնալ տարբեր ապրանքային շուկաներում մրցակցային օրենսդրության խախտումների և շուկայում ապրանքատեսակների գների կտրուկ փոփոխությունների առկայությունը: Այն հարցին, թե արդյոք Հանձնաժողովը իրականացնում է մշտադիտարկում տվյալ ոլորտներում խախտման դեպքերը բացահայտելու, ինչպես նաև օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար, Հանձնաժողովը հայտնել է, որ մշտադիտարկում իրականացնելու համար վերջինս օրենսդրությամբ սահմանված իրավասություն չունի: Փոխարենը՝ Հանձնաժողովն իրականացնում է դիտանցում՝այսինքն՝ տարբեր ապրանքային շուկաներում գների նկատմամբ վերահսկողության իրականացման և մրցակցային օրենսդրության խախտման դեպքերի հայտնաբերմանն ուղղված գործողություններ, որի արդյունքները ապացույց են հանդիսանում մրցակցային օրենսդրության խախտման դեպքերի առիթով հարուցված վարչական վարույթների շրջանակներում: Հատկանշական է, որ մշտադիտարկումը և դիտանցումը, որպես վարչական մարմնի գործառույթ էապես չեն տարբերվում: Միևնույն

ժամանակ Հանձնաժողովը նշել է, որ դիտանցումն ուղղակի հիմք չի հանդիսանում վարչական վարույթի հարուցման համար: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական Հանձնաժողովն իր գործառույթներով հավասարեցված է վարչական մարմնի, ուստի մրցակցային օրենսդրության հնարավոր խախտման դեպքում Հանձնաժողովի կողմից վարույթ է հարուցվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով՝ անձի դիմումի, բողոքի հիման վրա և սեփական նախաձեռնությամբ: Այսպես, անձի դիմումի, բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում իրականացված դիտանցման արդյունքները հանդիսանում են տվյալ գործի փաստական հանգամանքների բացահայտմանն ուղղված ապացույց: Իսկ հաշվի առնելով, որ սեփական նախաձեռնությամբ վարույթի հարուցման դեպքում դիտանցման արդյունքները կարող են անուղղակի հիմք հանդիսանալ սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցման, և արդեն օրենսդրությամբ նախատեսված գործառույթներ իրականացնել խնդրի ուսումնասիրության համար, այդ դեպքում անհասկանալի է Հանձնաժողովի որդեգրած քաղաքականությունը, համաձայն որի դիտանցման արդյունքները չեն կարող հիմք հանդիսանալ վարչական վարույթի հարուցման համար: Ավելին, նման քաղաքականությունը ամբողջությամբ իմաստազրկում է դիտանցման անցկացման նպատակն ու դրա ընթացքում ստացված արդյունքները:

Հանձնաժողովի կողմից պետական գնումների ոլորտում կատարված ուսումնասիրության արդյունքում 2012 թվականի ընթացքում բացահայտվել են բուժհաստատությունների, ինչպես նաև դեղերի շրջանառության բնագավառում գործունեություն իրականացնող մի շարք տնտեսվարող սուբյեկտների մասնակցությամբ հակամրցակցային համաձայնության դեպքեր, և այդ սուբյեկտների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ: Սակայն Հանձնաժողովի կողմից ձեռնարկված միջոցները բավարար չեն եղել հակամրցակցային գործողությունների դրսևորման դեպքերի կանխարգելման և վերացման համար: Հարկ է նշել նաև, որ 2012 թվականին Հանձնաժողովի կողմից ուսումնասիրություն է սկսվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների, մանկատների, ծերանոցների, գիշերօթիկ և մի շարք այլ հաստատությունների կողմից կազմակերպվող գնումների գործընթացում տարբեր տնտեսվարող սուբյեկտների կողմից հնարավոր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման ուղղությամբ: Սակայն բոլոր այդ գործերը դեռևս ընթացիկ փուլում են գտնվում և որևէ օրինախախտ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ պատասխանատվության միջոց չի կիրառվել:

Խիստ մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ 2012 թվականի ընթացքում քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողով է ներկայացվել ընդամենը 28 դիմում-բողոք, որոնց հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով նախատեսված հիմքով: Նշվածը վկայում է հասարակության կողմից Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ ոչ բավարար տեղեկացվածության և վստահության պակասի մասին, քանի որ գործնականում անհամեմատ ավելի շատ են այս ոլորտում թե խնդիրները և թե անձանց բողոքները:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշակել և իրականացնել արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականություն: Մշակել մեխանիզմներ, որոնց օգնությամբ ոլորտում առկա խախտումների բացահայտման և դրանց ուսումնասիրման գործընթացը յուրաքանչյուր տարվա համար կիրականացվի այդ տարվա տվյալների հիման վրա՝ այդ կերպ ապահովելով Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը:
- Հետամուտ լինել ոլորտում առկա օրենսդրական խախտումների բացահայտման գործում և միջոցներ ձեռնարկել խախտումների վերաբերյալ դիտանցման արդյունքներով ձեռք բերված տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու ուղղությամբ:
- Իրականացնել Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցման արդյունքների հաշվառում և դրանք հանրությանը հասանելի դարձնել՝ այդ կերպ ապահովելով Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը:
- Անհրաժեշտ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել անբարեխիղճ մրցակցության դեպքերի հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ:
- Ապահովել տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի և վերջինիս իրավասության շրջանակների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացումը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության խնդիրներն ու նպատակներն են խթանել տնտեսության ձևավորումն ու նորարարությունը, ապահովել մրցակցային տնտեսության պայմանների ու սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացումը, ինչպես նաև մասնակցել զբոսաշրջության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, նվազեցնել տարածքային զարգացման անհամաչափությունները: Բացի այդ, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը կոչված է մասնակցելու գործարարության, ներդրումների և արտահանման խթանմանը, գործարարության համար բարենպաստ և մրցունակ միջավայրի ապահովմանը, ինչպես նաև բարձրարժեք ծառայություններ մատուցող ոլորտների զարգացմանը:

2012 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Դեռևս բավարար չէ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված արդյունավետ օրենսդրական և այլ մեխանիզմների ներդրումը:
- Բազմաթիվ դեպքեր են արձանագրվել կապված լիցենզավորման և թույլտվությունների գործակալության կողմից լիցենզիաների տրամադրման ընթացքում ոչ միասնական մոտեցում ցուցաբերելու դեպքերը կանխելու ուղղությամբ բավարար միջոցառումների կիրառման բացակայության հետ:
- Չեն իրականացվել անհրաժեշտ միջոցառումներ տնտեսության ավանդական ոլորտների զարգացումն ապահովելու և դրանք վերացումից պաշտպանելու համար:
- Բազմաթիվ խախտումներ են արձանագրվել ապրանքների պարտադիր մակնշմանն առաջադրվող պահանջների պահպանման վերաբերյալ:
- Խիստ մտահոգիչ է սպառողների իրավունքների ապահովման և պաշտպանության բնագավառում անհրաժեշտ համալիր միջոցառումների իրականացման արդյունավետության ցածր մակարդակը:
- Մի շարք թերություններ են գրանցվել տեխնիկական կանոնակարգերի պահանջները և չափագիտական կանոններն ու նորմերը չպահպանելու կապակցությամբ:
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով հանրապետական սփռման հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու համար սահմանված պետական տուրքը գանձվում է նաև փաստացի առանց նոր թվային տեխնոլոգիաների կիրառման հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններից:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- 2012թ. ընթացքում զբոսաշրջության զարգացման բնագավառում Նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ:
- Տարբեր ոլորտներում իրավախախտում թույլ տված մի շարք տնտեսավարող սուբյեկտներ ենթարկվել են պատասխանատվության:
- Նախարարությունը քաղաքացիների կողմից ստացել է 56 շնորհակալական նամակներ «Թեժ գիծ» ծառայության կողմից համապատասխան արձագանք ստանալու կապակցությամբ:
- Ողջունելի է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ որդեգրած պետական քաղաքականությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շարունակվում են չլուծված մնալ փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացման հիմնախնդիրները: Խոսքը, հատկապես վերաբերում է վերջիններիս համար հարկային բեռի անհամաչափությանը: Այսպես, ոլորտում ձեռնարկված բարեփոխումների արդյունքում 19.12.2012թ.-ին ընդունված «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի (այսուհետ՝ իրացման շրջանառություն), չի գերազանցել 58,35 մլն դրամը: Իսկ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը հստակորեն նշում է այն չափանիշները, ըստ որոնց՝ ՀՀ-ում ձեռնարկատիրությունը դասակարգում է ըստ մեծության, մասնավորապես՝ ՀՀ-ում գերփոքր ՓՄՁ սուբյեկտներ են այն առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը: Փոքր ՓՄՁ սուբյեկտներ են առևտրային կազմակերպություններն և անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը, իսկ միջին ՓՄՁ սուբյեկտներ են առևտրային կազմակերպություններն և անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը: Ելնելով վերոգրյալից՝ հայտնի չէ, թե ինչ չափանիշներով է որոշվել «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառման 58,35 մլն դրամի նվազագույն շեմը: Հաշվի առնելով այն, որ ՀՀ-ում ձեռնարկությունների մեծ մասը փոքր ձեռնարկատիրություն է՝ հարկային բեռի մեծ մասը նրա վրա է ընկնում: Միաժամանակ, կատարված բարեփոխումների արդյունքը չի երևում, և այդ խմբի տնտեսվարողները միշտ տուժում են, քանի որ 2012 թվականին ընդունված

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքը, վերջինիս 2-րդ հոդվածի ուժով, ամբողջ ծավալով կիրառելի չէ նույնիսկ գերփոքր ձեռնարկությունների նկատմամբ: Այնինչ, որպես ոլորտի լիազոր մարմին՝ Նախարարության խնդիրներից է մրցակցային տնտեսության զարգացման պայմանների ապահովումը, իսկ անմիջական գործառույթներից է ձեռներեցության ոլորտում կազմակերպությունների և ձեռնարկատիրության պետական աջակցության քաղաքականության մշակումը, ինչը, ըստ փաստացի արձանագրված արդյունքների, անբավարար է:

Նախարարության կողմից հայտնած տեղեկությունների համաձայն՝ լիցենզավորման և թույլտվությունների գործակալության կողմից լիցենզիաների տրամադրման ընթացքում ոչ միասնական մոտեցում ցուցաբերելու դեպքեր չեն գրանցվել, սակայն մասնագետների կարծիքով, առևտրի իրականացման վայրի կազմակերպման ընթացքում այլոց իրավունքների ու ազատությունների հնարավոր խախտմանը հանգեցնող հանգամանքների ուսումնասիրության և գնահատման գործընթացում չի ցուցաբերվել միասնական մոտեցում: Ոլորտի խտրական մոտեցման դրսևորումները, շատ հաճախ, ակնհայտ չեն, ուստի, դրանց ի հայտ բերելու նպատակով, անհրաժեշտ է ձևավորել հստակ ուղղվածությամբ մեխանիզմ՝ անձանց սահմանադրական իրավունքի խախտումը բացառելու նպատակով:

Ողջունելի է այն հանգամանքը, որ Նախարարությունը շարունակում է միջոցներ ձեռնարկել հանրապետության տնտեսության ավանդական ոլորտներից երկուսի՝ ակնագործության և ոսկերչության զարգացման ուղղությամբ: Սակայն խիստ մտահոգիչ է, որ տնտեսության մնացած այլ ավանդական ոլորտների զարգացման համար միջոցներ չեն ձեռնարկվում, ինչը լուրջ խոչընդոտներ է ստեղծում տնտեսության համաչափ զարգացման համար: Կազմակերպությունների և ձեռնարկատիրության պետական աջակցության քաղաքականության մշակման ընթացքում անհրաժեշտ է, որպեսզի Նախարարությունը պատշաճ ուշադրություն դարձնի նաև տնտեսության ավանդական այլ ոլորտներին, ինչպիսիք են օրինակ՝ գորգագործությունը, գինեգործությունը և այլն, որոնք գտնվում են բարձիթողի վիճակում:

2012 թվականին արդի խնդիրներից է շարունակում մնալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ապրանքների պարտադիր մակնշմանն առաջադրվող պահանջների չպահպանման և/կամ խախտման բազմաթիվ դեպքերը: 2012 թվականի ընթացքում Նախարարության շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության կողմից ոչ պարենային ապրանքների մակնշման, օգտագործման և պահպանման պահանջների խախտման ուղղությամբ ստուգումների իրականացման ընթացքում արձանագրվել է 16 դեպք և իրավախախտում թույլ տված տնտեսավարող սուբյեկտները ենթարկվել են պատասխանատվության՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի դրույթներին համապատասխան (այսուհետ՝ ՎԻՎՕ): Այսպես, ՎԻՎՕ դրույթների համաձայն՝ խախտում թույլ տված տնտեսվարող սուբյեկտներին տրվել են տարբեր տեսակի հանձնարարագրեր, մասնավորապես՝ արտադրանքի իրացումը կասեցնելու, արգելելու, արտադրանքը շրջանառությունից հանելու, սպառողներին այդ մասին տեղեկացնելու և սպառողներից արտադրանքը հետ վերցնելու, կարգադրագրեր՝ չստուգաչափված չափման միջոցների շահագործումը արգելելու մասին: Ապրանքների մակնշման պահանջի ու դրա կիրառման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացման անհրաժեշտությունը և կարևորությունը պայմանավորված է սպառողների իրազեկման իրավունքի ապահովմամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են սպառողների իրավունքները և շահերը, սակայն գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ վերոգրյալ իրավունքները խախտվում են անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից: Նախարարության գործունեության ոլորտում առկա հիմնական բացերը և/կամ թերացումները վերաբերում են հենց սպառողների իրավունքների ապահովման և պաշտպանության ոլորտին: Մասնավորապես, Նախարարությունը հայտնել է տնտեսվարող սուբյեկտների կողմից ծառայությունների մատուցման վերաբերյալ դիմում բողոքների բացակայության մասին: Սակայն արդի է մնում տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքի վաճառքի դեպքում դրա ետ չընդունելու խնդիրը (արձանագրվել են նույնիսկ դեպքեր, երբ տնտեսվարող սուբյեկտները վաճառքի կետերում փակցրել են ապրանքը ետ չընդունելու մասին գրառումներ): ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 517-րդ հոդվածի համաձայն՝ գնորդն իրավունք ունի ոչ պարենային ապրանքն իրեն հանձնելու պահից 14 օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել, գնված ապրանքն այն գնելու կամ վաճառողի հայտարարած այլ վայրում փոխարինել այլ չափի, ձևի, գույնի կամ համանման կոմպլեկտայնության ապրանքով՝ գնի տարբերության դեպքում անհրաժեշտ վերահաշվարկ կատարելով վաճառողի հետ: Ավելին, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ սպառողն իրավունք ունի արտադրողին վերադարձնել ոչ պատշաճ որակի ապրանքը և հետ պահանջել դրա համար վճարված գումարը: Սակայն վերոնշյալ դրույթները գործնականում անտեսվում են և պատշաճ չեն կատարվում բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների կողմից: Հաշվի առնելով, որ այս ոլորտի պատասխանատու մարմինը հանդիսանում է Նախարարությունը, վերջինիս կողմից պետք է նախաձեռնողականություն դրսևորվի անհրաժեշտ համալիր միջոցառումների իրականացման համար՝ վերոնշյալ խնդրի վերացման նպատակով:

Ողջունելի է այն, որ Նախարարության նպատակները, գործող օրենսդրությունը և իրականացվող գործառույթները, ինչպես նաև սպառողների իրավունքների վերաբերյալ այլ տեղեկատվությունը զետեղված է Նախարարության պաշտոնական կայքէջում, որը նպատակ է հետապնդում բարձրացնել սպառողների իրազեկվածության մակարդակը: Գործում է նաև «Թեժ գիծ» ծառայություն, որը 2012 թվականի ընթացքում սպառողներից և սպառողների շահերի պաշտպանության հասարակական կազմակերպություններից ստացել է 60 դիմում-բողոք, որին Նախարարության համապատասխան տեսչությունների կողմից տրվել է պատշաճ ընթացք: Սակայն տվյալ ծառայության և սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության վերաբերյալ հանրության իրազեկման բարձրացման անհրաժեշտությունը դեռևս առկա է, քանզի բավարար չեն Նախարարության կողմից ձեռնարկված միջոցները այդ ուղղությամբ, ինչպես նաև անհրաժեշտ է քայլեր կատարել նման միջոցների իրականացման շարունակականությունը և քաղաքացիների առավել լայն շրջանակի իրազեկվածությունը ապահովելու համար:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ Նախարարության աշխատակազմի շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության կողմից 2012 թվականի ընթացքում տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների և նորմերի պահպանման պետական վերահսկողության իրականացման ընթացքում հայտնաբերվել է 304 խախտում 211 տնտեսվարող սուբյեկտների մոտ: Դա վկայում է այն մասին, որ Նախարարությունը բավարար միջոցներ չի ներդնում տնտեսվարող սուբյեկտների կողմից տեխնիկական կանոնակարգերի պահանջները և չափագիտական կանոններն ու նորմերը պահպանելու ուղղությամբ: Պարզ չէ նաև Նախարարության

որդեգրած քաղաքականությունը խախտումներ թույլ տված տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու մասով:

Պաշտպանին հասցեագրվել է դիմում-բողոք, որը վերաբերել է հեռուստահաղորդումների հեռարձակում իրականացնելու համար պետական բյուջե վճարվող պետական տուրքի չափին, մասնավորապես՝ 16.09.2010թ. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների ուժով հանրապետական սփռման հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի 20.000-ապատիկի չափով՝ մինչ այդ գործող բազային տուրքի 300-ապատիկի չափի փոխարեն: Վերոնշյալ փոփոխությունը պայմանավորված էր «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման անցման ժամանակաշրջանի համար տարեկան պետական տուրքի վճարման մասով հեռուստածրագրերի եթերային հեռարձակման լիցենզիայի տրամադրմամբ: Ողջունելի է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ տարվող պետական քաղաքականությունը, սակայն վերոնշյալ դեպքում առաջ է գալիս լրջագույն խնդիր, քանի որ տվյալ տուրքի վճարումն արդարացված չէ այն հեռուստաընկերությունների համար, որոնք, չնայած այն հանգամանքին, որ վճարում են պետական տուրքը՝ հեռուստահաղորդումները թվային հեռարձակմամբ ցուցադրելու նպատակով, սակայն հնարավոր է, որ դեռ չեն իրականացրել նույնիսկ տեխնիկական բազայի փոփոխման, ազդանշանի ձևավորման և հաղորդման նոր թվային տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ որևէ գործողություն: Նշված իրավիճակում անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել ոլորտում ծագած անճշտությունների շտկման ուղղությամբ, հաշվի առնելով բոլոր հեռուստաընկերությունների իրավաչափ շահը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշակել և գործարկել հստակ և արդյունավետ օրենսդրական մեխանիզմներ ապահովելու համար հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը՝ հատկապես նվազեցնելով տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվող անհամաչափ բարձր հարկային բեռը:
- Լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման ընթացքում ցուցաբերել միասնական մոտեցում:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ տնտեսության ավանդական ոլորտների զարգացումն ապահովելու և ձեռնարկությունների բացը ՀՀ տնտեսության մեջ լրացնելու համար:
- Ձեռնարկել միջոցներ ապրանքների մակնշման պահանջի ու դրա կիրառման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:
- Միջոցներ ձեռնարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ սպառողների իրավունքներին վերաբերող դրույթները արդյունավետ իրականացնելու, կատարված խախտումները հայտնաբերելու և իրավախախտների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ:

- Ապահովել սպառողների լայն շրջանակի իրազեկվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ իրականացվող միջոցառումների շարունակականությունը:
- Իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջների, չափագիտական կանոնների և նորմերի խախտումները կանխարգելելու նպատակով:
- Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ հանրապետական սփռման հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու համար սահմանված պետական տուրքի՝ բազային տուրքի 20.000-ապատիկի չափը՝ թվային տեխնոլոգիաների բացակայության պարագայում հեռուստաընկերությունների նկատմամբ չկիրառելու վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը մշակում և իրականացնում է ագրոպարենային ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականությունը, ապահովում է գյուղատնտեսական գործունեության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը, իրականացնում է սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականությունը:

2012 թվականին ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Թեև 2012 թվականին գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով վարկեր, սակայն գործնականում չեն պահպանվել հաստատված տոկոսադրույքները և գյուղացիների վրա դրվել է ավելորդ բեռ:
- 2012 թվականին Նախարարության կողմից սեփական նախաձեռնությամբ չեն իրականացվել դիտարկումներ սննդամթերքի անվտանգության վերահսկման նպատակով, ինչը որոշակի ոչ բավարար ծավալներով սկսվել է միայն տարեվերջին:
- Օրենքով որպես պարտադիր պահանջ չի նախատեսվել գյուղատնտեսական կենդանիների մորթը սպանդանոցներում իրականացնելը:
- Նախատեսված ժամկետների խախտմամբ է իրականացվել ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից սկսած «Աջակցություն Հայաստանում սպանդանոցների զարգացմանը» ծրագիրը:
- Ոլորտի կարևորագույն խնդիրներից է շարունակում մնալ գյուղատնտեսական ապահովագրության ինստիտուտի բացակայությունը:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- 2012 թվականի ընթացքում իրականացվել են պլանային ստուգումներ, մասնավորապես՝ հացամթերքի շուկայում, և մի շարք իրավախախտ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել են վարչական տույժեր:
- ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության շրջանակներում նախատեսվում է «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ծրագրի իրականացումը»:
- ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) աջակցությամբ պայմանագրեր են կնքվել հինգ կազմակերպությունների հետ ՀՀ տարբեր մարզերում սպանդանոցներ հիմնելու նպատակով:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության կողմից հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին» համապատասխան՝ գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող տնտեսվարողներին վարկավորման նպատակով գյուղատնտեսության ոլորտի համար հատկացվել են 14 % տոկոսադրույքով վարկեր, որոնց 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է պետության կողմից, իսկ առավել աղքատ (անբարենպաստ) 225 համայնքների համար կրկին պետության կողմից սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը: Պաշտպանի կողմից ստացված բողոքների համաձայն՝ տրամադրվող վարկերի սուբսիդավորված տոկոսադրույքները ոչ միշտ են պահպանվել և հաճախ գյուղացիները ստիպված են եղել պայմանագրում նախատեսված 10 կամ 8 տոկոսադրույքով ստացված վարկի փոխարեն վճարել 14 տոկոսադրույքով: Ավելին, բողոքների համաձայն՝ նշված վարկերը եղել են կարճաժամկետ և նման տոկոսադրույք գործնականում կիրառելը և/կամ պահանջելը գյուղացիների համար հանդիսացել է խիստ անհամաչափ ծանր նյութական բեռ, որի հետևանքով սահմանափակվել է վերջիններիս աշխատանքի ընտրության ազատությունը:

Նախարարության կազմում 2011 թվականին ստեղծված Սննդամթերքի անվտանգության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից 2012 թվականի ընթացքում իրականացվել են պլանային ստուգումներ, մասնավորապես՝ հացամթերքի շուկայում: Ողջունելի է այն հանգամանքը, որ հացամթերք արտադրող մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարված խախտումների բացահայտման արդյունքում վերջիններիս նկատմամբ կիրառվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական տույժեր: Այնուամենայնիվ, Ծառայությունը չի հայտնել, թե հացամթերքի շուկայից բացի, որ այլ ոլորտներում է իրականացրել ստուգումներ, և իրականացնելու դեպքում արձանագրվել են արդյոք խախտումներ, պատասխանատվության ինչ միջոցներ են կիրառվել և կանխարգելիչ ինչ միջոցներ են ձեռնարկվել հետագայում նման խախտումների բացառման նպատակով: Մտահոգիչ է նաև այն, որ սննդամթերքի անվտանգության վերահսկման նպատակով Ծառայությունը, ստացված դիմում-բողոքների, ահազանգերի և այլ տեղեկատվության հիման վրա դիտարկումներ կատարելուց զատ, սեփական նախաձեռնությամբ չի իրականացրել դիտարկումներ, այնինչ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի դրույթների ուսումնասիրությունից հետևում է, որ դիտարկումներն իրականացվում են լիազոր մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, իսկ վերջինիս ընդունման համար օրենքով սահմանված չեն որևէ նախապայմաններ: Չնայած Ծառայության կողմից տրված ողջ վերոնշյալ տեղեկատվությանը, վերջիններիս կողմից իրականացված ստուգումների ու դիտարկումների արդյունքում կոնկրետ խնդիրների վերհանում և դրանց լուծման համար առաջարկությունների ներկայացում՝ առանձին մարզերում և Երևանում չի իրականացվել: Արդյունքում, Ծառայության կողմից սննդամթերքի անվտանգության ոլորտում կատարված վերահսկողությունը լիարժեք չի կարող համարվել:

Միջազգային փորձում ընդունված է սպանդանոցային ցանցի ստեղծումը՝ անորակ մսի իրացումը կանխելու և սպառողների իրավունքները լիարժեք պաշտպանելու համար՝ հաշվի առնելով բակային մորթի հետ կապված վտանգները: Ողջունելի է այն, որ այս խնդրի

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

կապակցությամբ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) և Հունաստանի կառավարության աջակցությամբ՝ 2012 թվականի դեկտեմբերին հինգ մասնավոր ընկերությունների հետ կնքվել են պայմանագրեր Հայաստանի տարբեր մարզերում ժամանակակից հինգ մոդելային սպանդանոցներ հիմնելու համար և Հայաստանում սպանդանոցների զարգացման, ինչպես նաև միս և մսամթերք արտադրող կազմակերպությունների արտադրությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանեցնելու նպատակով՝ չնայած այն հանգամանքին, որ ՊԳԿ-ի կողմից սկսած «Աջակցություն Հայաստանում սպանդանոցների զարգացմանը» ծրագիրը պաշտոնապես հաստատվել է Հունաստանի կառավարության կողմից դեռևս 2009 թվականի փետրվարին և նախատեսված էր իրականացվելու 3 տարվա ընթացքում: Սպանդանոցային ցանցի բացակայությունը գործնականում անկատար է դարձնում «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ընդունված «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման պահանջները: Քանի որ վերոնշյալ ծրագիրը երկարաձգվել է մինչև 2013 թվականի օգոստոսը, անհրաժեշտ է հետևողական գտնվել մինչև նշված ժամկետն ապահովելու համար հինգ մոդելային սպանդանոցների լիարժեք շահագործումը:

2012 թվականի ընթացքում ստացվել են մի շարք բողոքներ, որոնք վերաբերել են սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման պահանջները չկատարելուն: Չնայած «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ընդունված «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման առկայությանը՝ անհրաժեշտ է նշել, որ գործնականում չեն կատարվում նշված իրավական ակտերի պահանջները, ինչը կարելի է պայմանավորել Կառավարության որոշմամբ ոչ հստակ մեխանիզմների սահմանմամբ և հանրապետությունում սպանդանոցների ցանցի բացակայությամբ: Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման պահանջները չկատարելը հանդիսանում է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված՝ տուգանքի ձևով վարչական պատասխանատվության ցածր չափերի արդյունք, այնինչ պիտանիության ժամկետն անցած և անհայտ ծագման մսամթերքի վաճառքի՝ գործնականում հաճախ հանդիպող դեպքերն իրական վտանգ են ներկայացնում սպառողի կյանքին ու առողջությանը: Գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման պահանջները կդադարեն դեկլարատիվ բնույթ կրել, եթե մորթը սպանդանոցներում իրականացնելն ամրագրվեր օրենքում՝ որպես պարտադիր պահանջ:

Դեռևս լրջագույն խնդիր է շարունակում մնալ գյուղատնտեսական ապահովագրության ինստիտուտի ներդրումն ու ոլորտը կարգավորող համապատասխան իրավական ակտերի ընդունումը: Այս խնդրի վերաբերյալ մեր գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը տեղեկացրել է, որ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունը բարձր ռիսկայնության ոլորտ է, որի պատճառով ապահովագրական ընկերությունների համար տնտեսական հետաքրքրություն չի ներկայացնում: Ըստ Նախարարության՝ դեռևս 2008 թվականին մշակվել է «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրման հայեցակարգի» նախագիծ, որում սահմանված են գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի փուլային ձևով ներդրման հիմնական մոտեցումները: Ընդ որում, համապատասխան հաշվարկային գնահատականներով հիմնավորվել է, որ գյուղա-

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

տնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրումը հնարավոր է ապահովագրավճարների առնվազն 50%-ի փոխհատուցման (պետություն, այլ աղբյուրներ) պայմաններում: Ըստ հայեցակարգի նախագծի՝ 2008 թվականի գներով հաշվարկված ապահովագրական վճարների չափը գնահատվել է ավելի քան 50 մլրդ դրամ և գյուղատնտեսությունում տնտեսավարողների ներկայիս վճարունակության պայմաններում իրատեսական չի համարվում նշված գումարին համարժեք ապահովագրական վճարների փոխհատուցումը: Նախարարության կողմից մշակված և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կարևորագույն խնդիրներից է «գյուղատնտեսական ռիսկերի մեղմացումը», որի բաղադրիչներից է գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման աջակցությունը: Վերջինիս հիման վրա Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկով նախատեսված է «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական ռիսկերի գնահատման ծրագրի և ապահովագրության փորձնական ծրագրի իրականացումը»: Միջոցառման կատարման ժամկետ է սահմանվել 2013-2020 թվականները: Ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների ցանկում ներառվել է նաև «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ծրագրի իրականացումը» միջոցառումը, որի իրականացումը նախատեսվում է 2017 թվականին և հետագա տարիներին: Չնայած ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հայտնված վերոնշյալ տեղեկատվությանը՝ խիստ մտահոգիչ է, որ մոտակա մի քանի տարիների ընթացքում չլուծված է մնալու գյուղատնտեսական ապահովագրության խնդիրը: Գյուղատնտեսական ապահովագրության բացակայության պայմաններում գյուղացին զրկվելու է բնական աղետների հետևանքով առաջացած վնասի համապատասխան փոխհատուցում ստանալու հնարավորությունից: Բացի այդ, պարզ չէ Նախարարության այն դիրքորոշումը, որ 2012 թվականին այս խնդրին չի տրվել լուծում այն պատճառով, որ Հայաստանի գյուղատնտեսությունը բարձր ռիսկայնության ոլորտ է: Բայց կան արդյոք երաշխիքներ, որ 2013 թվականից հետո այս ոլորտը ռիսկային չի հանդիսանա: Ուստի գտնում ենք, որ խնդիրը ոչ թե ռիսկայնության, այլ գյուղատնտեսության ոլորտում ընտրված ոչ արդյունավետ պետական քաղաքականության մեջ է, քանի որ ապահովագրության գործընթացը, ըստ էության, մշտապես կապված է ռիսկի հետ: Ավելին, այս խնդրին անդրադարձ էր կատարվել նաև ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության երկրորդ և երրորդ պարբերական համատեղ զեկույցում, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը շարունակում է մնալ բավականին խոցելի, և հատուկ շեշտվել էր, որ ոլորտի ապահովագրությունը կարող է մեծապես նպաստել գյուղատնտեսության զարգացմանը, երաշխավորել գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց աշխատանքի ընտրության ազատության իրավունքը, քանի որ հակառակ դեպքում գյուղատնտեսության ոլորտի թերի լինելը խոցելի է դարձնում գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց աշխատանքի ընտրության ազատության իրավունքը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ցուցաբերել հետևողական քաղաքականություն տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մատչելիության և հստակության վերաբերյալ, ինչը կապահովի կայուն երաշխիքներ գյուղացու համար:
- Մեփական նախաձեռնությամբ իրականացնել մշտադիտարկումներ Երևանում և մարզերում սննդամթերքի անվտանգության ոլորտում օրենսդրորեն հաստատված նորմատիվների խախտումների բացահայտման, ինչպես նաև հետագայում դրանք կանխարգելելու նպատակով:
- Միջոցներ ձեռնարկել օրենսդրորեն ամրագրելու անասնագլխաքանակի մորթը սպանդանոցներում իրականացնելու պահանջը, ինչի արդյունքում կկանխարգելվեն ժամկետանց և անհայտ ծագման մսամթերքի վաճառքի դեպքերը:
- Միջոցներ ձեռնարկել սահմանված ժամկետում ապահովել հինգ մոդելային սպանդանոցների լիարժեք շահագործումը:
- Միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսական ապահովագրման ինստիտուտի ներդրման համար: Մշակել մեխանիզմներ ապահովագրական ընկերությունների կողմից վերոնշյալ ինստիտուտի կայացման և դրա բնականոն աշխատանքի համար, մասնավորապես՝ ներմուծել պետական օժանդակության համակարգը ապահովագրության շրջանակներում:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության նպատակներն ու խնդիրներն են ՀՀ շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը, ՀՀ բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ապահովումը, ՀՀ տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ապահովումը և այլն:

2012 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) իրավասությունների ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Առկա էին բազմաթիվ չլուծված խնդիրներ կապված Նախարարության կողմից վտանգավոր նյութերի ու թափոնների առաջացումը և փոխադրումը խախտումներով իրականացնելու հետ:
- Ստացվել են բնապահպանական մի շարք ոլորտներին վերաբերող բազմաթիվ դիմում-բողոքներ՝ ծառահատումների, մթնոլորտային օդի աղտոտվածության, գետերում ջրերի և/կամ ձկների թունավորման, ապօրինի որսի և փայտանյութի առգրավման, վտանգավոր նյութերի և թափոնների, թունավոր արտանետումների հետ կապված:
- Օրհուսի կոնվենցիայից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագիրն, ըստ էության, չի կատարվել, մասնավորապես, չի իրագործվել ոլորտում առկա իրավահարաբերությունների հստակ կարգավորումը:
- Պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել ՀԷԿ-երից ջրառի վերաբերյալ առկա խնդիրների լուծման ուղղությամբ:
- Նախարարության կողմից չի իրականացվել ոլորտում առկա խախտումների պատշաճ արձագանքմանն ու լուծմանն ուղղված հետևողական քաղաքականություն:
- Խիստ մտահոգիչ էին շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության բացակայության հետևանքով տնտեսվարվող սուբյեկտների կողմից շրջակա միջավայրին պատճառված վնասի բազմաթիվ դեպքերը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Շարունակվում է չլուծված մնալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հստակ չափանիշների մշակման, ինչպես նաև շրջակա միջավայրին հասցված վնասի հայտնաբերման և օրինախախտների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված պատժամիջոցների կիրառման խնդիրը:
- Դեռևս իր լուծումը չի ստացել Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը շահագործող «Թեղուտ» ՓԲԸ-ի ներկայիս գործունեության լիցենզավորման խնդիրը, ինչի վերաբերյալ առկա են եղել բազում ահազանգեր բնապահպանների կողմից:
- Մտահոգության տեղիք է տալիս, որ Նախարարությունը մինչ օրս նախաձեռնողական մոտեցում չի ցուցաբերել իր ենթակայության տակ գտնվող տարածքների նկատմամբ հսկողություն իրականացնելու հարցում՝ արգելոցներում որսի դեպքերը բացահայտելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով:
- Շարունակվում է չլուծված մնալ ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ պատշաճ հանրային քննարկումների կազմակերպման խնդիրը, որի հետևանքով հանրության մասնակցությունը հաճախ ձևական բնույթ է կրել:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Միջոցներ են ձեռնարկվել հանրությանը մտահոգող հարցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման իրականացման ուղղությամբ:
- Իրականացվել է բնապահպանական պետական տեսուչներին պաշտոնում նշանակելու հստակ չափորոշիչների մշակում՝ համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի:
- Միջոցներ են ձեռնարկվել համապատասխանեցնելու օրենսդրությունը Օրհուսի կոնվենցիայի դրույթներին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ Նախարարությունը պատշաճ միջոցներ չի իրականացրել վտանգավոր նյութերի ու թափոնների (լցակույտերի) առաջացման և փոխադրման հետ կապված խախտումները բացառելու և/կամ նվազեցնելու նպատակով: Մի շարք բնապահպանական հասարակական կազմակերպություններ իրենց դժգոհությունն են հայտնել այս խնդրի վերաբերյալ՝ մասնավորապես նշելով Զանգեզուրի պղինձ-մոլիբդենային կոմբինատի թափոններով (լցակույտերով) Սյունիքի մարզի Նորաշենիկ և Ողջի գետերը աղտոտելու մասին դեպքը, որի արդյունքում ընկերությունը տուգանվել է ընդամենը 100 հազար դրամով: Նման քաղաքականությունը չի բխում Նախարարության կողմից ստանձնած պարտականությունից, համաձայն որի՝ վերջինս պետք է ապահովի և նպաստի շրջակա միջավայրի պահպանությունը և խախտումների դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառի:

2012 թվականին բնապահպանական մի շարք ոլորտների հետ կապված Պաշտպանին հասցեագրվել են մի շարք բողոքներ: Նախարարությունը այս խնդրի վերաբերյալ տեղեկացրել էր, որ ստացվել ընդհանուր թվով 115 դիմում-բողոքներ, որոնք վերաբերել են ծառահատումներին, մթնոլորտային օդի աղտոտվածությանը, գետերում ջրերի կամ ձկների թունավորմանը, ապօրինի որսին և փայտանյութի առգրավմանը, վտանգավոր նյութերին և թափոններին (լցակույտերին), թունավոր արտանետումներին:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Մտահոգիչ է այն, որ Նախարարության «Թեժ գիծ» ծառայությունը 2012թ. ընթացքում գրանցել է ընդամենը 54 ահազանգ, ինչը, հաշվի առնելով ընթացիկ տարում բնապահպանական ոլորտում բարձրաձայնած մի շարք խախտումները և չարաշահումները, վկայում է հանրության կողմից Նախարարության գործառույթների վերաբերյալ իրազեկվածության և վստահության պակասի մասին:

ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի Կողմերի 4-րդ հանդիպումն արձանագրել է գործող օրենսդրության որոշակի անհամապատասխանությունը Կոնվենցիայի դրույթներին, ինչի վերաբերյալ ընդունվել է IV/9a որոշումը, և Հայաստանին ներկայացվել է խորհրդատվական բնույթի առաջարկություններ: Կոնֆերանսի ժամանակ նշված առաջարկությունների կատարման ուղղությամբ, ՀՀ վարչապետի որոշմամբ 2011թ. ստեղծվել է «Օրհուսի կոնվենցիայից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի մշակման, դրանց իրականացման համար անհրաժեշտ գործողությունների համակարգման նպատակով միջգերատեսչական հանձ-նաժողով»: Հանձնաժողովը հաստատել է Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպման առաջարկությունների իրականացման գործողությունների՝ 10 կետից բաղկացած ծրագիր: Ներկա դրությամբ ի կատար են ածվել գործողությունների ծրագրի միայն որոշ կետեր, այսինքն, Օրհուսի կոմիտեի առաջարկություններն, ըստ էության, չեն կատարվել: Պետական իշխանությունների ընդհանուր գործունեությունը չի ծառայում հատուկ պահպանվող տարածքների պահպանության, թափոնների (լցակույտերի) անվտանգ կառավարման, անապատացման դեմ պայքարի կամ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման կառույցների աշխատանքի բարելավման նպատակներին: Օրինակներից կարելի է հիշատակել «Խոսրովի անտառ» արգելոցի կենտրոնում անօրինական կերպով կառուցված ժամանցային կենտրոնի շենքն ապամոնտաժելու ուղղությամբ քայլեր չձեռնարկելը, «Սևան ազգային պարկի» տարածքում գտնվող ոսկու հանքում ջարդիչ-տեսակավորող համալիրի ոչ իրավաչափ գործունեությունը չդադարեցնելը, Գետահովիտի ՀԷԿ-ի կառուցման թույլատրումը, որն էլ իր ազդեցությունը կունենա Արջատխլենու արգելավայրի միկրոկլիմայի վրա: Այս բոլոր խնդիրներն ուղղակիորեն վերաբերում են Նախարարության լիազորություններին և վերջիններիս կողմից չեն ձեռնարկվում անհրաժեշտ գործողություններ դրանց վերացման համար:

Առկա են խնդիրներ ՀԷԿ-երից ջրառի վերաբերյալ: Ջրի թույլատրելի քանակությունը որոշվում է ամենաչոր տարում 10-օրյա ժամանակահատվածում ջրի առկա քանակությամբ, մինչդեռ տարվա ընթացքում ցամաքող գետերի դեպքում նման քանակություն որոշելն անհնար է: Հավելենք նաև, որ փոքր ՀԷԿ-երի կառուցումը զգալիորեն ազդում է գյուղատնտեսության վրա՝ վատթարացնելով ոռոգման ջրի որակը և քանակը: Այնինչ ՀԷԿ-երի կառուցման թույլտվություն տալիս՝ վերոնշյալ խնդրի դիտարկումը դուրս է մնում փորձաքննությունից:

Նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ վերջինս համագործակցում է շուրջ 53 բնապահպանական հասարակական կազմակերպության հետ: Սակայն առավել սերտ համագործակցություն է իրականացվում դրանցից 15-ի հետ, ինչպես նաև մարզերի տեղեկատվական Օրհուս կենտրոնների հետ: Այնուամենայնիվ, բազմաթիվ հասարակական կազմակերպություններ իրենց դժգոհությունն են հայտնել ոլորտում առկա և վերջիններիս կողմից բարձրաձայնած խախտումների վերաբերյալ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Նախարարության կողմից ձեռնարկված ոչ բավարար միջոցների կապակցությամբ: Այսինքն, չնայած այդ հաստատված համագործակցություններին, դրանց ներկայիս ընթացքը ցածր է գնահատվում:

Նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ վերջինիս աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից 2012 թվականի ընթացքում տնտեսվարող սուբյեկտների մոտ կատարված ստուգումների արդյունքում, բացառությամբ անտառտնտեսությունների, հայտնաբերվել է դրանց գործունեության հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի 62 դեպք: Սակայն Նախարարությունը չի անդրադարձել այն խնդիրներին, որոնք առնչվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության բացակայության դեպքում, տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացված գործունեության արդյունքում շրջակա միջավայրին հասցված վնասներին: Այնինչ, ըստ մեր աղբյուրների, եղել են դեպքեր, երբ տնտեսվարող սուբյեկտները, որոնք չեն ստացել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացությունը, իրենց գործունեությունն իրականացնելիս լուրջ վնաս են հասցրել շրջակա միջավայրին: Առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ հաճախ լիազոր պետական մարմնի կողմից դրական եզրակացության փաստաթուղթը տրվում է, բայց փորձաքննություն փաստացի իրականացված չի լինում: Մեր աղբյուրների հավաստմամբ նշվածի օրինակ է հանդիսանում Դիլիջան ազգային պարկում «Օպելա» ՍՊԸ-ի կողմից իրականացված շինարարության և ապօրինի ծառահատման դեպքերը, որոնց համար վերջիններս որևէ փաստաթուղթ և/կամ փորձագիտական եզրակացություն չեն ստացել:

Շարունակվում է չլուծված մնալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) հստակ չափանիշների, ինչպես նաև ստուգումների միջոցով շրջակա միջավայրին հասցված վնասի հայտնաբերման և օրինախախտների նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատժամիջոցների կիրառման խնդիրը: 1996 թվականին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունը միացել է 1991թ.-ի «Միջսահմանային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիային, այնուամենայնիվ ներպետական իրավական համակարգում բացակայում են ոլորտի կարգավորման հստակ չափանիշներ: Ներկայացված են միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության (այսուհետ՝ ՇՄԱՓ) ընթացակարգերը, մինչդեռ առանց գիտականորեն հիմնավորված եւ իրավական ակտի ուժով հստակեցված ազդեցության գնահատականի՝ ՇՄԱԳ-ի, հնարավոր չէ կատարել վստահելի փորձաքննություն: ՇՄԱԳ-ը փորձագիտական նշանակություն և արժեք ունեցող փաստաթուղթ է, իսկ ՇՄԱՓ-ը՝ վարչական ակտ, որը ենթակա է սահմանված կարգով բողոքարկման: ՀՀ օրենսդրությամբ պետական մարմինները չեն պարտավորվում հանքարդյունաբերական գոտիներում իրականացնել պարբերական ստուգումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար մարդկանց առողջական խնդիրները և դրանց պատճառները:

Դեռևս իր լուծումը չի ստացել Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը շահագործող «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության լիցենզավորման խնդիրը. կազմակերպությունը գործում է նոր ծրագրով, այնինչ լիցենզիան տրվել էր նախկինում ներկայացված ծրագրի հիման վրա: Կազմակերպության գործունեության ներկայիս ծրագիրը լիցենզավորված չէ: Այսպես, բնապահպանների կողմից բազմիցս բարձրացվել է այն խնդիրը, որ 2006թ. «Թեղուտ» ՓԲԸ-ին գործունեության թույլտվություն տրամադրվել է օրենսդրության մի շարք խախտումներով, ինչն էլ 2011թ. հունիսի 29-ից հուլիսի 1-ը Քիշնևում տեղի ունեցած Օրհուսի կոնվենցիայի գերագույն մարմնի՝ Կոնվենցիայի կողմ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

հանդիսացող երկրների հանդիպման ժամանակ հաստատել է նաև Կոնվենցիայի Համապատասխանության Կոմիտեն: Թիվ ACCC/C/2009/43 հաղորդման առնչությամբ Կոմիտեն արձանագրել է, որ Թեղուտի հանքի շահագործման լիցենզիա ստանալու ընթացքում թույլ են տրվել կոնվենցիայի, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս կազմող օրենքի խախտումներ: Անհրաժեշտ ենք համարում առանձնահատուկ կերպով շեշտել նաև, որ Կոնվենցիայի Կողմերի որոշումն ունի բարձր իրավաբանական ուժ և պարտադիր է կատարման պետության կողմից: Կոնվենցիայի Կողմերի հանդիպման ժամանակ հաստատվել է Համապատասխանության կոմիտեի եզրակացությունն այն մասին, որ Հայաստանը ձախողել է Կոնվենցիայի իրականացումը: Ավելին, Թեղուտի պաշտպանության կոմիտեն Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ ներկայումս հանքավայրի շահագործումն իրականացվում է նոր՝ 2010 թվականին մշակված նախագծով, որը փորձաքննության չի ենթարկվել, ինչի կապակցությամբ բնապահպանության նախարարությանը պահանջ է ներկայացրել ստուգումներ իրականացնել Թեղուտի հանքավայրում, սակայն մինչ օրս Բնապահպանության նախարարությունից որևէ պատասխան չի ստացվել: Նախարարությունը հայտնել է, որ 2012 թվականին բնապահպանական պետական տեսչության կողմից արգելոցներում որսի դեպքեր չեն արձանագրվել: Արձանագրված միակ դեպքը վերաբերել է Խոսրովի արգելոցում իրականացված որսին, որի առնչությամբ հարուցված քրեական գործի քննությունն ընթացքի մեջ է: Իրավախախտներին պատասխանատվության չենթարկելը չի կարող նպաստել անօրինական որսի դեպքերի հայտնաբերմանը և կանխարգելմանը: Անհրաժեշտ է, որպեսզի Նախարարությունը նախաձեռնողական լինի իր ենթակայության տակ գտնվող տարածքների նկատմամբ հսկողություն իրականացնելու հարցում՝ արգելոցներում որսի դեպքերը բացահայտելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու, ինչպես նաև՝ նման դեպքերը բացառելու ուղղությամբ արդյունավետ միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Ըստ Նախարարության հայտնած տեղեկատվության՝ ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվում են հանրային քննարկումներ և նախագծերը տեղադրվում են Նախարարության պաշտոնական կայքում, ընդ որում՝ նախապես տեղադրվում է նախագիծը, այնուհետև տեղադրվում է շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկություններով լրամշակված տարբերակը, և վերջին փուլում տեղադրվում է իրավական ակտերի նախագծերի այն տարբերակները, որոնք ներկայացվում են ՀՀ Կառավարություն: Սակայն Պաշտպանին հասցեագրված բողոքների համաձայն՝ հանրության մասնակցությունը որոշումների կայացմանը հաճախ պարզապես կրում է ձևական բնույթ և բացի այդ, որպես կանոն, չի ազդում ընդունվող որոշումների վրա: Նույնիսկ բազմաթիվ դեպքերում, շահագրգիռ անձինք և/կամ կազմակերպությունները անտեղյակ են լինում Նախարարության կողմից կազմակերպված հանրային լսումների մասին: Արդյունքում, ոչ միայն չեն պահպանվում ՀՀ օրենսդրության պահանջները, այլև՝ լուրջ խոչընդոտներ են ստեղծվում հանրության՝ նշված քննարկումներին մասնակցելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Միջոցներ ձեռնարկել վտանգավոր նյութերի ու թափոնների (լցակույտերի) առաջացումը և փոխադրումը խախտումներով իրականացնելը բացառելու նպատակով:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ բնապահպանական մի շարք ոլորտներին վերաբերող խնդիրների լուծման, ինչպես նաև Նախարարության գործառույթների մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ:
- Հետամուտ լինել շրջակա միջավայրի բնագավառում ՀՀ վավերացված միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների իրականացմանը:
- Պատշաճ միջոցներ ձեռնարկել՝ լուծելու ՀԷԿ-երից ջրառի վերաբերյալ առկա խնդիրները:
- Սերտացնել համագործակցությունը բոլոր հասարակական կազմակերպությունների հետ՝ հետամուտ լինելով վերջիններիս կողմից բարձրացված խնդիրներին և դրանց վերաբերյալ միջոցներ ձեռնարկել:
- Որպես ոլորտի լիազոր մարմին՝ պատշաճ հսկողություն իրականացնել տնտեսվարող սուբյեկտներին շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության տրամադրման ուղղությամբ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել օրենսդրությամբ սահմանելու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հստակ չափանիշներ:
- Մշակել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հստակ չափանիշներ, ինչպես նաև իրականացնել շրջակա միջավայրին հասցված վնասի հայտնաբերման և օրինախախտների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված պատժամիջոցների կիրառում:
- Միջոցներ ձեռնարկել Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը շահագործող «Թեղուտ» ՓԲԸ-ի ներկայիս գործունեության լիցենզավորման խնդրի լուծման ուղղությամբ:
- Նախաձեռնողական լինել արգելոցներում որսի դեպքերը բացահայտելու, պատասխանատվության համապատասխան միջոցներ կիրառելու, ինչպես նաև հետագայում նման խախտումները բացառելու ուղղությամբ:
- Հետամուտ լինել ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ոչ միայն հանրային քննարկումները պատշաճ ընթացակարգով կազմակերպելու նկատմամբ՝ դրանց (ինչպես նաև նախագծերի) մասին համապատասխան անձանց նախապես տեղյակ պահելով:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության խնդիրներն ու նպատակներն են էներգետիկայի և էներգասպառման բնագավառում պետական տեխնիկական վերահսկողության պետական քաղաքականության ապահովումը, ընդերքօգտագործման ոլորտում պետական քաղաքականության մշակման ու իրականացման ապահովումը, ընդերքի օգտագործման տրամադրման ապահովումը, օգտակար հանածոների ողջամիտ օգտագործման, ուսումնասիրման և հանքարդյունահանման արդյունավետ իրականացմանը նպաստելը, ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում պետական վերահսկողության ապահովումը և այլն:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պատասխանատու է հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման համար, որի նպատակն է հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ բացառելով սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականությունը:

2012 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավասությունների ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

- Բազմաթիվ քաղաքացիներ մտահոգություն են հայտնել էլեկտրաէներգիայի շարունակական տատանումների, դրա հաճախակի ու կարճատև մարումների, ինչպես նաև դրանից բխող հետևանքների վերաբերյալ:
- Մտահոգիչ է, որ 2012 թվականի ընթացքում չեն ընդունվել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշները:
- Սյունիքի մարզի սահմանամերձ Քաջարան և Հայաստան-Իրան միջպետական ճանապարհի շրջակա 4 տարածքները գերակա հանրային շահ ճանաչելու կապակցությամբ շահագրգիռ անձանց մասնակցությամբ չեն իրականացվել պատշաճ հանրային քննարկումներ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Առկա օրենսդրական բացի պատճառով չկարգավորված է մնում վտանգավոր նյութերի ու թափոնների առաջացման և փոխադրման իրավական կարգավորումը, ինչը պատճառ է հանդիսանում դրանք խախտումներով իրականացնելու համար:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

- Ընթացիկ տարում եղել են էլեկտրաէներգիայի տատանումների կամ խափանման բազմաթիվ դեպքեր, որոնց հետևանքով որոշ սպառողներ կրել են նաև ֆինանսական վնասներ:
- Հանրապետությունում գազի, ջրի և էլեկտրաէներգիայի հաշվիչների այլընտրանքային լաբորատորիաների բացակայությունը որոշակի խնդիրներ է ստեղծել սպառողների համար:
- Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել քաղաքացիների շուրջօրյա ջրամատակարարման խնդիրը լիարժեք լուծելու համար:
- Մտահոգիչ է Հանձնաժողովի թիվ 95-Ն որոշման համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը նախորդող տարվա դեկտեմբեր, հունվար և փետրվար ամիսներին ծախս ունեցած ամիսների միջին օրական ծախսը հաշվառքի խախտման ամսում մատակարարված գազի քանակի որոշման համար հիմք ընդունելը:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- 2012 թվականի դեկտեմբերի 27-ին ուժի մեջ են մտել «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Էներգետիկայի պետական տեսչության կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» համապատասխանաբար թիվ 1568-Ն և թիվ 1569-Ն որոշումները:
- Ողջունելի է այն փաստը, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ձեռնարկած ջրային համակարգի կազմակերպությունների գործունեության մշտադիտարկումները կրում են շարունակական բնույթ և իրականացվում են ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող եռամսյակային տեղեկատվությունների վերլուծության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղում ուսումնասիրություններ կատարելու միջոցով:
- Ողջունելի է այն, որ Հանձնաժողովը ծանոթացրել է սպառողներին իրենց իրավունքներին՝ հանձնաժողովի վեբ-կայքում տեղադրելով իր որոշումները, լրատվամիջոցներով պարբերաբար հանդես է եկել պարզաբանումներով, սպառողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ բուկլետներ հրապարակելու խնդրում աջակցել է հասարակական կազմակերպություններին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Բազմաթիվ քաղաքացիներ մտահոգություն են հայտնել էլեկտրաէներգիայի շարունակական տատանումների, դրա հաճախակի ու կարճատև մարումների, ինչպես նաև դրանից բխող հետևանքների վերաբերյալ: Չնայած այն հանգամանքին, որ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման համար պատասխանատու է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, այնուամենայնիվ, Նախարարության Կանոնադրության 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Նախարարության նպատակներն ու խնդիրներն են էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության պետական քաղաքականության ապահովումը: Հաշվի առնելով էլեկտրաէներգիայի հետ կապված բողոքները գտնում ենք, որ Նախարարության կողմից հարկավոր է այնպիսի միջոցառումների ձեռնարկումը, որոնք ուղղված կլինեն ոլորտում առկա խնդիրների բարելավմանը և/կամ վերացմանը:

Նախարարությանն ուղարկված մեր հարցմանը, թե Նախարարության կողմից իրականացվող մշտադիտարկումների արդյունքում ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից ընդերքօգտագործման օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ ինչ խնդիրներ են վերհանվել, ստացվել է պատասխան առ այն, որ որևէ խնդիր չի վերհանվել և առաջարկություններ չեն ներկայացվել: Այնինչ, նույն գրությամբ Նախարարությունը հայտնել է, որ 2012 թվականի ընթացքում ընդերքօգտագործողների դիմում-բողոքների հիման վրա Նախարարությունում հարուցվել է շուրջ 8 վարչական վարույթ: Այսինքն, այնուամենայնիվ, ստացվել են բողոքներ, որոնք վերաբերել են Նախարարության ոլորտին և իրավասությանը, ուստի անհրաժեշտ է, որպեսզի ձեռնարկվեն միջոցներ, կատարվեն մշտադիտարկումներ՝ նշված ոլորտում թեկուզև քանակապես ոչ շատ, սակայն առկա խնդիրները վերացնելու համար:

Ի պատասխան մեր հարցմանը, թե Նախարարությունը ինչ ընթացակարգով և ինչ չափորոշիչների հիման վրա է իրականացրել ոլորտում համապատասխան ստուգումներ, հայտնել են, որ, Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տեսչական բարեփոխումների շրջանակներում, 2012 թվականի ընթացքում էներգետիկայի պետական տեսչության կողմից մշակվել են և ՀՀ կառավարության կողմից 06.12.2012թ. ընդունվել են «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Էներգետիկայի պետական տեսչության կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» համապատասխանաբար թիվ 1568-Ն և թիվ 1569-Ն որոշումները: Վերը նշված իրավական ակտերի նախագծերը ընդունվել են՝ տեխնիկական կանոնակարգերով և օրենսդրական այլ ակտերով սահմանված անվտանգության նորմերի պահպանումը

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ապահովելու համար: Ողջունելի է նման իրավական ակտերի ընդունումը և դրանց միջոցով ստուգումների անցկացման կանոնակարգումը, սակայն վերոնշյալ ակտերը ուժի մեջ են մտել 2012 թվականի դեկտեմբերի 27-ին, հետևաբար անհասկանալի է, թե ողջ 2012 թվականի ընթացքում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների բացակայության պայմաններում ինչի հիման վրա և ինչ ընթացակարգով էին կատարվել տվյալ ոլորտում համապատասխան ստուգումները:

Շարունակում է հանրության ուշադրության կենտրոնում գտնվել Քաջարանի բաց հանքի շահագործման հետ կապված խնդիրները, որոնց վերաբերյալ Պաշտպանի կողմից ստացվել են մի շարք դիմում-բողոքներ, ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից: 2011 թվականի ապրիլի 28-ին կայացված ՀՀ կառավարության թիվ 627-Ն որոշման համաձայն՝ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչվեցին Սյունիքի մարզի սահմանամերձ Քաջարան և Հայաստան-Իրան միջպետական ճանապարհի շրջակա ևս 4 տարածքները՝ Արծվանիկ, Սևաքար, Աջանան և Չափնի գյուղերի գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերը (շուրջ 600 հա), որոնք վարձակալության իրավունքով պետք է տրվեին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին՝ բաց հանքի շահագործման և թունավոր թափոնների գերեզմանոցների տեղադրման համար: Այնինչ մեր կողմից բարձրացված հարցին պարզաբանում ստանալու նպատակով, թե Քաջարան համայնքի գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքացիներին վարձակալության կամ սեփականության իրավունքով պատկանող հողամասեր արդյոք կան թե ոչ, մի շարք գրություններ են ուղարկվել ՀՀ վարչապետին, որոնք հետագայում վերահասցեագրվել են Նախարարությանը, սակայն պատասխան գրություններով Նախարարությունը որևէ հստակ տեղեկատվություն չի ներկայացրել: 2012 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից նախաձեռնած ոլորտի իրավապաշտպանների և մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում ստացվել են բազմաթիվ բողոքներ, որ Սյունիքի մարզի սահմանամերձ Քաջարան և Հայաստան-Իրան միջպետական ճանապարհի շրջակա 4 տարածքները գերակա հանրային շահ ճանաչելու կապակցությամբ շահագրգիռ անձանց մասնակցությամբ չեն իրականացվել պատշաճ հանրային քննարկումներ և հաշվի չեն առնվել վերջիններիս դիրքորոշումները:

Առկա օրենսդրական բացի պատճառով չկարգավորված է մնում վտանգավոր նյութերի ու թափոնների առաջացման և փոխադրման իրավական կարգավորումը, ինչը պատճառ է հանդիսանում դրանք խախտումներով իրականացնելու համար: Մասնավորապես, ՀՀ ընդերքի նոր օրենսդրությամբ չի ճանաչվում «հանքահանման թափանների» և «պոչանքների արտանետումների» գոյությունը, որի հետևանքով այս թափոնները դուրս են մնում համապատասխան իրավական կարգավորումից և հարկման դաշտից: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (նաև՝ Կառավարության՝ սույն ոլորտը կարգավորող որոշումներով) սահմանված չեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հստակ չափանիշներ: Ներկայացված են միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ընթացակարգերը: Մինչդեռ առանց գիտականորեն հիմնավորված և իրավական ակտի ուժով հստակեցված ազդեցության գնահատականի հնարավոր չէ կատարել վստահելի փորձաքննություն: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման արդյունքը փորձագիտական նշանակություն և արժեք ունեցող փաստաթուղթ է, իսկ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության արդյունքում տրված փաստաթուղթը՝ վարչական ակտ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

Ընթացիկ տարում եղել են էլեկտրաէներգիայի տատանումների կամ խափանման բազմաթիվ դեպքեր, որոնց հետևանքով որոշ սպառողներ կրել են նաև ֆինանսական լուրջ վնասներ: Էլեկտրաէներգիայի տատանումների կամ խափանման հետևանքով քաղաքացիների կրած վնասները վերականգնելու պահանջով Հանձնաժողովը չի հայտնել, թե քանի դիմում-բողոք է ստացել, դրանցից քանիսն են բավարարվել և ինչ ժամանակահատվածում: Այսինքն, նման խախտումները բավարար կերպով չեն ուսումնասիրվել հանձնաժողովի կողմից:

Հանրապետությունում գազի, ջրի և էլեկտրաէներգիայի հաշվիչների այլընտրանքային լաբորատորիաների բացակայությունն իր հերթին որոշակի խնդիրներ է ստեղծում սպառողների համար: Լինելով միակը՝ գործող լաբորատորիան կարող է օգտվել իր գերիշխող դիրքից և սահմանել հաշվիչների ստուգման, վերանորոգման համար բարձր գներ: Բացի այդ, բնակչության շրջանում առկա է այդ լաբորատոր ստուգումների օբյեկտիվության նկատմամբ անվստահություն: Չնայած այն հանգամանքին, որ Հանձնաժողովը չունի նշված կառույցների ստեղծմանը կամ գործարկմանն ուղղված լիազորություններ, այնուամենայնիվ, գտնում ենք, որ Հանձնաժողովը՝, որպես այս ոլորտի մասնագիտացված կառույց, պետք է նախաձեռնողականություն ցուցաբերեր՝ բարձրաձայնելով այլընտրանքային մասնավոր լաբորատորիաների ստեղծման խնդիրը: Հանձնաժողովը նշված խնդրի լուծման ուղղությամբ 2012 թվականին որևէ միջոցներ չի ձեռնարկել:

Շարունակվում է արդիական մնալ քաղաքացիների շուրջօրյա ջրամատակարարման խնդիրը: Մտահոգիչ է այն, որ խմելու ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից դանդաղ են ընթացել քաղաքացիների ջրամատակարարման բարելավմանն ուղղված գործընթացները: Ողջունելի է այն փաստը, որ հանձնաժողովի կողմից ձեռնարկած ջրային համակարգի կազմակերպությունների գործունեության մշտադիտարկումները կրում են շարունակական բնույթ և իրականացվում են ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող եռամսյակային տեղեկատվությունների վերլուծության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղում ուսումնասիրություններ կատարելու միջոցով: Այնուամենայնիվ, նշված ոլորտում դեռևս կան խնդիրներ, մասնավորապես՝ շուրջօրյա ջրամատակարարման խնդիրը:

Հանձնաժողովի թիվ 95-Ն որոշման համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը նախորդող տարվա դեկտեմբեր, հունվար և փետրվար ամիսներին՝ ծախս ունեցած ամիսների միջին օրական ծախսը հիմք է ընդունվում հաշվառքի խախտման ամսում մատակարարված գազի քանակի որոշման համար: Նշված պարագայում, Հանձնաժողովի կողմից ընդունված որոշմամբ՝ բնական գազի բաժանորդների համար նախատեսվել է լրացուցիչ ֆինանսական բեռ, քանի որ տարվա դեկտեմբեր, հունվար և փետրվար ամիսների ծախսը շատ լինելու հնարավորությունը տեսականորեն անհամեմատ բարձր է, քան մյուս ամիսներին: Իսկ նախքան

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Հանձնաժողովի 07.09.2011թ. թիվ 411 որոշմամբ 08.07.2005թ. թիվ 95-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, վերահաշվարկի համար հիմք են ընդունվել նախորդ տարվա նույն ամսվա միջին օրական ծախսի տվյալները: Ուստի գտնում ենք, որ նշված փոփոխությունը իրականացվել է սպառողների շահերի անտեսմամբ:

Ողջունելի է այն, որ Հանձնաժողովը ծանոթացնում է սպառողներին իրենց իրավունքներին՝ հանձնաժողովի վեբ-կայքում տեղադրելով իր որոշումները, լրատվամիջոցներով պարբերաբար հանդես է գալիս պարզաբանումներով, սպառողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ բուկլետներ հրապարակելու խնդրում աջակցում է հասարակական կազմակերպություններին: 2012 թվականի ընթացքում Հանձնաժողովը որոշ ընկերությունների և կազմակերպությունների նկատմամբ կիրառել է տույժեր՝ համապատասխան օրենքների և որոշումների խախտման համար: Մասնավորապես, ողջունելի է այն, որ Հանձնաժողովը՝ մեր կողմից բարձրացված «Արմենթել» ՓԲԸ-ի կողմից Երևան քաղաքի վարչական տարածքից դուրս գտնվող վայրերում Երևան քաղաքի տարածաշրջանային կոդերով նոր հեռախոսահամարներ տրամադրելու խնդրի առնչությամբ ուսումնասիրություններ կատարելուց հետո «Արմենթել» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել է տույժ: Բայցևայնպես, վերոնշյալ գործողությունները ոչ միշտ են կրել կայուն, շարունակական և համընդհանուր բնույթ, ուստի հարկավոր է նաև այնպիսի միջոցառումների ձեռնարկումը, որոնք կնպաստեն հասարակության շրջանում Հանձնաժողովի նկատմամբ իրազեկվածության և վստահության բարձրացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

- Մշակել և գործարկել արդյունավետ մեխանիզմներ էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության պետական քաղաքականության ապահովման նպատակով:
- Միջոցներ ձեռնարկել Նախարարության կողմից, իր իրավասությունների շրջանակներում պարբերաբար իրականացնելու մշտադիտարկումներ՝ ոլորտում առկա խնդիրների վերհանման և հնարավոր խախտումների կանխարգելման և բացառման նպատակով:
- Միջոցներ ձեռնարկել ապահովելու 27.12.2012 թվականի ՀՀ կառավարության կողմից ընդունված N 1568-Ն և N 1569-Ն որոշումներով սահմանված կարգը՝ 2013 թվականի ընթացքում ոլորտում ստուգումների իրականացման գործընթացում:
- Հետևողական գտնվել Քաջարանի բաց հանքի շահագործման հետ կապված խնդիրների լուծման կապակցությամբ՝ միաժամանակ ակտիվ համագործակցություն հաստատելով նույն խնդրով մտահոգված քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների հետ:
- Միջոցներ ձեռնարկել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում «հանքահանման թափոններ» և «պոչանքների արտանետումներ» հասկացությունների պարզաբանման

ուղղությամբ՝ վերջիններիս իրավական կարգավորում տալու նպատակով, ինչպես նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման հստակ չափանիշներ:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

- Ապահովել էլեկտրաէներգիայի տատանումների կամ խափանման հետևանքով առաջացած վեճերի քննության և լուծման վերաբերյալ Հանձնաժողովի իրավասությունների մասին հասարակության իրազեկված լինելը:
- Միջոցներ ձեռնարկել գազի, ջրի և էլեկտրաէներգիայի հաշվիչների այլընտրանքային լաբորատորիաներ հիմնելու ուղղությամբ:
- Բարձրացնել վերահսկողությունը ջրամատակարար ընկերությունների կողմից մատուցվող խմելու ջրի սպասարկման որակի նկատմամբ:
- Փոփոխություն կատարել Հանձնաժողովի թիվ 95-Ն որոշման մեջ՝ նախատեսելով, որ մատակարարված գազի քանակի վերահաշվարկի համար որպես հիմք պետք է ընդունել նախորդ տարվա նույն ամսվա միջին օրական ծախսի տվյալները:
- Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ծառայություններ տրամադրելիս, բնակիչների համար ապահովել հավասար պայմաններ այդ ոլորտում վերջիններիս իրազեկվածությունը բարձրացնելու միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն ապահովում է մարդու կրթության իրավունքի իրացումը, մարդու, հասարակության և պետության անվտանգությանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումը, ուսումնական հաստատություններում պետական կրթական քաղաքականության սկզբունքների պահպանումը, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում կրթության զարգացման պետական ծրագրի և պետական կրթական չափորոշիչների կիրառման, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նկատմամբ և այլն: Բացի այդ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պարտավոր է ապահովել հանրակրթության համակարգում ազգային փոքրամասնությունների՝ մայրենի լեզուներով կրթություն և դաստիարակություն ստանալու իրավունքը:

2012 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Բազմաթիվ են եղել հանրակրթական, միջին մասնագիտական և, հատկապես, բարձրագույն ուսումնական համակարգում առկա կոռուպցիոն դրսևորումները:
- Արդյունավետ և բավարար քայլեր չեն ձեռնարկվել հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման և ջեռուցման բարելավման համար:
- Առանձին դեպքերում Նախարարության կողմից, ըստ էության, քննության չեն առնվել Նախարարության աշխատանքներում թերացումների վերաբերյալ քաղաքացիների դժգոհությունները, դիմում-բողոքները, մամուլում հրապարակված տեղեկությունները:
- Լուրջ մտահոգության տեղիք է տալիս, որ որոշ ԲՈՒՀ-երում գործող ուսանողական խորհուրդները քաղաքականացված են, ինչը ծայրահեղ բացասական ազդեցություն է ունենում ուսանողների շահերի վրա:
- Առկա են բազում չլուծված խնդիրներ՝ հանրակրթական բոլոր դպրոցներում համընդհանուր ներառական կրթական համակարգի ներդրման առնչությամբ:
- Շարունակվում է չլուծված մնալ ուսումնական տարվա սկզբին հանրակրթական դպրոցների դասագրքերի մրցույթների կազմակերպման ու անցկացման պատշաճ ապահովման խնդիրը:
- Խիստ մտահոգիչ է, որ ՀՀ կառավարության թիվ 554-Ն որոշմամբ 2012/2013 ուսումնական տարվա համար չեն նախատեսվել պետության կողմից ուսանողական

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ուսումնառության տեղեր մի շարք կրթական հաստատություններում, այդ թվում նաև՝ Երևանի պետական համալսարանի «իրավագիտություն» և «միջազգային հարաբերություններ» մասնագիտությունների գծով:

- Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597 որոշման և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների միջև:
- Դեռևս իր լուծումը չի ստացել գիտական աստիճան ունեցող անձանց աշխատավարձի հավելավճարի տրամադրման հարցը:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի նիստի N 52 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի հայեցակարգը, ինչի արդյունքում հանրապետության տարածքում գործող շուրջ 700 դպրոցի տարրական դասարանների աշակերտներ ապահովվել են սննդով:
- ՀՀ Ազգային ժողովը առաջին ընթերցմամբ ընդունել է Նախարարության նախաձեռնությամբ մշակված «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- Այսօր Հայաստանի Հանրապետությունում գործում է 98 հանրակրթական դպրոց, որոնք իրականացնում են ներառական կրթություն:
- ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 21.11.2012թ N 1061-Ա/Ք հրամանով հաստատվել է «Հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություններում օգտագործվող ձեռնարկների փորձաքննության և գործածության երաշխավորման կարգը», որն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ գրանցման:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական, միջին մասնագիտական և, հատկապես, բարձրագույն ուսումնական համակարգում կոռուպցիայի նվազեցման համար ձեռնարկված միջոցները բավարար չեն: 2012 թվականին Նախարարություն ստացված թվով 193 ահազանգից 138-ը վերաբերել են վերոնշյալ խնդրին (ֆոնդի գումար, տարեվերջյան հանդիսությունների համար ծնողների նախաձեռնությամբ հավաքվող գումարներ, մարտի 8-ի և ապրիլի 7-ի առիթով դրամահավաք, աշխատանքային տետրերի վաճառք): Բացի այդ, ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հանրապետությունում մեծ թվով ուսումնական հաստատություններում աշակերտներին (բացի դասագրքերից) բաժանել են աշխատանքային (թեստային) տետրեր, լրացուցիչ ուսումնաօժանդակ նյութեր, և դրանց համար գումարներ են հավաքել: Նախարարության կողմից հանձնարարականներ են տրվել ՀՀ մարզպետարաններին, Նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններին, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանին առաջարկվել է ձեռնարկել միջոցառումներ մարտի 8-ի և ապրիլի 7-ի տոնական և «Վերջին դաս» միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում դրամահավաքության որևէ

դրսևորում, այդ թվում՝ աշխատանքային տետրերի, օրագրերի և այլ ուսումնաօժանդակ նյութերի վաճառք, բացառելու նպատակով: Որոշ դեպքերում նույնիսկ կիրառվել են կարգապահական տույժեր, ինչը ողջունելի է: Սակայն, չնայած ձեռնարկված միջոցների, վերոնշյալ լրջագույն խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

Պաշտպանը ստացել է բողոքներ դպրոցների ոչ բարեկարգ վիճակի վերաբերյալ, ինչը լուրջ խոչընդոտ է դասապրոցեսների նորմալ ընթացքի և կրթության իրավունքի ապահովման համար: Նախարարությունը նշել է, որ պետական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման խնդիրը իրենց ուշադրության կենտրոնում է: Սակայն ստացված բողոքների համաձայն՝ հիմնանորոգումներ կատարելու անկարողության համար Նախարարության կողմից որպես հիմնավորում բազմաթիվ դեպքերում նշվել է միջոցների սղությունը: Հայտնի են նաև դեպքեր, երբ Նախարարությունը ամեն տարի հատկացնում է միջոցներ միևնույն պետական ուսումնական հաստատությունում նորոգումներ կատարելու համար, մինչդեռ կան այնպիսի հաստատություններ, որտեղ գրեթե 2-3 տարի որևէ հիմնանորոգումներ չեն իրականացվել: Չնայած գրանցված դրական զարգացումներին՝ այնուամենայնիվ մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ 2012 թվականին հանրակրթական դպրոցների շուրջ 30 տոկոսը (450 դպրոցներ, որոնցից 28-ը՝ Երևանում, իսկ 422-ը՝ մարզերում), ապահովված չէ ջեռուցման համակարգով: Վերջինս հրատապ խնդիրներից է, քանզի ոչ բավարար պայմանները խաթարում են դասաժամերի բնականոն ընթացքը և առիթ են հանդիսանում դասաժամերի հետաձգմանը, նույնիսկ աշակերտների առողջական վիճակի վատթարացմանը, ինչը ինքնին անթույլատրելի է: Նշյալը վկայում է խնդրի արդիականության մասին, ուստի հարկավոր է առաջնային խնդիր դիտարկել հանրակրթական ուսումնական հաստատություններում հիմնանորոգումները և ջեռուցման համակարգերի ներդրումը:

Ոլորտի խնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս առկա է այն պրակտիկան, որ Նախարարության կողմից իրենց աշխատանքներում թերացումների վերաբերյալ քաղաքացիների դժգոհությունները, դիմում-բողոքները, մամուլում հրապարակված տեղեկություններն, ըստ էության, քննության չեն առնվում, իսկ եթե նույն խնդիրները բարձրացվում են պետական որևէ գերատեսչության կողմից, ապա քննարկվում են: Այսինքն՝ Նախարարության կողմից իրականացվող վերահսկողությունը վարչարարության, կազմակերպչական աշխատանքների, դիմում-բողոքների ուսումնասիրման նկատմամբ բավարար չէ: Միաժամանակ նաև նշված հարցի վերացման համար հարկավոր է ամրապնդել Նախարարության և քաղաքացիական հասարակության միջև կապը և հաստատել արդյունավետ համագործակցություն:

Լրջագույն խնդիրներից է որոշ ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների քաղաքականացվածությունը: Ուսանողական խորհուրդները կոչված են պաշտպանելու ուսանողների շահերը և ներկայացնելու դրանք պրոֆեսորադասախոսական անձնակազմի նիստերին: Ուսանողական խորհուրդների քաղաքականացված լինելը ի սկզբանե բացառում է այդ կառույցի անկախությունն ու անաչառությունը: Հաճախ ստեղծվում են իրավիճակներ, երբ ուսանողական խորհուրդները՝ ունենալով կուսակցական պատկանելիություն, օգտագործում են իրենց տրամադրված հնարավորությունները կուսակցության քարոզի և շահերի պաշտպանության համար, ինչը որևէ առնչություն չի կարող ունենալ դասընթացների և ուսանողների շահերի հետ: Սա միանգամայն անընդունելի է, քանի որ ուսանողական խորհուրդը պետք է լինի ոչ քաղաքականացված կառույց: Մտահոգիչ է, որ Նախարարությունն ընդհանրապես անդրադարձ չի կատարել այն հարցադրմանը, թե իր կողմից ուսումնասիրվել են արդյոք բողոքներ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

հանրապետության տարբեր համալսարանների ուսանողական խորհուրդների քաղաքականացված լինելու վերաբերյալ:

Դեռևս Հայաստանի Հանրապետությունում կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրով նախատեսվում էր ներառական կրթության ընդլայնման, հատուկ դպրոցների օպտիմալացման, յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքների բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդնումը: Ողջունելի է այն փաստը, որ ՀՀ Ազգային ժողովը առաջին ընթերցմամբ ընդունել է Նախարարության նախաձեռնությամբ մշակված «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Սակայն 2011 թվականից առ այսօր Հայաստանի Հանրապետությունում 1400 դպրոցներից ընդամենը 98 հանրակրթական դպրոցներում է իրականացվում ներառական կրթություն, այնինչ վերոնշյալ ծրագրով նախատեսվում է ընդլայնել առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնությունների և խոցելի մյուս բոլոր խմբերի երեխաների որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում մինչև 2015 թվականը:

2012 թվականի ընթացքում ոլորտում վերջնական լուծում չի ստացել հանրակրթական դպրոցների դասագրքերի մրցույթների կազմակերպման ու անցկացման իրավական հիմքերի պատրաստման հարցը: Վերջիններիս բացակայությունը խոչընդոտում է ուսման որակի զարգացմանը: Ողջունելի է, որ «Հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություններում օգտագործվող ձեռնարկների փորձաքննության և գործածության երաշխավորման» կարգը գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցման փուլում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ էր ներդնել այդ համակարգը մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը, այլ ոչ տարվա վերջում: Նախարարության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում հանրապետության տարածքում գործող շուրջ 700 դպրոցի տարրական դասարանների աշակերտներ ապահովվել են սննդով: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետությունում պետական դպրոցների թիվը գերազանցում է 1400-ը՝ դա չի կարող բավարար լինել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը կատարված համարելու համար:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն ստանալու հնարավորություն: «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է պետական պատվեր՝ ըստ մասնագիտությունների, ուսումնական հաստատությունների: ՀՀ Սահմանադրությամբ և մի շարք միջազգային դաշնագրերով սահմանվում է յուրաքանչյուրի կրթության իրավունքը, ինչպես նաև մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունքը: ՀՀ կառավարության թիվ 554-Ն որոշումը սահմանել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2012/2013 ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով վճարովի ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով տեղերը: Սակայն հաշվի չառնելով անվճար կրթություն ստանալու վերագրյալ երաշխիքները՝ Կառավարության վերոնշյալ որոշմամբ մի շարք կրթական հաստատություններում, այդ թվում նաև Երևանի պետական համալսարանի «իրավագիտություն» և «միջազգային հարաբերություններ» մասնագիտությունների գծով պետության կողմից անվճար ուսումնառության տեղեր 2012/2013 ուսումնական տարվա համար չեն նախատեսվել: Հավելենք նաև, որ նման խնդիր առկա է եղել նաև նախորդ երկու ուսումնական տարիների ընթացքում: Այսինքն, քաղաքացին, ով ցանկանում է օգտվել ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավունքներից հանգում է մի իրավիճակի, երբ փաստացի չի ապահովվում մրցույթային հիմունքներով անվճար կրթություն ստանալու իրավունքը: Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր հարցադրումները և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները՝ այս հարցի վերաբերյալ վիճահարույց խնդիրը պարզելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմեց ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ կառավարության թիվ 554-Ն որոշման ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համապատասխանության հարցը որոշելու համար: Չնայած Սահմանադրական դատարանը իր որոշմամբ չվերացրեց տարիներ շարունակ խնդիր դարձած կրթական հաստատություններում անվճար տեղերի բացակայությունը՝ այնուամենայնիվ կրկին անգամ վերահաստատեց քաղաքացիների մրցութային հիմունքներով անվճար կրթության ստանալու իրավունքի կարևորությունը՝ նշելով, որ ուսման վճարի փոխհատուցում տրվում է մրցույթի արդյունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ անկախ ուսումնառության համակարգից:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատության իրավասությունն է ըստ կրթական ծրագրերի՝ դիմորդների, ներառյալ՝ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց ընդունելության, ուսումնական գործընթացի կազմակերպումը: Այնինչ ստացվել են բողոքներ սույն հոդվածով նախատեսված պահանջների չպահպանման վերաբերյալ: Մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից 26.04.2012թ. թիվ 597 ընդունված որոշման համաձայն՝ ընդունելության քննությունները միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններն են: Ընդունելության քննությունները կազմակերպում և անցկացնում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: ՀՀ իրավական ակտերի մասին օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ: Այսինքն, վերոնշյալ դրույթների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ բարձրագույն ուսումնական հաստատության իրավասությունն է դիմորդների՝ ներառյալ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց ընդունելության կազմակերպումը: Նշենք նաև, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության օրենքներին:

Շարունակվում է չլուծված մնալ գիտական աստիճան ունեցող անձանց աշխատավարձի հավելավճարի տրամադրման հարցը: Այսպես, «Գիտական և գիտատեխնիկական

գործունեության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի կիրարկումն ապահովելու նպատակով ենթաօրենսդրական ակտ դեռևս չի ընդունվել: Նախարարությունից հայտնել էին, որ վերջիններիս կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ իր համապատասխան փաստաթղթերի փաթեթով, որը հոկտեմբերի 16-ին ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Խիստ մտահոգիչ է այն, որ Նախարարության կողմից այս հարցի լուծման կապակցությամբ 2012 թվականի ընթացքում չի ընդունվել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտ, ինչպես նաև «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը նույնիսկ չի ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը: Արդյունքում մի շարք գիտական աստիճան ունեցող անձանց աշխատավարձի հավելավճարի տրամադրման հարցը մնում է չլուծված:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հետևողական գտնվել մամուլում հրապարակված տեղեկությունների, ինչպես նաև Նախարարությանն ուղղված դիմում-բողոքների միջոցով ոլորտին առնչվող խնդիրների պատշաճ քննարկման և լուծման նկատմամբ՝ այդ կերպ ամրապնդելով Նախարարության և քաղաքացիական հասարակության միջև կապը:
- Հետևողական լինել «Հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություններում օգտագործվող ձեռնարկների փորձաքննության և գործածության երաշխավորման կարգը» ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվելու և այն համակարգ մտցնելու ուղղությամբ:
- Մշակել և ներդնել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված առավել արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաև որպես հարկադրանքի միջոց՝ պատասխանատվության հստակ չափորոշիչներ:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ ապահովելու համար ներառական կրթության ներդրումը բոլոր հանրակրթական դպրոցներում:
- 2013 թվականին իրականացնել միջոցառումներ Երևանի և ՀՀ մարզերի բոլոր հանրակրթական դպրոցներում ջեռուցման խնդիրը լուծելու, անբավարար պայմաններում գտնվող դպրոցները հիմնանորոգելու և «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրով նախատեսված արդյունքին հասնելու ուղղությամբ:
- Միջոցներ ձեռնարկել ուսանողական խորհուրդների քաղաքականացվածությունը վերացնելու նպատակով:
- Միջոցներ ձեռնարկել այսուհետ ապահովելու համար ոչ միայն սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողների, այլև բոլոր ուսանողների՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունքը:
- Ձեռնարկել անհրաժեշտ և արդյունավետ միջոցներ ապահովելու համար բարձրագույն ուսումնական հաստատությունների անկախությունն ու

ինքնավարությունը՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթին համապատասխան:

- Ցուցաբերել պատշաճ հետևողականություն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի կիրարկումն ապահովելու նպատակով:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի խնդիրն է պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը: Կադաստրն իրականացնում է գույքի (անկախ սեփականության ձևից) նկատմամբ իրավունքների, սահմանափակումների և օգտագործման նկատմամբ սահմանափակումների պետական գրանցում, ապահովում է անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների մասին տեղեկատվության հավաստիությունը, ամբողջականությունը, մատչելիությունը, արդիականությունը և հրապարակայնությունը, մշակում է բնագավառի գործունեությունը կարգավորող օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծեր, տրամադրում է թույլտվություններ գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման համար, և այդ աշխատանքների նկատմամբ իրականացնում վերահսկողություն:

2012 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պատասխանատվության ոլորտում էական և համակարգային թերացումներ չեն արձանագրվել: Կադաստրի պետական կոմիտեն դրսևորել է պատշաճ մոտեցում Մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին արձագանքելու ուղղությամբ և բարելավել է իր գործունեությունը: Ոլորտում հայտնաբերված որոշ խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

2012 թվականին Կադաստրի պետական կոմիտեի կողմից ներդրվել է գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման դիմումների և փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով գրանցման կարգը, ինչը էապես բարելավել է անշարժ գույքի պետական գրանցման վարչարարությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրման արդյունքում պարզ է դարձել, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում առկա օրենսդրական բացի պատճառով քաղաքացիների համար անհարկի դժվարություններ են ստեղծվում պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը չեղարկելու գործընթացում: Մասնավորապես, օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում կարող է չեղարկվել պայմանագրի կողմերի համատեղ դիմումի հիման վրա: Սակայն պրակտիկայում շատ են դեպքերը, երբ կողմերի միջև կնքված պայմանագրի գործողության ժամկետն արդեն լրացել է կամ անորոշ ժամկետով կնքված պայմանագրից կողմը հրաժարվել է՝ երեք ամիս առաջ տեղեկացնելով այդ մասին պայմանագրի մյուս կողմին: Նշված դեպքում, համաձայն օրենքի վերոնշյալ հոդվածի պահանջի, պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը կրկին չեղարկվում է պայմանագրի կողմերի համատեղ դիմումի հիման վրա: Այնինչ, ըստ ստացված դիմում-բողոքների, շատ են եղել դեպքերը, երբ պայմանագրի ժամկետի ավարտի կամ անորոշ ժամկետով պայմանագրից հրաժարվելու դեպքում, մյուս կողմին պատշաճ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

կարգով ծանուցելուց հետո, պայմանագրի մյուս կողմը չարամտորեն խուսափում է իրավունքի պետական գրանցման չեղարկման համար դիմում ներկայացնել կամ վերջինիս գտնվելու վայրը հայտնի չէ: Ըստ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տված պարզաբանման՝ նման դեպքերում հարցը կարող է կարգավորվել դատական կարգով: Այսինքն, ստեղծվում է մի իրավիճակ, երբ անձը անորոշ ժամկետով կնքված պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով միակողմանիորեն դադարեցնելիս ստիպված է դիմել դատարան, որպեսզի կարողանա չեղարկել պայմանագրի մյուս կողմի՝ պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը, ինչն անհարկի բարդություններ է առաջացնում անձի համար: Պաշտպանի կողմից այս խնդրի լուծման համար ներկայացվել է առաջարկություն Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու համար, որը քննարկման փուլում է:

Ստացվել են նաև բողոքներ, որոնք վերաբերել Կադաստրի որոշ աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությանը: Այսպես, գրանցվել է դեպք, երբ քաղաքացուն 1993թ.-ին Էջմիածին քաղաքում անհատույց տրվել է տնամերձ հողամաս՝ սեփականության իրավունքով: 2012թ-ին Էջմիածնի քաղաքապետի որոշմամբ քաղաքացու տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը և օժանդակ շինությունները օրինական են ճանաչվել: Բայց երբ քաղաքացին շինությունների գրանցման համար դիմել է Կադաստր՝ մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, որ տվյալ հողամասը քաղաքացուն հատկացվել է 1993թ. դեկտեմբերի 20-ի որոշմամբ և քանի որ այդ ժամանակ արդեն հողերի անհատույց սեփականաշնորհման գործընթացն ավարտված է եղել, ուստի հիմա անհրաժեշտ է ներկայացնել հողամասի գնման վերաբերյալ փաստաթղթեր: Այնինչ, համաձայն 29.01.1991թ.-ի ՀՀ հողային օրենսգրքի (ուժը կորցրել է 15.06.2001թ.-ին)՝ և 20.02.1991թ.-ի «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 04.01.2007թ.-ին)՝ 1993 թվականին քաղաքացիներին տնամերձ (օժանդակ) հողամասերը, որպես սեփականություն տրամադրվել են անհատույց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Ընդունելով Պաշտպանի հիմնավորումները՝ Կադաստրը իրականացրել է քաղաքացու՝ իր տնամերձ հողամասի վրա գտնվող շինությունների նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցումը: Կադաստրի աշխատակիցների մասնագիտական անբավարար պատրաստվածության մասին վկայող դեպքերը մտահոգիչ են, քանի որ վնասում են Կադաստրի հանդեպ հանրության վստահության բարձրացմանը: Անհրաժեշտ է պատշաճ հետևողականություն ցուցաբերել նաև Կադաստրի աշխատակիցների մասնագիտական բարձր պատրաստվածության նկատմամբ՝ հաշվի առնելով այն, որ ընթացիկ տարում, բացի վերոնշյալ դեպքից, գրանցվել են նաև բողոքներ, երբ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տեղեկատվության հիման վրա ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն արգելանք է դրել գործով պատասխանող կողմ հանդիսացող անձի երեխաներին պատկանող անշարժ գույքի վրա, ինչն օրենքով արգելված է:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Միջոցներ ձեռնարկել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասում կատարելու համապատասխան լրացում ապահովելու համար անձի հնարավորությունը՝ պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը չեղարկելը, անորոշ ժամկետով կնքված պայմանագիրը միակողմանիորեն դադարեցնելու դեպքում:
- Միջոցներ ձեռնարկել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի որոշ աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունը բարձրացնելու համար:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական պաշտպանության ու սոցիալական աջակցության, քաղաքացիների աշխատանքային իրավունքների պաշտպանության, կենսաթոշակի իրավունքի իրականացումն ապահովելու, բնակչության զբաղվածության, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության բնագավառների պետական քաղաքականության, սոցիալական ապահովության նպատակային ծրագրերի մշակման և իրականացման համար:

2012 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ոլորտում իրավասու մարմինների հայեցողական գնահատման հետևանքով բազմաթիվ խախտումներ են տեղի ունեցել:
- Նախարարությունը նույնիսկ ուժի մեջ մտնելուց հետո որոշակի ժամանակահատված չի կատարել ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ թիվ 1050 որոշման պահանջները, որոնք վերաբերում էին լիազորագրով կենսաթոշակ ստանալուն:
- «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթները կիրառել է սեփական մեկնաբանությամբ, չնայած Սահմանադրությամբ կամ օրենքներով լիազորված չէ մեկնաբանել օրենքը, այն էլ ի վնաս քաղաքացիների:
- Չեն լուծվել թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և ապաստան տրամադրելու խնդիրները:
- Մշակված չեն եղել անհրաժեշտ համալիր միջոցառումներ և ծրագրեր, որոնք կհանգեցնեն մանկատների բեռնաթափմանը:
- Առկա է օրենսդրական հստակեցման անհրաժեշտություն՝ խնամակալության և հոգաբարձության ինստիտուտի կարգավորման, ինչպես նաև խնամակալների և հոգաբարձուների մասնագիտական պատրաստվածության և վերջիններիս գործունեության թափանցիկության բացակայության վերաբերյալ:
- Ընդունելով երեխայի իրավունքների պաշտպանության 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին որոշումը՝ ՀՀ Կառավարությունը ուժը կորցրած է ճանաչել երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագիրը, ինչը վկայում է երեխաների պաշտպանությանն ուղղված ռազմավարական ծրագրերի նախատեսված ժամկետների սահմաններում իրականացման հետևողականության բացակայության մասին:
- Չեն ձեռնարկվել արդյունավետ միջոցառումներ ուղղված արհեստակցական միությունների կայացմանը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Գրանցվել են կնքված աշխատանքային պայմանագրի օրինակն աշխատողին չտրամադրելու մի շարք դեպքեր:
- Շարունակվում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը:
- Արձանագրվել են բողոքներ՝ գործատուների կողմից առանց աշխատանքային պայմանագիր կնքելու անձանց աշխատանքի ընդունելու, աշխատավարձ չվճարելու, աշխատանքից կամայական ազատելու, վերջնահաշվարկ չկատարելու, արձակուրդի համար չվճարելու վերաբերյալ:
- Կարգավորված չէ ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, որտեղ ընդգրկված չեն ՀՀ ԳԱԱ գիտության բնագավառի աշխատողները:
- Թեև մշակվել է հայեցակարգ, սակայն, շարունակվում են չլուծված մնալ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդիրները, ինչպես նաև, նրանց կարգավորումը:
- 2012 թվականին առկա են եղել բազմաթիվ բողոքներ, որոնք վերաբերել են գործատուների կողմից անձանց արտադրական խեղման համար վնասի փոխհատուցման ոչ իրավաչափ դադարեցմանը և ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից այդ խնդրի կապակցությամբ միջոցներ չեն ձեռնարկվել:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Եռակողմ սոցիալական գործընկերության շրջանակներում Նախարարությունը ակտիվորեն համագործակցում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի հետ:
- Ներդրվել է ԲՍՓՀ-ների կողմից կայացված որոշումների բողոքարկման եռաստիճան համակարգ:
- Իրականացվել է մոնիթորինգ և վերահսկողություն բնակչության սոցիալական պաշտպանության որոշ բնագավառներում արձանագրված չարաշահումների դեպքերը բացառելու և/կամ կանխարգելելու նպատակով:
- Ձևավորվել և գործարկվել է «Էլեկտրոնային կենսաթոշակ» կենտրոնացված տեղեկատվական շտեմարանը:
- Հաշմանդամություն ունեցող անձանց խտրականության բացառման նպատակով, մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- Մշակվել է նախագիծ, որը նախատեսում է թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների խնդիրների լուծման համար աշխատանքային խմբի ստեղծումը:
- 2012 թվականին պատրաստվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առաջին զեկույցը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2012 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից ստացվել են բազմաթիվ բողոքներ՝ բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ոլորտում իրավասու մարմինների կողմից հայեցողական գնահատման և կոռուպցիոն դրսևորումների դեպքերի վերաբերյալ: Նախարարության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում, ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության փորձաքննական բաժնում հայտնաբերվել են մի քանի միլիոն ՀՀ դրամի խախտումներ: Նշված խախտումները հիմնականում հանդիսանում են հայեցողական գնահատման արդյունք: Մեր կողմից բարձրացվել էր հայեցողական գնահատման դեպքերի կանխարգելման հարցը, քանի որ բազմաթիվ անձանց իրավունքներ խախտվում են անարդարացի որոշումների պատճառով: Նախարարության կողմից հաշմանդամության սահմանման գործող չափանիշները հստակեցնելու նպատակով 2012 թվականի ընթացքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ: Մասնավորապես, նախատեսվել է գործակալությունում ստեղծել իրավական ապահովման, տեղեկատվական-վերլուծական, ինչպես նաև փորձաքննության բաժիններ: Ստեղծվել է նաև բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում կայացված որոշումները բողոքարկելու եռաստիճան համակարգ: Ողջունելով Նախարարության կողմից նման գործողությունների ձեռնարկումը՝ միաժամանակ արձանագրում ենք, որ դեռևս խնդիրը լուծում չի ստացել, քանի որ նշված հարցերը կարգավորող իրավական ակտերում այնպիսի չափորոշիչներ, որոնք կբացառեն կամայական գնահատողական որոշումները, դեռևս չեն նախատեսվել:

2010 թվականին կենսաթոշակային ոլորտում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվել էր միայն Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի կողմից վավերացված լիազորագրով կենսաթոշակի վճարման կարգը: Վերոգրյալ պահանջի նախատեսումը մեր գնահատմամբ հանգեցնում էր ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով երաշխավորված անձի սոցիալական ապահովության իրավունքի այնպիսի սահմանափակմանը, որը չունի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում: Ավելին, այս հարցի վերաբերյալ Նախարարությունը հաստատել էր իրենց կողմից ձևավորված այն իրավակիրառական պրակտիկան, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված և փաստաթղթերի ճանաչման այլ ընթացակարգ նախատեսող միջազգային պայմանագրերի անդամ պետություններում սահմանված կարգով հաստատված լիազորագրերը ՀՀ-ում ևս հիմք չեն հանդիսանում կենսաթոշակի վճարման համար: Նշված խնդիրների կապակցությամբ Պաշտպանի դիմումի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանը իր 2012 թվականի հոկտեմբերի 2-ի ՍԴՈ-1050 որոշմամբ սահմանել էր, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նման մեկնաբանությունը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության պահանջներին և հստակեցրել էր լիազորագրով կենսաթոշակ ստանալու կարգը, համաձայն որի՝ քաղաքացին լիազորագիր կարող է ստանալ նաև դիմելով իր փաստացի բնակության երկրի համապատասխան նոտարական գրասենյակին: Այսինքն, լիազորագրով կենսաթոշակ ստանալու համար բավարար է նաև օտարերկրյա պետության նոտարի կողմից տրված լիազորագիրը և պարտադիր չէ Հայաստանի Հանրապետություն տարեկան առնվազն մեկ անգամ վերադառնալը: Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրական դատարանի որոշումը ուժի մեջ է մտնում

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

հրապարակման պահից, Նախարարությունը շուրջ երկու ամիս չէր ապահովում այդ որոշմամբ սահմանված կարգի կիրառումը, որի արդյունքում կրկին խախտվում էին անձանց սոցիալական իրավունքները: Նախարարությունը իր գործողությունների և/կամ անգործության վերաբերյալ տալիս էր տարաբնույթ մեկնաբանություններ, սակայն դեկտեմբեր ամսին, ի պատասխան մեր գրությանը. հայտնել էին, որ նշված ձգձգումները պայմանավորված էին տեղեկատվական շտեմարանում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությամբ: Սակայն այդ շտեմարանում փոփոխություններ կատարելը փաստացի տևել է շուրջ երկու ամիս:

2012 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են տասնյակ բողոքներ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթներ Նախարարության կողմից հետադարձ ուժով մեկնաբանելու և կիրառելու վերաբերյալ: Նշված դրույթների կիրառման իրավաչափության հարցով Պաշտպանը դիմել էր ՀՀ Սահմանադրական դատարան: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի՝ աշխատանքային կենսաթոշակի վերահաշվարկման պայմանների (արտոնյալ պայմաններով վերահաշվարկի), 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ կենսաթոշակի վճարումը դադարեցված լինելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու դեպքում նախորդող մեկ տարվա համար վճարելու, 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու պայմանների և ժամկետի (համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառելու), 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի՝ աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածների (ուսումնական հաստատությունների, առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի չհաշվառելու) դրույթների վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1061 որոշմամբ սահմանել էր, որ վերոհիշյալ նորմերի իրավաչափ կիրառման և դրա հետ ուղղակիորեն առնչվող անձանց իրավունքների պաշտպանության հարցերը անձանց կողմից պետք է ներկայացվեն դատարաններում, քանի որ վարչական մարմինն իրավասու չէ ի պաշտոնե մեկնաբանել օրենքի նորմը և ձևավորել լեգիտիմ իրավակիրառական պրակտիկա: Սույն գործով սահմանադրական դատարանն առանձին անդրադարձել էր նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորմանը և արձանագրել էր, որ վերոնշյալ փոփոխության ընդունման պահից (19.03.12) վեց ամսվա ընթացքում այն չէր կարող կիրառվել Հայաստանի Հանրապետությունից ժամանակավոր բացակայած՝ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օտարերկրյա պետություններում հյուպատոսական հաշվառման են կանգնած եղել:

Արդի խնդիր է հանդիսանում Հայաստանում թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների հարցի առկայությունը, ինչը համակարգային լուծումներ պահանջող հիմնախնդիրներից է: 2012 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և երեխայի իրավունքների պաշտպանության միջոցառումների ժամանակացույցը: Այնինչ, ՀՀ կառավարության 18.12.2003թ. թիվ 1745-Ն որոշմամբ հաստատված ծրագրին համապատասխան՝ մինչև 2009թ. նախատեսված էր ստեղծել թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների խնամքի 3 կենտրոններ, սակայն

հետագայում թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների հարցը կորցրել է հրատապությունը, քանի որ ՀՀ ոստիկանության կողմից վարվող վիճակագրության համաձայն՝ 2012թ.-ին ընդամենը 17 երեխա է վերցվել հաշվառման: Այն փաստը, որ մինչ երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագրի ավարտը Կառավարության կողմից ընդունվել է նշված ծրագրի ուժը կորցրած ճանաչելու և մեկ այլ՝ 2012-2016 թվականների երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագիր հաստատելու մասին որոշում, վկայում է ոլորտում պատասխանատու պետական մարմինների՝ իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման, նախատեսված ժամանակի սահմաններում ծրագրի դրույթների իրականացմանը հետամուտ չլինելու մասին: Ելնելով վերոնշյալից և մտահոգիչ համարելով մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդիրը ՀՀ-ում՝ առաջարկում ենք մշակել հստակ քաղաքականություն ուղղված 6-ից մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած, մուրացկանությամբ զբաղվող, ծնողների խնամքից զրկվելու վտանգի տակ գտնվող, ինչպես նաև աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում հայտնված երեխաներին տրամադրվող սոցիալ-մանկավարժական, սոցիալ-հոգեբանական և անհրաժեշտ այլ ծառայությունների բարելավմանը:

Հասարակության զարգացման կարևորագույն գրավականներից է հանդիսանում երեխայի՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացումը, որը կհանգեցնի մանկատների բեռնաթափմանը: Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում 2011 թվականին ՀՀ կառավարության գործունեության գերակա խնդիր է համարվել հանրապետության մանկատների բեռնաթափումը: Ողջունելով Նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումները՝ այդուհանդերձ պետք է արձանագրել, որ մանկատների բեռնաթափման համար արդյունավետ մեխանիզմ դեռևս չի մշակվել: Միջազգային փորձում ընդունված է խնամատար ընտանիքների ինստիտուտը, որի գոյության նպատակն է մանկատների երեխաներին հանձնել այդ ընտանիքներին: Ավելին, նշյալ ճանապարհով նաև լուծվում է խնամատար ընտանիքներում գտնվող երեխաների՝ մանկատներից դուրս հետագա կյանքի կազմակերպման և անհրաժեշտ պայմանների ապահովման հարցը: Այնինչ, ՀՀ-ում խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացմանը նպաստող գործոնները բացակայում են, ինչի հետևանքով այսօր Հայաստանում այս ինստիտուտի զարգացմանն ուղղված ծրագիրը շարունակվում է իրականացվել ընդամենը 20 խնամատար ընտանիքների հետ: ՀՀ կառավարությունը նշված ինստիտուտի խթանման համար չի ձեռնարկում նշանակալից և արդյունավետ միջոցներ:

Մտահոգության տեղիք է տալիս նաև ՀՀ-ում խնամակալության և հոգաբարձության ինստիտուտի ներկայիս վիճակը: Ստացվել են մի շարք բողոքներ կապված սույն ինստիտուտի գործունեության կարգի օրենսդրական ոչ բավարար կարգավորման, ինչպես նաև խնամակալների և հոգաբարձուների մասնագիտական պատրաստվածության բացակայության և վերջիններիս գործունեության թափանցիկության վերաբերյալ: Մասնավորապես, խնամակալության և հոգաբարձության մարմնի հանձնաժողովները կազմված են կամավոր հիմունքներով աշխատող 5-8 անձանցից, ում համար այս աշխատանքը հիմնական բնույթ չի կրում և վերջիններս հատկացնում են ընդամենը 2-3 ժամ՝ փորձելով լուծել իրենց համայնքի՝ կյանքի դժվարին պայմաններում հայտնված ընտանիքների և երեխաների խնդիրները: Նման պայմաններում հանձնաժողովի աշխատանքը արդյունավետ չի կարող լինել: Խնամակալության հանձնաժողովից

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

պահանջվում է ներկայացնել երեխաների շահերը դատարանում, բայց միշտ չէ, որ հանձնաժողովի անդամները իրավական գիտելիքներ ունեն և դատական նիստում ընդամենը ներկա են լինում ֆիզիկապես: Բացառությամբ ՀՀ քաղաքացիական և ՀՀ ընտանեկան օրենսգրքերի, որոնցում ամրագրված են խնամակալության և հոգաբարձության մարմնի և նրա գործունեության վերաբերյալ ընդհանուր և կոնցեպտուալ դրույթներ, հանձնաժողովի ամենօրյա աշխատանքը կարգավորող և նրա անդամներին ներկայացվող պահանջները նախատեսվում են միայն այդ մարմնի կանոնադրությամբ, որը բավականին թերի փաստաթուղթ է նման կարևոր ոլորտը կարգավորելու համար: Օրենքով նշյալ հանձնաժողովներն ու նրանց անդամները կրում են ամեն պարտականություն և պատասխանատվություն, այնուամենայնիվ, վերջիններիս աշխատանքը բավարար ռեսուրսների, մոտիվացիայի և փորձառություն բացակայության պայմաններում արդյունավետ չէ: Նման աշխատանք կարող են ապահովել միայն համայնքին կից մասնագիտացված սոցիալական ծառայությունները: Անհրաժեշտ է նշանակալից փոփոխություններ կատարել այս ոլորտում հանձնաժողովի անդամների մասնագիտական պատրաստվածությունը և իրենց կատարած աշխատանքի նկատմամբ մոտիվացիայի բարձրացումը ապահովելու համար: Հարկավոր է ոլորտում իրականացնել նաև օրենսդրական փոփոխություններ՝ հստակեցնելու հանձնաժողովի անդամներին առաջադրվող պայմանները և նրանց կողմից կատարվող աշխատանքը:

Ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում անձանց աշխատանքային իրավունքների երաշխավորման և պաշտպանության համար կարևորվում է արհեստակցական միությունների դերակատարությունը: Չնայած ՀՀ գործող օրենսդրությունը չի պարունակում արհեստակցական միությունների կայացմանը խոչընդոտող դրույթներ, սակայն նշված ինստիտուտը դեռևս կայացած չէ մեր հասարակությունում: Նախարարությունը 2012 ընթացքում շարունակել է համագործակցությունը Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ՝ երկարաձգելով համագործակցության պայմանագիրը մինչև 2015 թվականը: Սակայն ճյուղային, տարածքային և կազմակերպության մակարդակում սոցիալական գործընկերության զարգացումն ու աշխուժացումը ապահովելու նպատակով կազմակերպված սեմինար-խորհրդատվությունները միայն բավարար չեն: Որպես աշխատողների իրավունքների պաշտպանության գործող մեխանիզմ՝ դրանք չեն խթանում արհեստակցական միությունների ձևավորմանը և նրանց բարձր դերի կայացմանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածը սահմանում է աշխատանքային պայմանագրի կնքման կարգը: Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ուսումնասիրման արդյունքում բարձրացվել էր այն խնդիրը, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում օրենսգրքից հանվել է այն դրույթը, որը նախատեսում է գործատուի կողմից կնքված աշխատանքային պայմանագրի օրինակը աշխատողին տալու պարտականությունը և միայն կնքված պայմանագրի իր օրինակը ստանալուց հետո աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունների կատարմանն անցնելը: Պաշտպանի կողմից առաջարկ էր կատարվել գործնականում գործատուի կողմից արդեն իսկ կնքված պայմանագրում կամայական փոփոխությունների և/կամ այլ չարաշահումների կատարումը բացառելու համար օրենսդրական ճանապարհով կարգավորել այդ հարցը, սակայն մինչ օրս նման քայլեր չեն ձեռնարկվել:

Շարունակվում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը: Պատահական չէ, որ Սահմանադիրը բնակչության

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

զբաղվածությանը նպաստելը և հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքին ներգրավելը դիտարկում է որպես պետության պոզիտիվ պարտականություններ: Նման դրույթ նախատեսված է նաև մի շարք ժողովրդավարական պետությունների համապատասխան օրենսդրություններում, ինչպես նաև ՄԻԵԴ մի շարք որոշումներում: Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը վերջիններիս հասարակական կյանքին ներգրավվման և ինքնուրույնության ապահովման կարևորագույն տարրերից մեկն է հանդիսանում: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ գործող օրենսդրությունը պարունակում է դրույթներ, որոնք երաշխավորում են հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի իրավունքի ապահովումը, սակայն, ըստ մեր աղբյուրների, հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր թվի 65%-ն աշխատանքային տարիքի է, նրանց շուրջ 21,4%-ը կամ 700 մարդ է համարվում զբաղված, իսկ զուտ աշխատանքային գործունեությամբ զբաղված է շուրջ 9%-ը: Նշյալ տվյալներից կարելի է եզրակացնել, որ բավարար միջոցներ պետության կողմից չեն ձեռնարկվել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի, զբաղվածության ապահովման խնդիրը լուծելու և/կամ բարելավելու համար:

Ընթացիկ տարում կրկին արձանագրվել են բողոքներ գործատուների կողմից առանց աշխատանքային պայմանագիր կնքելու անձանց աշխատանքի ընդունելու, աշխատավարձ չվճարելու, աշխատանքից կամայական ազատելու, վերջնահաշվարկ չկատարելու, արձակուրդի համար չվճարելու վերաբերյալ: Մեր հարցմանն ի պատասխան Նախարարությունից հայտնել են, որ աշխատանքային իրավունքների խախտումների մասին տեսչություն է դիմել 543 քաղաքացի և իրենց դիմումների հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ: Ստուգումների արդյունքում արձանագրված ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների խախտումները վերացնելու և դրանք կանխարգելելու նպատակով՝ գործատուներին տրվել են պարտադիր կատարման հանձնարարականներ և կիրառվել են վարչական տույժեր: Այնուամենայնիվ, չնայած ձեռնարկված միջոցների, նշված համակարգային խնդիրը դեռևս լուծում չի ստացել: Խիստ մտահոգիչ է նաև, որ այս ոլորտում տեղի ունեցող աշխատանքային օրենսդրության պահանջների խախտումները վերաբերում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց: Նախարարության կողմից տրված պատասխանից պարզ է դառնում նաև, որ Նախարարությունը սեփական նախաձեռնությամբ չի իրականացրել ստուգումներ և մշտադիտարկումներ նշված խնդրի կանխարգելման համար, այլ արձագանքել է միայն անհատական դիմումների առկայության դեպքում:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում բարձրացվել է խնդիր այն մասին, որ Կառավարության 2005 թ. օգոստոսի 11-ի թիվ 1599 որոշման մեջ, որը սահմանում է ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, ընդգրկված չեն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ ԳԱԱ) գիտության բնագավառի աշխատողները, այնինչ նման արձակուրդի իրավունք է նախատեսված Հանրակրթական հիմնական ընդհանուր, հատուկ և մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող անձանց համար: Այդ խնդրի վերաբերյալ մեր գրությանն ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հայտնել է, որ նշված ցանկում ՀՀ ԳԱԱ գիտության բնագավառի աշխատողների ընդգրկման հարցի շրջանակներում կազմակերպված քննարկումների արդյունքներով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 2011 թվականի հունվարին պաշտոնական շրջանառության մեջ դրեց ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում էր ՀՀ ԳԱԱ գիտության բնագավառի աշխատողներին ընդգրկել

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

երկարացված՝ մինչև 35 օր տևողությամբ ամենամյա արձակուրդի իրավունք ունեցող աշխատողների ցանկում: Սակայն 2011 թվականին այդ նախագիծը հանվել է քննարկումից: Ըստ Նախարարության հայտնած դիրքորոշման, նման արտոնություն չնախատեսելը խախտում չի հանդիսանում, քանի որ պարտադիր է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված պայմանների՝ մտավոր, հուզական գերլարվածության, մասնագիտական ռիսկի առկայությունը: Մինչդեռ, հիշյալ հոդվածով բոլոր պայմանների պարտադիր առկայության պահանջ չի նախատեսվում:

Շարունակվում են չլուծված մնալ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդիրները՝ վճարման համար պատասխանատու կազմակերպության լուծարման ժամանակ համապատասխան կարգավորումների բացակայության հետևանքով: Նման դեպքերում վնասի հատուցում կատարելու պարտականություն կրող կազմակերպություն կամ հատուցման համակարգ դեռևս նախատեսված չէ: Նախկինում Նախարարությունից տեղեկացրել էին, որ 2011 թվականի ընթացքում իրենց կողմից ՀՀ Կենտրոնական բանկի հետ համատեղ մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում արտադրական դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից ապահովագրության ներդրման» հայեցակարգը: 2012 թվականին Նախարարությունից հայտնել են, որ հայեցակարգի նախագծի լրամշակված տարբերակը քննարկվել է մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի նիստում: Քննարկման արդյունքներով որոշվել է նախագիծը ևս մեկ անգամ մանրամասն քննարկել և լրամշակել շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, սակայն այդ նախագիծը առ այսօր չի ընդունվել և աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդիրները մնում են չլուծված: Պարզ չէ նաև, թե այդ հայեցակարգի ընդունումը կարող է արդյոք լուծել առողջությանը վնաս պատճառած և փոխհատուցում չստացած անձանց խնդիրները մինչև համապատասխան օրենքի ընդունումը: Խիստ մտահոգիչ է այն հանգամանքը, որ լրամշակումներ կատարելու պատճառաբանությամբ դեռևս 2011 թվականին մշակված հայեցակարգը 2012 թվականի ընթացքում չի ընդունվել:

Պաշտպանին հասցեագրած քաղաքացիների դիմումներից պարզ է դարձել, որ աշխատանքի ընթացքում ստացված արտադրական խեղման համար աշխատողին նշանակվել է վնասի փոխհատուցում, սակայն վնասի փոխհատուցումը վճարելը դադարեցվել է գործատուի կողմից՝ պատճառաբանելով, որ քաղաքացին ձեռք է բերել կենսաթոշակի իրավունք: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածը, որով կարգավորվում է վերոնշյալ խնդիրը, նման դադարեցման հիմք չի նախատեսում: Սակայն գրանցվել են դեպքեր, երբ ՀՀ աշխատանքի պետական տեսչության վարչության կողմից հղում է կատարվել ՀՀ վճռաբեկ դատարանի 14.10.2005թ. թիվ 3-2004 (ՎԴ) քաղաքացիական գործով որոշմանը և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 13.01.2006թ. թիվ 06-206 վճռին, որոնց համաձայն՝ ՀՀ վճռաբեկ և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտել են այն դիրքորոշումը, որ քաղաքացու կենսաթոշակի անցնելու հիմքով առողջությանը պատճառած վնասի հատուցման հիմքերը վերանում են: Գտնում ենք, որ նշված որոշումը կիրառելի է եղել միայն այդ գործի շրջանակներում և չի կարող կիրառվել որպես նախադեպային որոշում: Ավելին, Վճռաբեկ դատարանը իր 27.12.2011թ. որոշմամբ սահմանել է, որ առողջության քայքայումից հետո աշխատելու դեպքում

աշխատավարձ ստանալը չի վերացնում առողջությունը վերականգնելու փուլում չաշխատելու հետևանքով չստացած, կորցրած աշխատավարձը (եկամուտը) և այլ վնասները ստանալու տուժողի իրավունքը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ոլորտում իրավասու մարմինների կողմից հայեցողական գնահատման բացառման, հաշմանդամության որոշման չափորոշիչների առավելագույն հստակեցման, ԲՍՓՀ-ների գործունեության թափանցիկության ապահովման ուղղությամբ:
- Անմիջապես արձագանքել ՀՀ Սահմանադրական դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումներին և ապահովել դատարանի որոշմամբ սահմանված դիրքորոշումների և/կամ մեկնաբանությունների գործնականում կիրառումը:
- Ձերծ մնալ իրավական ակտերի նորմերը մեկնաբանելուց և իրավակիրառ պրակտիկա ձևավորելուց՝ հաշվի առնելով, որ դա բացառապես դատական իշխանության իրավասության շրջանակում է:
- Ապահովել երեխաների պաշտպանությանն ուղղված ռազմավարական ծրագրերի պատշաճ և նախատեսված ժամանակի սահմաններում իրականացման հետևողականության պահպանում, ինչպես նաև՝ հետամուտ լինել մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդրի լուծմանը:
- Օգտագործելով միջազգային փորձը՝ պետական բյուջեում համապատասխան վերաբաշխումներ կատարել և ավելացնել խնամատար ընտանիքների թիվը՝ մանկատների բեռնաթափումն իրագործելու նպատակով:
- Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության արդյունավետության և թափանցիկության բարձրացման համար:
- Ձեռնարկել համակարգային միջոցառումներ արհեստակցական միությունների կայացմանն աջակցելու գործում:
- Հետամուտ լինել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածում հստակեցում իրականացնելուն՝ գործնականում գործատուի կողմից արդեն իսկ կնքված պայմանագրում կամայական փոփոխությունների և/կամ այլ չարաշահումների կատարումը բացառելու նպատակով:
- Ձեռնարկել միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը լուծելու և/կամ բարելավելու համար:
- Սեփական նախաձեռնությամբ իրականացնել ստուգումներ և մշտադիտարկումներ՝ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը բարձրացնելու, ինչպես նաև՝ համարժեք պատասխանատվության միջոցների կիրառման եղանակով անօրինական աշխատանքի հայտնաբերման, աշխատավարձի, արտաժամյա աշխատանքի չվճարման, աշխատանքից կամայական ազատման և այլ խախտումները կանխելու և/կամ բացառելու նպատակով:
- Որպես ոլորտի լիազոր մարմին՝ միջոցներ ձեռնարկել ՀՀ ԳԱԱ գիտության բնագավառի աշխատողներին ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք

ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը սահմանող Կառավարության՝ 2005 թ. օգոստոսի 11-ի թիվ 1599 որոշման մեջ ընդգրկելու ուղղությամբ:

- Ձեռնարկել անհապաղ միջոցներ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդիրները արդյունավետ լուծման նպատակով օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու ուղղությամբ՝ վճարման համար պատասխանատու կազմակերպության լուծարման դեպքում:
- Միջոցներ ձեռնարկել վերացնելու համար գործատուների կողմից անձանց արտադրական խեղման համար վնասի փոխհատուցման ոչ իրավաչափ դադարեցման դեպքերը:
- 2012 թվականին ոլորտում արձանագրված չարաշահումների դեպքերը չկրկնելու համար պարբերաբար իրականացնել մշտադիտարկում՝ կենսաթոշակների և նպաստների նշանակման, քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպման օրենսդրությամբ սահմանված պահանջների պատշաճ կատարման ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ առողջապահության նախարարության նպատակներն ու խնդիրներն են հանրության և ամեն մարդու առողջության պահպանումը, բարելավումը, հիվանդությունների կանխարգելումը, հաշմանդամության ու մահացության նվազեցման ծրագրերի մշակումը և իրագործումը, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, աշխատողների առողջության պահպանումը, հանրապետությունում արտադրվող և ներմուծվող դեղերի անվտանգության, որակի և արդյունավետության ապահովումը և այլն:

2012 թվականին ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ՝ կապված համավճարի զեղչման կամ դրա վճարումից ազատելու կարգի նկատմամբ իրականացվող ստուգումների և մշտադիտարկման ցածր արդյունավետության հետ, որը հանգեցրել է բազում խտրական դրսևորումների դեպքերի, որոնց համար պաշտոնատար անձինք պատասխանատվության չեն ենթարկվել:
- Խիստ մտահոգիչ է, որ հանրապետությունում բացակայում են շրջանառվող դեղերի որակի հսկողության մեխանիզմներ և այդ հարցը կարգավորող հատուկ մարմին, ինչի արդյունքում վտանգվում է բազմաթիվ անձանց առողջությունը:
- Առկա են եղել բազմաթիվ բժշկական ոչ իրավաչափ գործողություններ, որոնք՝ բժշկական էթիկայի կանոնների բացակայության հետևանքով, չեն ստացել համապատասխան որակում:
- Շարունակվում է չլուծված մնալ «Բժշկական սխալ» եզրույթի օրենսդրական կարգավորումը, արդյունքում կրկին անգամ գրանցվել են բժշկի անփութության կամ բժշկական սխալի հետևանքով ոչ ճիշտ բժշկական միջամտություն ցուցաբերելու մի շարք անցանկալի հետևանքներ:
- Մտահոգության տեղիք է տալիս, որ մինչ օրս չի ընդունվել մինչև 6 ամսական երեխայի կրծքով սնուցումը կարգավորող՝ «Երեխաներին կրծքով սնուցման խրախուսման և արհեստական կաթնախառնուրդների շրջանառության մասին» օրենքի նախագիծը:
- Բավարար քայլեր չեն ձեռնարկվել «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ խոցելի խմբի անձանց անվճար դեղորայքով ապահովելու պարտականությունը:
- Դեռևս իր լուծումը չի ստացել առողջապահական պետական նպատակային ծրագրերով նախատեսված 0-7 տարեկան երեխաների համար նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով իրականացվող բժշկական ծառայությունների մատուցման ապահովման խնդիրը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Ցածր է «Թեժ գիծ» ծառայության միջոցով ստացված դիմում-բողոքներին համապատասխան լուծում տրամադրելու մակարդակը:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Կեղծ դեղերի դեմ պայքարի շրջանակներում ստորագրվել են միջազգային պայմանագրեր, կազմակերպվել են խորհրդաժողով-դասընթացներ:
- Էապես բարձրացվել է շտապօգնության ծառայության որակն ու արդյունավետությունը:
- Մի շարք բժշկական միջամտություններ 0-7 տարեկան երեխաների համար իրականացվում են անվճար հիմունքներով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ մեր աղբյուրների՝ համավճարի զեղչման կամ դրա վճարումից ազատելու համապատասխան հանձնաժողովի կողմից գրանցվել են մի շարք դեպքեր, երբ դրսևորվել է ոչ միատեսակ մոտեցում և դրա համար պաշտոնատար անձինք պատասխանատվության չեն ենթարկվել: Այսպես, համավճարի զեղչման կամ դրա վճարումից ազատելու կարգը, համաձայն ՀՀ Կառավարության 04.03.2004 թվականի թիվ 318-Ն որոշման հավելվածի, իրականացվում է բուժհաստատության կողմից ստեղծված հանձնաժողովի որոշման հիման վրա: Նախարարությանը ուղարկվում է կազմված արձանագրությունը՝ դեպքերի թվաքանակի և գումարի վերաբերյալ: Մեր կողմից բարձրացված խնդրի վերաբերյալ Նախարարությունից հայտնել են, որ համապատասխան կազմակերպություններում իրականացվել են ստուգումներ և նշված խնդրի վերաբերյալ էական շեղումներ չեն արձանագրվել: Այնուամենայնիվ, նմանատիպ շեղումը հանդիսանում է լուրջ խախտում, ինչի պարագայում հարկավոր է իրավախախտներին անհապաղ ենթարկել պատասխանատվության:

Չլուծված խնդիր է շարունակում մնալ հանրապետությունում շրջանառվող դեղերի որակի պատշաճ հսկողության և «Դեղերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգի պահպանման իրականացումը: Այս խնդիրը հիմնականում արտահայտվում է ժամկետանց դեղորայքների շրջանառությամբ: Նախարարությունը այս խնդրի կապակցությամբ հայտնել է, որ հանրապետությունում շրջանառվող դեղերի որակի հսկողությունը ժամանակ առ ժամանակ իրականացվում է նախարարի հրամանով կազմակերպված հանձնախմբի կողմից, որը շուկայի ուսումնասիրության միջոցով փորձում է հայտնաբերել խախտումները: Սակայն նման կարևորագույն ոլորտի նկատմամբ հսկողությունը միայն ժամանակ առ ժամանակ իրականացնելը խիստ մտահոգիչ է: Մշտական հսկողության բացակայությունը հանգեցնում է այս ոլորտում բազմաթիվ խախտումների առկայության: Ողջունելի է 2012 թվականին Նախարարության կողմից կեղծ դեղերի դեմ պայքարի շրջանակներում թե ստորագրված միջազգային պայմանագրերը, թե կազմակերպած խորհրդաժողով-դասընթացները: Կարևորում ենք նաև առողջապահության նախարարության կողմից այս խնդրի վերաբերյալ իրականացվող աշխատանքների և վերահսկողական գործառույթների արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ կառավարություն ներկայացված ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը առողջապահական տեսչության

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

վերակազմակերպելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման արդյունքում նաև կբարելավվի կեղծ դեղերի հայտնաբերման և դրանց շրջանառությունը կանխարգելելու հետ կապված աշխատանքները: Ինչպես նաև Նախարարության կողմից պատրաստված «Դեղերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը վերջիններիս կողմից ներկայացվել է ՀՀ Կառավարության քննարկմանը: Սակայն, խնդրի հրատապությունը ենթադրում է մշտապես գործող մարմնի կազմավորում, որի միջոցով հնարավոր կլինի պարբերաբար իրականացնել շրջանառվող դեղերի որակի վերահսկողություն և դրա միջոցով վերհանել, կանխարգելել այս ոլորտում առկա խնդիրները: Նման մարմնի ստեղծումը ենթադրում է նաև համապատասխան օրենքի ընդունում կամ գործող օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարում, նման լիազորություններ վերապահելու և արդյունավետ պատասխանատվության մեխանիզմներ նախատեսելու համար:

Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում նախատեսված չեն բժշկական էթիկայի կանոններ: Նման կանոնների բացակայությունը գործնականում հաճախ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձ-պացիենտ նորմալ հարաբերությունների ձևավորման վրա բացասաբար է ազդում և չի խթանում հարգանքի, վստահության մթնոլորտի ձևավորմանը: Ավելին, Նախարարության կողմից հայտնած տեղեկությունների համաձայն՝ 2012 թվականին քաղաքացիների կողմից ստացվել է թվով 173 բողոքներ, որոնք վերաբերել են բժիշկների կողմից վատ վերաբերմունքի դրսևորմանը: Սակայն էթիկայի կանոնների բացակայությունը գործնականում անլուծելի է դարձնում նման բողոքներին արձագանքելը՝ հաշվի առնելով արարքի որակման անհնարինությունը: Գտնում ենք, որ բժշկական էթիկայի օրինակելի կանոններում, ի թիվս այլ կանոնների, պետք է զետեղվի նաև բժշկական գաղտնիքի պահպանման պահանջը: Ողջունելի է, որ 2012 թվականին Նախարարության կողմից պատրաստվել էր «Բժշկական էթիկայի օրինակելի կանոնները և բժշկական էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության օրինակելի կարգը և գործառույթները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, սակայն խիստ մտահոգիչ է, որ այն դեռևս Կառավարության կողմից չի ընդունվել և գործածության մեջ չի դրվել:

2012 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է բազմաթիվ ահազանգեր, որոնք վերաբերել են բժշկի անփութության կամ բժշկական սխալի հետևանքով ոչ ճիշտ բժշկական միջամտություն ցուցաբերելուն, ինչը հանգեցրել է անցանկալի հետևանքների: Նախարարության հավաստմամբ այդպիսի դեպքեր չեն գրանցվել, իսկ կանխարգելիչ միջոցառումներից նշվել է նախարարի՝ 2012թ. հոկտեմբերի 8-ի «Մինչև 18 տարեկան երեխաների վիրաբուժական բաժանմունք ընդունվելու և վարելու ժամանակավոր կարգը, վիրաբուժական միջամտություն իրականացնելու համաձայնագրի կամ հրաժարվելու թերթիկի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 2283-Ա հրամանը: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ միջազգային փորձում, չնայած ոչ միատեսակ, սակայն ընդունված է օրենսդրորեն «Բժշկական սխալ» եզրույթի նախատեսումը: «Բժշկական սխալ» եզրույթի ներմուծումը անհրաժեշտ է այս ոլորտում և հաշվի առնելով միջազգային փորձը՝ հարկավոր է միջոցներ ձեռնարկել այն օրենսդրորեն նախատեսելու ուղղությամբ, քանի որ դրա բացակայությունը խոչընդոտ է հանդիսանում կատարված արարքին հստակ որակում տալու և սխալ թույլ տված անձի նկատմամբ պատասխանատվության համապատասխան միջոցներ կիրառելու ենթարկելու համար: Միաժամանակ գիտակցելով, որ նման նախագիծ պատրաստելը չափազանց աշխատատար և ծախսատար գործընթաց է, որի իրականացումը նաև բավականաչափ ժամանակ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

կպահանջի՝ գտնում ենք, որ դա բխում է թե հանրության և թե Նախարարության շահերից: Ուստի՝ Նախարարությունը պետք է միջոցներ ձեռնարկի այդ խնդիրները լուծելու և հստակ կարգավորելու ուղղությամբ:

Համաշխարհային փորձը վկայում է, որ մինչև 6 ամսեկան երեխաներին միայն կրծքով սնուցում ապահովելով հնարավոր է հասնել ոչ միայն մանկական մահացության զգալի նվազեցման, այլև նվազագույնին հասցնել երեխաների մոտ շնչառական և մի շարք այլ հիվանդությունների առաջացման հավանականությունը: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը նախատեսում են վաղ հասակի երեխաների սնուցման 3 կանոն. մինչև 6 ամսական երեխաներին կերակրել բացառապես կրծքի կաթով, մինչև 2 տարեկան երեխաներին շարունակել կրծքով սնուցումը երեխայի ցանկության դեպքում, իսկ հավելյալ սնունդ (ճաշեր, շիլաներ և այլն) տալ երեխային 6 ամսականից սկսած: Չնայած մինչև 6 ամսական երեխաներին բացառապես կրծքով սնուցումը նախատեսող «Երեխաներին կրծքով սնուցման խրախուսման և արհեստական կաթնախառնուրդների շրջանառության մասին» օրենքի նախագծի առկայությանը, այն մինչ օրս չի ընդունվել: Կարևորելով խնդրի հրատապությունը՝ անհրաժեշտ ենք համարում Նախարարության կողմից անհապաղ միջոցներ ձեռնարկել վերոնշյալ օրենքի նախագծի ընդունման ուղղությամբ:

Պաշտպանի կողմից ստացվել են մի շարք դիմում-բողոքներ, որոնք վերաբերվում են հաշմանդամություն ունեցող անձանց խախտված իրավունքներին: Համաձայն «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությանը՝ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաները, ըստ դեղատոմսերի ապահովվում են դեղորայքով անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից: Բացի այդ, ՀՀ Կառավարության թիվ 1717-Ն որոշմամբ հստակեցվում է անվճար պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերը և այն հիվանդությունները, որոնց առկայության դեպքում դեղերը տրվում են անվճար: Գործնականում, սակայն գրանցվել են նշված նորմերի խախտումներ, ինչը վկայում է նշյալ ոլորտում Նախարարության անհետևողականության և շատ դեպքերում կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների բացակայության մասին:

Ողջունելի է Նախարարության կողմից որդեգրած այն քաղաքականությունը, ըստ որի բազմաթիվ բժշկական միջամտություններ, այդ թվում՝ սրտի վիրահատությունը, օրթեզավորումն ու կորսետավորումը, երիկամի քարի դիստանցիոն լիտոտրիպսիան, ականջի խխունջի պատվաստման վիրահատությունը, երիկամի փոխպատվաստումը 0-7 տարեկան երեխաների համար իրականացվում են անվճար հիմունքներով: Վերջիններից գանձվում է միայն վիրահատության ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաների գումարը: Այնուամենայնիվ, Նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ առողջապահական պետական նպատակային ծրագրերով նախատեսված չեն նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով իրականացվող բժշկական ծառայությունների մատուցումը: Այսինքն, 0-7 տարեկան երեխաների առողջությունը միմիայն նմանատիպ սարքավորումների միջոցով վերականգնելու հնարավորության դեպքում, վերջիններս պարտավոր են վճարել գումար՝ չնայած մշակված ծրագրին: Կարծում ենք այս հույժ կարևոր խնդիրը անհրաժեշտ է լուծել կարճ ժամկետներում՝ երեխաներին համապատասխան հնարավորություններ տրամադրելու եղանակով:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

2012 թվականի 2-րդ կիսամյակում Նախարարության «Թեժ գիծ» ծառայությունը արձանագրել է 660 դիմում-բողոք, որոնք վերաբերել են պետական պատվերի ծավալների սահմանափակ լինելուն, հիվանդի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքին, մատուցված բուժօգնության և սպասարկման որակին, գործող կարգին, բուժօգնության և սպասարկման գներին, գումարին և կազմակերպչական բնույթի այլ հարցերին: Ըստ Նախարարության հայտնած տեղեկատվության՝ հիմնավորվել է ընդամենը 10 բողոք, որի արդյունքում մի շարք բուժաշխատողներ ստացել են նկատողություն, ընդհուպ մինչև աշխատանքից ազատում: Ողջունելի, որ ՀՀ առողջապահության նախարարության «Թեժ գիծ» ծառայությունը աշխատում է 24 ժամ աշխատանքային գրաֆիկով: Սակայն Նախարարության կողմից ստացված դիմում-բողոքների նման մեծ քանակը, ուսումնասիրության արդյունքում ընդամենը 10 բողոքների հիմնավորված լինելու փաստը և ոլորտի իրավապաշտպանների կողմից հայտնած տեղեկությունները՝ այդ բողոքները ոչ միշտ են բավարար խորությամբ ուսումնասիրվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կատարել մշտադիտարկում բուժհաստատությունների կողմից համավճարների գեղչման կամ դրա վճարումից ազատելու դեպքում դիմորդներին միատեսակ վերաբերմունք ցուցաբերելու ուղղությամբ և բացառել խտրական դրսևորումները:
- Ստեղծել հանձնախումբ, որը մշտապես կվերահսկի ՀՀ ներմուծվող և/կամ շրջանառվող կեղծ դեղերի շարժը և կիրականացնի միջոցառումներ դրանք հայտնաբերելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով:
- Ներդնել բժշկական էթիկայի օրինակելի կանոններ՝ հստակ սահմանելով խիստ պատասխանատվության միջոցներ և հետամուտ լինել այս ոլորտում անպատժելիության մթնոլորտի վերացմանը:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ «բժշկական սխալ» եզրույթի ձևակերպման նպատակով՝ հաշվի առնելով այս ոլորտում միջազգային փորձով ընդունված չափանիշները:
- Անհապաղ միջոցներ ձեռնարկել մինչև 6 ամսական երեխային կրծքով սնուցումը կարգավորող «Երեխաներին կրծքով սնուցման խրախուսման և արհեստական կաթնախառնուրդների շրջանառության մասին» օրենքի նախագծի ընդունման ուղղությամբ:
- Իրականացնել համապատասխան գործողություններ «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթների անվերապահորեն կատարման նպատակով:
- Մշակել նախագծային փաթեթ՝ երեխայի պետական հավաստագրի ծրագրում լրացումներ կատարելու և վերջիններիս ցանկացած խորհրդատվություն և բժշկական միջամտության անվճար տրամադրելու և իրականացնելու նպատակով:
- Հետամուտ լինել «Թեժ գիծ» ծառայություն ահազանգած անձանց կողմից բարձրացրած խնդիրներին՝ դրանց ուղղությամբ ձեռնարկելով համապատասխան գործողություններ և այդ կերպ նպաստել ոլորտում առկա խախտումների վերացմանը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հանրապետությունում բնակչության ֆիզիկական դաստիարակության գործի և մարզիկների պատրաստման նկատմամբ կազմակերպական-մեթոդական ղեկավարումը, մշակում է քաղաքականությունը սպորտի և երիտասարդության բնագավառում, իրականացնում է սպորտի և երիտասարդության ոլորտի քարոզչությունը և այլն:

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունն ապահովում է յուրաքանչյուրի՝ գրական, գեղարվեստական ազատության և մշակութային կյանքին մասնակցելու ու մշակութային գործունեություն իրականացնելու իրավունքի իրականացումն ու պաշտպանությունը, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, ազատ ու մատչելի ծառայություններ մատուցելու համար պայմանների ստեղծումը:

2012 թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մշակույթի նախարարություն

- Նախարարության կողմից մշտադիտարկումներ են իրականացվել միայն առավել վտանգված հուշարձանների տեխնիկական վիճակի ստուգման ուղղությամբ, այնինչ փորձը ցույց է տալիս, որ կարիք կա հսկողություն սահմանել նաև այլ հուշարձանների նկատմամբ նույնպես:
- Շարունակվում է չլուծված մնալ թատրոնների անբավարար նյութատեխնիկական հագեցվածության խնդիրը:
- Չեն ձեռնարկվել բավարար միջոցներ մշակութային կյանքի զարգացումը ՀՀ բոլոր մարզերում հավասարապես ապահովելու համար:
- Խիստ մտահոգության տեղիք է տալիս մշակութային հաստատությունների շենքերը հաշմանդամություն ունեցող անձանց համար առավել մատչելի դարձնելու հարցը:
- Արդյունավետ միջոցներ չեն ձեռնարկվել հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը հնարավորինս ապահովելու համար:

Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

- Նախարարության կողմից 2012 թվականի ընթացքում իրականացվել են ընդամենը երեք միջոցառումներ և հանրապետության ոչ բոլոր մարզերում: Երիտասարդների համար զբաղվածության և աշխատատեղերի ստեղծման խնդիրը գործնականում լուծում չի ստացել:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Մտահոգիչ է ՀՀ մարզերում երիտասարդների և երիտասարդ ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը:
- Առանձին դեպքերում, քաղաքացիների կողմից խնդիր է բարձրացվել «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի գործընթացի թափանցիկության և չարաշահումների վերաբերյալ:
- Շարունակվում է արդիական մնալ ՀՀ մարզերում բակերի, մասնավորապես՝ ֆուտբոլային դաշտերի, խաղահրապարակների կառուցապատման խնդիրը:
- Բացակայում է անհրաժեշտ ֆինանսավորում հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային կյանքը ակտիվացնելու, վերջիններիս սպորտային կյանքին ներգրավելու և մարզիկներին պարաոլիմպիկ խաղերին մասնակցելու հնարավորություն տրամադրելու համար:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Նախարարության պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով 2012 թվականի ընթացքում տրամադրվել է 50 դրամաշնորհ:
- Եկեղեցիների և այլ պատմամշակութային կենտրոնների վերանորոգման ու վերականգնման համար 2012 թվականին ձեռնարկվել են մի շարք միջոցներ, մասնավորապես՝ հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիթորինգ, վերջիններիս վերանորոգում և վերականգնում:
- Ազգային փոքրամասնությունների մշակույթի բացահայտման, փոխճանաչման, զարգացման, պահպանման, մշակութային համագործակցության նպատակով իրականացվել են միջոցառումներ, մասնավորապես՝ արվեստի փառատոներ, մրցույթ-ցուցահանդեսներ, գրադարանային հավաքածուների կազմը համալրվել է ազգային փոքրամասնությունների մայրենի լեզուներով գրականությամբ:
- Իրականացվել է պետական պատվերով և աջակցությամբ հրատարակված 86900 միավոր գրականության անվճար բաշխում ՀՀ մարզային, համայնքային զորամասերի գրադարաններին, արտերկրի հայկական կազմակերպություններին, իսկ Հայաստանի ազգային գրադարանի գրադարանային հավաքածուն համալրվել է արտերկրից առաքված 2353 միավոր հայագիտական գրականությամբ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մշակույթի նախարարություն

2012 թվականի ընթացքում գրանցվել են պատմության և մշակութային հուշարձանների ոչ պատշաճ պահպանության դեպքեր, որոնք հիմնականում վերաբերել են առանց Նախարարության հետ համաձայնության վերականգնողական աշխատանքներին, հուշարձանների պահպանական գոտու տարածքից հողհատկացման և դրանց տարածքում կատարված անօրինական հողային աշխատանքներին և հուշարձանները վնասելուն: Չնայած, որ Նախարարության մասնագետների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում անօրինական գործողությունները դադարեցվել են, այնուամենայնիվ, ստացված ահազանգերին արձագանքելու հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև լինել

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

հետևողական պատմության և մշակութային հուշարձանների պատշաճ պահպանության վերաբերյալ՝ իրականացնելով մշտադիտարկումներ ոչ միայն առավել վտանգված, այլև բոլոր հուշարձանների տեխնիկական վիճակի ստուգման ուղղությամբ: Խիստ մտահոգիչ է այն, որ 2012 թվականին ՀՀ պետական բյուջեի «Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման» ծրագրով իրականացվել են առավել վտանգված հուշարձանների պահպանության նպատակով 25 հուշարձանի տեխնիկական վիճակի դիտանցում, սակայն կատարվել են ընդամենը 17 հուշարձանի վերականգնողական աշխատանքներ, իսկ մնացածը, պարզապես, ուսումնասիրվել են դիտանցման շրջանակներում:

Շարունակվում է չլուծված մնալ Մնջախաղի պետական թատրոնի ոչ բավարար նյութատեխնիկական հագեցվածություն ունենալու, հատկապես՝ սեփական տարածքով ապահովված չլինելու խնդիրը: Նախարարության կողմից մշակվել էր «Թատրոնի և թատերական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվել են թատերական ոլորտին աջակցելու պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, սակայն նշված նախագիծը Ազգային ժողովի կողմից մինչև օրս չի ընդունվել: Չնայած, որ Մնջախաղի պետական թատրոնի առանձին շենքի խնդրի լուծման ուղղությամբ համատեղ աշխատանքներ են տարվում Երևանի քաղաքապետարանի հետ և կա նախնական պայմանավորվածություն՝ 2013 թվականին թատրոնի համար հողհատկացում կատարելու վերաբերյալ, այնուամենայնիվ, թատրոնի շենքը շարունակում է գործել Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի շենքում: Այնինչ, խնդրի լուծման համար անհրաժեշտ է ոչ միայն Նախարարության պատրաստակամությունը, այլև՝ գործնականում արդյունավետ միջոցների ձեռնարկումը:

Ողջունելի են Նախարարության կողմից ՀՀ մարզերում մշակութային կյանքի զարգացման համար կազմակերպված միջոցառումները, մասնավորապես Լոռում, Վայոց Ձորում, Շիրակում, Կոտայքում: Սակայն չեն ձեռնարկվել բավարար միջոցներ մշակութային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում անհամաչափ բաշխվածության հաղթահարման, ինչպես նաև մարզերում գոյություն ունեցող մշակութային կազմակերպությունների՝ անհրաժեշտ նյութական հագեցվածության և հիմնանորոգման ապահովման ուղղությամբ:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ բոլոր մշակութային հաստատությունները մեծամասամբ հին կառույցներ են և հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի ու ելքի համար, ինչը խոչընդոտում է վերջիններիս լիարժեք կերպով մասնակցել մշակութային կյանքին: Նախարարության կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ խնդիրը լուծում է ստանում միայն մշակութային կազմակերպությունների վերանորոգումների ընթացքում: Այնինչ, հաշվի առնելով, որ ոչ բոլոր մշակութային հաստատություններն են ենթակա հիմնանորոգման, սակայն, միևնույն ժամանակ ապահովված չեն թեքահարթակներով կամ այլ անհրաժեշտ հարմարանքներով՝ գտնում ենք, որ հարկավոր է վերոնշյալ խնդրին լուծում տալ անկախ հաստատության հիմնանորոգման ենթակա լինելու կարգավիճակից: Ողջունելի է Նախարարության կողմից միջոցների ձեռնարկումը մի շարք մշակութային հաստատությունների շենքերը նման հարմարանքներով ապահովելու ուղղությամբ, սակայն անհրաժեշտ է նման բոլոր շինություններում առնվազն ժամանակավոր լուծումներ տեղադրել՝ թեքահարթակներ կամ այլ անհրաժեշտ հարմարանքներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցելու իրավունքն ապահովելու համար:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Ընթացիկ տարում Նախարարության աջակցությամբ հաշմանդամություն ունեցող անձինք մասնակցել են մշակութային մի շարք միջոցառումների, մասնավորապես, Մոսկվայում կայացել է «Սպիտակ ձեռնափայտ» 3-րդ միջազգային բարեգործական փառատոնը, «Լավագույնս փոխենք աշխարհը» խորագրով միջազգային մանկական 11-րդ փառատոնը Ղրիմում, խուլերի 6-րդ միջազգային թատերադիզայներական փառատոնը Ղրիմում և Խարկովում, և այլն: Սակայն բոլոր այդ միջոցառումները կայացել են արտերկրում և, հաշվի առնելով, որ Նախարարությունը չի կարող ապահովել վերոնշյալ միջոցառումներին ավելի մեծ թվով մասնակիցների մասնակցություն, անհրաժեշտ է նմանօրինակ միջոցառումներ կազմակերպել Երևանում, ինչպես նաև ՀՀ մարզերում՝ այդ կերպ ապահովելով յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող անձի լիարժեք մասնակցությունը մշակութային կյանքին:

Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

Նախարարությունը հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարության հիմնական գերակայություններից են եղել երիտասարդների համար զբաղվածություն և աշխատատեղերի ստեղծումը, սակայն այս ուղղությամբ Նախարարության կողմից ձեռնարկված միջոցները սակավաթիվ են եղել և երիտասարդների համար զբաղվածության և աշխատատեղերի ստեղծման խնդիրը գործնականում լուծում չի ստացել: Մասնավորապես, երիտասարդության շրջանում զբաղվածության խնդիրների դրական զարգացման ուղղությամբ Նախարարության կողմից 2012 թվականի ընթացքում իրականացվել են ընդամենը երեք միջոցառումներ, որոնցից մեկը Երևանում՝ Երևանի պետական համալսարանի հետ համատեղ «Բուհ-աշխատաշուկա արդի կամուրջների հաստատում և փոխգործակցության ընդլայնում» խորագրով սեմինար-քննարկումների շարք ծրագրի շրջանակներում, իսկ մյուսները՝ միայն ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում անցկացված «Աշխատանքի տոնավաճառ» ծրագրի շրջանակներում: Այնինչ նման միջոցառումների անցկացման կարիքը զգացվում է հանրապետության բոլոր մարզերում, այլ ոչ միայն Լոռու և Տավուշի մարզերում: Անհասկանալի է նաև թե ինչու է նման միջոցառում անցկացվում միայն Երևանի պետական համալսարանի հետ համատեղ այլ ոչ նաև մյուս համալսարանների հետ: Նշված միջոցառումները նաև պետք է կրեն շարունակական բնույթ՝ հաշվի առնելով հիշատակված խնդրի կարևորությունը:

Հատկապես մտահոգիչ է ՀՀ մարզերում երիտասարդների և երիտասարդ ընտանիքնե-րի սոցիալ-տնտեսական վիճակը: Այս ուղղությամբ չեն իրականացվել բավարար թվով համալիր միջոցառումներ՝ վիճակը բարելավելու նպատակով, մասնավորապես մարզերում երիտասարդների համար չեն նախատեսվել կամ անցկացվել ժամանցի բավարար քանակի միջոցառումներ: Անհամաչափ մոտեցում է դրսևորվել մարզերում և Երևան քաղաքում բնակվող երիտասարդներին Նախարարության կողմից իրականացվող ծրագրերում ներգրավվածությունը ապահովելու ուղղությամբ: Նախարարությունը բավարար չափով չի ընդարձակել իր համագործակցությունը տարբեր երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատվել է «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետա-կան նպատակային ծրագիրը: 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

վերաֆինանսավորվել է 1011 վարկ՝ 7,598.7 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով, որից 507 վարկ՝4,606.8 միլիարդ ՀՀ դրամ պայմանագրային գումարով տրամադրվել է Երևանում, իսկ 504 վարկ՝2,991.9 միլիարդ ՀՀ դրամ պայմանագրային գումարով՝ ՀՀ մարզերում: Այդ թվում 2010 թվականի ընթացքում վերաֆինանսավորվել է 187 վարկ՝ 1,541 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով, 2011 թվականին՝ 469 վարկ՝ 3,435 միլիարդ ՀՀ դրամ և 2012 թվականին՝ 355 վարկ՝ 2,622.7 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով: Այդուհանդերձ, պետական նպատակային ծրագրի իրականացման շրջանակներում, առանձին դեպքերում, քաղաքացիների կողմից խնդիր է բարձրացվել վերոնշյալ ծրագրի գործընթացի թափանցիկության և չարաշահումների վերաբերյալ:

Մտահոգիչ է եղել բակերի, մասնավորապես՝ ֆուտբոլային դաշտերի, խաղահրապարակների կառուցապատման խնդիրը: Թեև նշյալ խնդիրը Երևանում գրեթե լուծվել է, այնուամենայնիվ, այն շարունակում է արդիական մնալ ՀՀ մարզերում: Հետևաբար, անհրաժեշտ է, որպեսզի Նախարարությունը, որպես պատասխանատու գերատեսչություն, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մշակի քաղաքականություն՝ ուղղված վերոնշյալ խնդրի լուծմանը, որը սպորտի զարգացման էական խթան կհանդիսանա Հանրապետությունում:

Հայաստանի Հանրապետությունում 1994 թվականին հիմնադրվել է Պարաոլիմպիկ կոմիտեն և մինչ օրս այն մասնակցել է 8 պարաոլիմպիկ խաղերի: Հաշմանդամների համար ստեղծված այս մրցույթը զարգացած է Հայաստանում և մարզիկները գրանցել են բազում հաջողություններ: Այդուհանդերձ, բացակայում է անհրաժեշտ ֆինանսավորում հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային կյանքը ակտիվացնելու, վերջիններիս սպորտային կյանքին ներգրավելու և մարզիկներին պարաոլիմպիկ խաղերին մասնակցելու հնարավորություն տրամադրելու համար: Հաշմանդամների համար չի հարմարեցվել մարզա կառույցների մուտք ու ելքը: Ողջունելի է այն, որ 2012 թվականին ՀՀ պետական բյուջեի «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով ոլորտում գործող թվով 4 հասարակական կազմակերպությունների տրամադրվել է 9.000.000 դրամ մարզական միջոցառումներ անցկացնելու համար: Սակայն պետության կողմից բավարար չափով չեն ապահովվել հաշմանդամային սպորտի զարգացումը և հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը սպորտի բնագավառում:

Ստացված բողոքների, ինչպես նաև ոլորտի իրավապաշտպանների հետ Պաշտպանի աշխատակազմի կողմից կազմակերպած հարցազրույցների արդյունքում բարձրացվել է խնդիր, համաձայն որի Նախարարության կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվել իրականացված միջոցառումների և մշակված ծրագրերի մասին պատշաճ հանրային իրազեկումն ապահովելու համար: Նշված իրավիճակը չի նպաստում հարակցության շրջանում Նախարարության նկատմամբ վստահության բարձրացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշակույթի նախարարություն

- Ձեռնարկել միջոցներ պատմության և մշակութային հուշարձանների պատշաճ պահպանության նպատակով արդյունավետ հսկողություն իրականացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով մշտադիտարկումներ ոչ միայն առավել վտանգված, այլև բոլոր հուշարձանների տեխնիկական կարգավիճակի ստուգման ոլորտում:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Գործնականում ձեռնարկել ավելի արդյունավետ միջոցներ թատրոնների անբավարար նյութատեխնիկական հագեցվածության, ինչպես նաև Մնջախաղի պետական թատրոնը սեփական տարածքով ապահովելու խնդիրները լուծելու նպատակով:
- Ձեռնարկել միջոցներ ՀՀ բոլոր մարզերում մշակութային կյանքի զարգացման համար կազմակերպված միջոցառումների իրականացումը հավասարապես ապահովելու նպատակով:
- Միջոցներ ձեռնարկել մշակութային հաստատությունների շենքերը հարմարեցնելու հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի ու ելքի համար՝ անկախ այդ շենքերի՝ հիմնանորոգման ենթակա լինելու հանգամանքից:
- ՀՀ-ում հնարավորինս բոլոր հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին ներգրավելու նպատակով կազմակերպել հատուկ վերջիններիս համար նախատեսված մշակութային միջոցառումներ Երևանում և ՀՀ մարզերում:

Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

- Երիտասարդության շրջանում զբաղվածության խնդրի լուծման կապակցությամբ ստեղծել հստակ ծրագրեր և իրականացնել տարբեր միջոցառումներ ՀՀ բոլոր մարզերում՝ ապահովելով դրանց շարունակական բնույթը:
- Երիտասարդ ընտանիքների համար, համապատասխան ծրագրերի շրջանակներում բնակարան ձեռք բերելու նպատակով սահմանել միատեսակ պահանջներ և պայմաններ, ապահովել գործընթացի նկատմամբ վերահսկողությունն ու դրա թափանցիկությունը:
- Սպորտի զարգացման խթանման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մշակել քաղաքականություն ուղղված ՀՀ մարզերում բակերի, մասնավորապես՝ ֆուտբոլային դաշտերի, խաղահրապարակների կառուցապատմանն ու բարեկարգմանը:
- Ձեռնարկել միջոցներ հաշմանդամային սպորտի զարգացման նպատակով՝ մեծացնելով ֆինանսավորումը և իրականացնելով անհրաժեշտ միջոցառումներ, ինչպես նաև ընդլայնել համագործակցությունը համապատասխան կազմակերպությունների հետ:
- Ապահովել նախարարության կողմից իրականացվող գործունեության մասին հասարակությանը մատչելի և հասանելի կերպով տեղեկացված լինելը, մասնավորապես՝ նախարարության ռազմավարական առաջնահերթությունների վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը :

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը պատասխանատու է կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավման համար և ապահովում է կառույցների շինարարության և շահագործման ընթացքում մարդկանց ու միջավայրի անվտանգության, քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից ոլորտը կանոնակարգող օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը և այլն:

2012 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ստացվել են բազմաթիվ դիմում-բողոքներ՝ կապված աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում շահառու ճանաչված անձանց բնակարան (բնակելի տուն) հատկացնելու գործընթացի կազմակերպման հետ:
- Մտահոգիչ են ոլորտում արձանագրված տարատեսակ խախտումները, մասնավորապես՝ ինքնակամ շինարարություն իրականացնելու դեպքերը, ինչը վկայում է Նախարարության ոչ պատշաճ վերահսկողության և ոչ բավարար միջոցառումներ իրականացնելու մասին:
- Շարունակվում է գործնականում անտեսվել սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շինությունների հարմարվածության խնդիրը:
- Ոլորտը կարգավորող որոշ իրավական ակտերի առանձին դրույթներ մեկնաբանվել և կիրառվել են ի վնաս անձանց իրավաչափ շահերի:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Երևան քաղաքում կիսակառույց շինությունները գույքագրելու և շինարարական աշխատանքների ընթացքին վերաբերող փաստաթղթերի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին ուսումնասիրելու նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 240 հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որն իրականացրել է վերահսկողություն կառուցվող շինությունների նկատմամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Նախատեսվում է կրկին շրջանառության մեջ դնել «Քաղաքաշինական գործունեության վերահսկողության և հսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- Ողջունելի է այն, որ Նախարարության կողմից Պաշտպանի առաջարկությունը ընդունվել է և արդյունքում մշակվում է ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1923-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի ու ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության պետի 1998 թվականի մայիսի 26-ի թիվ 108-Կ համատեղ հրամանի նախագծերը՝ նշված փաստաթղթերում կիրառվող «բացվածք» արտահայտությունը հանելու համար, որը կվերացնի այս հարցի շուրջ առկա տարաբնույթ մեկնաբանությունները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Նախարարության կողմից ստացված տվյալների՝ 2012 թվականի ընթացքում «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովում» ծրագրի շրջանակներում Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով հաշվառված 2500 ընտանիքների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության արդյունքներով ծրագրի շահառու ճանաչված 2222 ընտանիքներից 1902 ընտանիքների բնակարանային խնդիրները լուծվել են բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարանների (բնակելի տների) հատկացմամբ: Դրա հետ մեկտեղ, ներկայումս շինարարության ընթացքում գտնվող 743 և նոր սկսվող լրացուցիչ 608 բնակարանների (բնակելի տների) շինարարական աշխատանքների ավարտման արդյունքներով, 2013 թվականին իրենց լուծումը կստանան ևս 1351 ընտանիքների բնակարանային խնդիրները: Այնուամենայնիվ, 2012 թվականի ընթացքում քաղաքացիների կողմից ստացվել են մոտ 800 դիմում-բողոքներ՝ կապված աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում շահառու ճանաչված անձանց բնակարան (բնակելի տուն) հատկացնելու գործընթացի կազմակերպման հետ: Նշյալը հանդիսանում է աշխատանքի կազմակերպման թափանցիկության բացակայության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ չհամագործակցելու հետևանք:

2012 թվականի ընթացքում ՀՀ քաղաքաշինության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվել են տեսչական ստուգումներ: Արդյունքում բացահայտվել են օրենսդրության խախտման դեպքեր՝ կապված պլանային ստուգումների և համայնքներից ներկայացրած հողահատկացման հայտերի համաձայնեցման գործընթացների, իրավախախտումներ թույլ տված պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու, շինարարության թույլտվությունների և ավարտական ակտերի տրամադրման, նախագծերի համաձայնեցման գործընթացների հետ: ՀՀ մարզպետարանների ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ 2012 թվականի ընթացքում հանրապետության ողջ տարածքում հայտնաբերվել է ինքնակամ շինարարություն իրականացնելու ընդամենը 82 դեպք, որն ինքնին վկայում է ոչ արդյունավետ միջոցառումների ձեռնարկման մասին: Այնուամենայնիվ, բացահայտված խախտումները կազմում են նշված ոլորտում առկա չարաշահումների և թերությունների միայն մի մասը: Ըստ անհրաժեշտության, ստուգումներ են անցկացվել միայն ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան, Ծաղկաձոր, Աբովյան, Եղվարդ և Քասախ, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր և Ջերմուկ, ՀՀ Սյունիքի մարզի Կապան և Գորիս, ՀՀ Գեղարքունիքի մարզի

Գավառ և Սևան, ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքներում: Համապատասխան այլ համայնքներում ստուգումներ չեն իրականացվել և խիստ մտահոգիչ է, որ Նախարարությունը կոնկրետ միջոցներ չի ձեռնարկել վերհանված խնդիրները հետագայում կանխարգելելու նպատակով: Հաշվի առնելով, որ վերը նշված խնդիրները ուղղակիորեն վերաբերում են Նախարարությանը, որպես ոլորտը կարգավորող մարմին՝ գտնում ենք, որ Նախարարությունը պարտավոր է պատշաճ վերահսկողություն իրականացնել և կոնկրետ միջոցներ ձեռնարկել մտահոգիչ և տարատեսակ խախտումները բացառելու համար:

Նախարարությունը հայտնել է, որ վերջինիս աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչությունը, մարզպետարանների քաղաքաշինական վարչություններում տեսչական ստուգումների շրջանակներում, հանրապետության տարբեր համայնքներում կատարած ըստ անհրաժեշտության ստուգումների արդյունքում, արձանագրել է բազմաթիվ դեպքեր, երբ համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցվել են նախագծեր՝ առանց հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի քաղաքաշինական մատչելի միջավայրի նորմերի ապահովման: Չնայած այն հանգամանքին, որ արձանագրված խախտումների համար, աշխատանքներ իրականացնողների նկատմամբ կիրառվել են վարչական պատասխանատվության միջոցներ՝ համաձայն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, այնուամենայնիվ, կառուցված և վերակառուցված շինությունները հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված չլինելու վերաբերյալ խնդիրը շարունակում է մնալ չլուծված: Թեև բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքաշինական անարգել միջավայրի ապահովմանն ուղղված գործող իրավական ակտերից է համարվում նաև ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1473-Ն որոշմամբ հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը, այնուամենայնիվ, Նախարարությունը հայտնել է, որ վերջինս բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված շինությունների թվական տվյալներին չի տիրապետում, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ Նախարարությունը հետևողականություն չի ցուցաբերել վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգի պատշաճ կատարման նկատմամբ:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզ է դարձել նաև, որ առկա է իրավական որոշակիության և տարաբնույթ մեկնաբանությունների լրջագույն խնդիր «նկուղ» և «բացվածք» հասկացությունների գործնականում կիրառելու դեպքերում: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղը, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, որոնք չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն: ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48-րդ և 49-րդ հոդվածներով սահմանված դրույթները, 21.12.2006 թվականին ընդունել է

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

«Բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված ոչ բնակելի տարածքների (բացվածքների) պատկանելությունը սահմանելու մասին» թիվ 1923-Ն որոշումը, որի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանվել է, որ սեփականության իրավունքով համապատասխան համայնքներին անհատույց հանձնվում է նաև սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում չնշված ոչ բնակելի տարածքները (բացվածքները)՝ բացառությամբ այն բացվածքների, որոնք զբաղեցված են պետական կառավարման մարմինների կամ պետական ոչ առևտրային կազմակերպությունների ու դրանց տարածքային ստորաբաժանումների (այդ թվում՝ գրադարաններ, լաբորատորիաներ, նոտարական գրասենյակներ, թանգարաններ, կապի բաժանմունքներ, ակումբներ և այլն) և քաղաքացիական կացության գրանցման բաժինների կողմից: Ուսումնասիրելով թիվ 1923-Ն որոշումը և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ մեր կողմից բարձրացվել էր ոչ միայն նշված իրավական ակտերի համատեղելիության հարցը, այլ նաև խնդրահարույց հասկացությունների տարաբնույթ մեկնաբանությունների և դրանց համապատասխանությունը իրավական որոշակիության սկզբունքին: Գործնականում գրանցվել են դեպքեր, երբ բացվածքը գտնվել է բազմաբնակարան բնակելի շենքի նկուղում և այդ շենքի ոչ բնակելի տարածքը, որոշ դեպքերում, ճանաչվել է նկուղ, իսկ այլ դեպքերում՝ բացվածք: Հաշվի առնելով նշված խնդրի կարևորությունը՝ լուծման նպատակով օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու միջոցով «բացվածք» հասկացությունը հստակեցնելու և տարաբնույթ մեկնաբանությունները վերացնելու առաջարկ էր ներկայացվել Կառավարությանը: Ողջունելի է այն, որ Նախարարության կողմից մեր առաջարկությունը ընդունվել է և արդյունքում վերջիններիս կողմից մշակվում է ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1923-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի ու ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության պետի 1998 թվականի մայիսի 26-ի թիվ 108-Կ համատեղ հրամանի նախագծերը՝ նշված փաստաթղթերում կիրառվող «բացվածք» արտահայտությունը հանելու համար:

Շարունակվում է որպես խնդիր մնալ «Քաղաքաշինական գործունեության հսկողության և վերահսկողության մասին», ինչպես նաև «Ճարտարապետության մասին» ՀՀ օրենքների ընդունման հարցը: Ոլորտի մասնագետների պնդմամբ, սույն օրենքների հետաձգման պատճառով, բաց է մնացել որոշակի հարաբերությունների կարգավորումը քաղաքաշինության բնագավառում: Նշված օրենքների ընդունմամբ հնարավոր կլիներ հստակեցնել և տարանջատել քաղաքաշինության բնագավառում հսկողություն և վերահսկողություն իրականացնող պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, ինչպես նաև սահմանել ՀՀ-ում ճարտարապետական գործունեությունը կառավարելու ու ճարտարապետների մասնագիտական գործունեությունը համակարգելու հիմունքներն ու կարգը: Այնինչ, Նախարարության կողմից հայտնած տեղեկատվության համաձայն՝ «Քաղաքաշինական գործունեության հսկողության և վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը նախատեսվում է նորից շրջանառության մեջ դնել, իսկ «Ճարտարապետական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 134-Ա/3 հրամանով հանվել է Նախարարության աշխատանքային ծրագրից՝ այն հիմնովին վերանայելու անհրաժեշտությամբ: Սակայն 2011 թվականից առ այսօր չեն կազմակերպվել նոր հանրային լսումներ արդեն նոր նախագծի վերաբերյալ: Այսինքն, վերոնշյալ հրամանով նախատեսված օրենքի նախագծի վերանայման վերաբերյալ անհրաժեշտ հետևողական աշխատանքներ չեն տարվել:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդյունավետ միջոցներ ձեռնարկել երկրաշարժի հետևանքով աղետի գոտու բնակավայրերում անօթևան մնացած՝ բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում շահառու ճանաչված անձանց բնակարան (բնակելի տուն) հատկացնելու գործընթացի պատշաճ կազմակերպման անցկացման նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու ուղղությամբ:
- Ուժեղացնել վերահսկողությունը քաղաքաշինական փաստաթղթերի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովման և համայնքների ղեկավարների՝ ինքնակամ շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման պարտականության կատարման նկատմամբ:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց համար արդեն կառուցված, նոր կառուցվող կամ վերակառուցվող շինությունների մատչելիությունն ապահովելու, ինչպես նաև, շարժասայլակով տեղաշարժի մատչելի պայմաններ ապահովող համապատասխան սալահատակների, փողոցների կառուցման ուղղությամբ:
- Ձեռնարկել միջոցներ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1923-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի ու ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության պետի 1998 թվականի մայիսի 26-ի թիվ 108-Կ համատեղ հրամաններում փոփոխություններ կատարելու նախագծերը հնարավորինս սեղմ ժամկետներում մշակելու ուղղությամբ:
- Ձեռնարկել միջոցներ «Քաղաքաշինական գործունեության հսկողության և վերահսկողության մասին», ինչպես նաև «Ճարտարապետության մասին» ՀՀ օրենքների ընդունման ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Երևանի քաղաքապետարանի գործունեության վերաբերյալ սույն զեկույցում ներկայացված խնդիրներն ու թերությունները հիմնականում վերաբերելի են նաև մյուս բոլոր տեղական ինքնակառավարման մարմիններին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում միջոցներ են ձեռնարկում բնակիչների իրավունքները և ազատություններն ապահովելու ուղղությամբ, իրականացնում են քաղաքային/համայնքային նշանակության քաղաքաշինական օբյեկտներում հաշմանդամների ազատ տեղաշարժի համար պայմաններ ստեղծելու, հասարակական տրանսպորտը հաշմանդամների տեղաշարժմանը հարմարեցնելու աշխատանքներ, շրջակա միջավայրի պահպանության համայնքային ծրագրեր, կազմակերպում են ինքնակամ կառուցման կասեցման և ինքնակամ կառույցների վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքներ և այլն:

2012 թվականին, մասնավորապես, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մի շարք դեպքերում Երևանի քաղաքապետարանը քաղաքացիներին օրենքով սահմանված կարգով իրենց տարածքի համար սեփականության իրավունքն անհատույց տրամադրելու փոխարեն նրանց ստիպել է վճարել ապօրինի գումարներ:
- Բազմաթիվ դեպքեր են գրանցվել, երբ Քաղաքապետարանի ոչ թափանցիկ վարչարարության արդյունքում կրպակներ տեղադրելու ցանկություն հայտնած անձանց նկատմամբ շահադիտական նկատառումներով դրսևորվել է ոչ միատեսակ և խտրական վերաբերմունք:
- Շարունակվում են չլուծված մնալ ինքնակամ շինարարության հետ կապված հարցերը, որոնք, ի թիվս այլ հետևանքների, խոչընդոտում են համայնքների կայացմանը և զուգորդվում են խիստ մտահոգիչ կոռուպցիոն դրսևորումներով:
- Թեև Քաղաքապետարանը կատարել է աշխատանքներ ուղևորափոխադրումների մակարդակը բարձրացնելու նպատակով, սակայն դրանք չեն լուծել ոլորտում առկա խնդիրները:
- Անուշադրության է մատնվել մի շարք մանկապարտեզներում գործող խմբերի երեխաների թվաքանակի նվազեցման հարցը:
- Չի իրականացվել հետևողական քաղաքականություն ոլորտում տեղի ունեցող ծառահատումների, շրջակա միջավայրի աղտոտման դեպքերին արագ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

արձագանքելու և դրանց վերացման արդյունավետ մեխանիզմներ մշակելու ուղղությամբ:

- Անձանց կոմունալ-կենցաղային հարցերը վերհանելու և արդյունավետ կերպով լուծելու նպատակով չեն իրականացվել համապատասխան գործողություններ:
- Դեռևս իր լուծումը չի ստացել հասարակական տրանսպորտը հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու հարցը:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

- Հաշմանդամներին սպասարկելու նպատակով բանակցություններ են տարվել չինական ավտոգործարանի հետ, որն առաջարկել է այդ մեքենաների համար վերելակային հարմարանք:
- Քաղաքապետարանը որդեգրել է քաղաքականություն, համաձայն որի, պետք է դադարեցվի Երևանի ներքաղաքային երթուղիներում շահագործվող «Ռաֆ» և «Երազ» մակնիշի հնամաշ միկրոավտոբուսների աշխատանքը:
- Կազմված արձանագրությունների համաձայն քանդվել են ինքնակամ շինությունները, զավթած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ազատվել են ապօրինի տիրապետողներից, իսկ տարածքները բերվել են նախկին տեսքի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանն ուսումնասիրել է մի շարք բողոքներ՝ հողի կադաստրային արժեքի վերաբերյալ գործնականում հանդիպող ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ: Այսպես, Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը քաղաքացի Վանիկ Առաքելյանին օրենքով սահմանված կարգով իր տարածքի համար սեփականության իրավունքն անհատույց տրամադրելու փոխարեն նրան ստիպել է վճարել հողի կադաստրային արժեքը՝ 2 000 000 ՀՀ դրամի չափով: Այնինչ, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի և 9-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հողամասը սեփականության իրավունքով քաղաքացուն պետք է տրվի անհատույց: Իսկ Քաղաքապետարանի դիրքորոշումն առ այն, որ նշված հարցը ենթակա է կարգավորման ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 2093-Ն որոշմանը համապատասխան, ևս իրավաչափ չէ և չի բխում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, քանի որ 2005 թվականի ընթացքում ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածում փոփոխություններ կամ լրացումներ չեն կատարվել, իսկ 2005 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 2093-Ն որոշմամբ ապահովվել է նաև ՀՀ հողային օրենսգրքում 2005 թվականին կատարված փոփոխությունների և լրացումների կիրարկումը: Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի գործողություններով (անգործությամբ) խախտվել է քաղաքացի Վանիկ Առաքելյանի սեփականության իրավունքը, ինչի վերաբերյալ Պաշտպանը կայացրել է մարդու իրավունքների խախտման մասին որոշում: Այնինչ, Քաղաքապետարանը մինչ օրս վերոնշյալ խնդրին իրավաչափ լուծում չի տվել: 2012 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից նախաձեռնած ոլորտի

իրավապաշտպանների և մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում նույնպես բարձրացվել է այս խնդիրը:

Քաղաքի վարչական շրջաններում կրպակ տեղադրելու համար, Քաղաքապետարանի փոխանցմամբ, ստացվել է 7 դիմում, որոնցից 5-ը (մամուլի կրպակներ) ստացել են դրական լուծում: Այս ոլորտի ցավոտ խնդիրներից են խտրական վերաբերմունքը և հաճախ անձնական, խմբակային կամ կոլեկտիվ շահերի դրսևորումները: Խիստ մտահոգիչ է, որ դեռևս ստացվում են բողոքներ, որ կրպակների տեղադրման վերաբերյալ դիմումների կապակցությամբ իրականացվող վարչարարությունը չի հանդիսանում թափանցիկ: Նման խնդիրները կանխարգելելու և/կամ բացառելու նպատակով Քաղաքապետարանը պետք է իրականացնի համալիր միջոցառումներ, որոնց միջոցով հնարավոր կլինի բացահայտել նման դեպքերը և ենթարկել իրավախախտներին պատասխանատվության կամ փոխանցի հայտնաբերված դեպքերը լիազոր պետական մարմիններին:

Ինքնակամ շինարարության խնդիրը, չնայած որ մնում է հանրության ամենացավոտ խնդիրներից, շարունակում է մնալ չլուծված: 2012 թվականին գրանցվել են ինքնակամ շինարարության բազմաթիվ դեպքեր: Քաղաքապետարանի կողմից կազմվել են թվով 361 արձանագրություններ, որոնք վերաբերել են ինքնակամ շինությունները քանդելուն և զավթած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ապօրինի տիրապետողներից ազատելուն ու տարածքները նախկին տեսքին բերելուն: Սակայն այն հանգամանքը, որ չնայած նշված միջոցառումներին ինքնակամ շինարարությունը դեռևս չի կանխարգելվել, վկայում է ձեռնարկված միջոցների անարդյունավետության մասին, ուստի՝ անհրաժեշտ է, որպեսզի Քաղաքապետարանն իրականացնի համալիր կանխարգելիչ միջոցառումներ ընդհուպ մինչև ավելի խիստ վարչական պատասխանատվություններ նախատեսելու առաջարկներով հանդես գալը: Վերոնշյալ կարգավորման առարկա իրավահարաբերությունների կայունությունը կարող է պահպանվել միայն խիստ հետևողական քաղաքականություն իրականացնելու ճանապարհով: Բացի վերը նշվածից՝ Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներից պարզ է դարձել, որ այս ոլորտում առկա են նաև կոռուպցիոն դրսևորումներ: Մասնավորապես, Քաղաքապետարանի որոշ պաշտոնատար անձինք մի շարք դեպքերում տեղյակ լինելով կառուցվող ինքնակամ շինության մասին, շահադիտական նկատառումներից ելնելով, չեն ձեռնարկել որևէ կանխարգելիչ միջոցառումներ: Անընդունելի են նման դեպքերը և դրանց վերաբերյալ արդյունավետ կանխարգելող միջոցառումների բացակայությունը:

Ողջունելի են Քաղաքապետարանի կողմից ուղևորափոխադրումների ծառայության մակարդակը բարձրացնելու նպատակով տարվող աշխատանքները, ինչի արդյունքում միկրոավտոբուսային ցանցը (կրճատվում է մոտ 1000 միավորով) փոխվում է ավտոբուսայինով: Սակայն 2012 թվականի ընթացքում այդպիսի բարեփոխում իրականացվել է ընդամենը 8 երթուղիներում, ինչն ինքնին չի կարող բավարար համարվել խնդիրը լուծելու համար, ուստի դեռևս մտահոգիչ է մնում հասարակական տրանսպորտի ծառայության որակը: Բացի այդ, Քաղաքապետարանի որդեգրած քաղաքականության համաձայն՝ պետք է դադարեցվեր Երևանի ներքաղաքային երթուղիներում շահագործվող «Ռաֆ» և «Երազ» մակնիշի հնամաշ միկրոավտոբուսների աշխատանքը: Այնուամենայնիվ, մինչ օրս կան մի շարք երթուղիներ, որոնցում շարունակվում են շահագործվել նմանատիպ միկրոավտոբուսներ: Նշվածը վկայում է Քաղաքապետարանի կողմից իր որդեգրած քաղաքականության հանդեպ հետևողականության բացակայության մասին:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

2012 թվականի ընթացքում ստացվել են բողոքներ Երևանի քաղաքապետարանի ենթակայության ներքո գտնվող մի շարք մանկապարտեզներում առկա խմբերի երեխաների թիվը նախատեսված քանակը գերազանցելու վերաբերյալ: Համաձայն ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների խտության և նորմատիվների մասին ՀՀ ԿԳ նախարարի 26 հունվարի 2007թ. N 29-Ն հրամանի՝ ընդհանուր նշանակության նախադպրոցական հաստատություններում (մանկապարտեզներում, որտեղ իրականացվում են նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովվում է երեխաների խնամքը) երեխաների թիվը չի կարող գերազանցել 30-ը: Այս խնդրի կապակցությամբ, ի պատասխան մեր հարցմանը, Քաղաքապետը հայտնել է, որ խնդիրն օրակարգային է և խմբերում երեխաների թվաքանակի նվազեցման հարցը գտնվում է քննարկման փուլում: Սակայն, Քաղաքապետարանի համար օրակարգային խնդիր հանդիսացող հարցը գործնականում որևէ լուծում դեռևս չի ստացել:

2012 թվականին արձանագրվել են ապօրինի ծառահատման 10 դեպքեր, որոնց արդյունքում թվով 6 ծառեր ոչնչացվել են: Նման դեպքերը խիստ մտահոգիչ են, քանի որ շրջակա միջավայրի պահպանությունը պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրությունից: Քաղաքապետարանի հայտնած տեղեկատվության համաձայն՝ բոլոր դեպքերով օրենքով սահմանված կարգով գրություններ են ուղարկվել ոլորտի լիազոր մարմին ՀՀ բնապահպանության նախարարություն, մասամբ նաև ոստիկանության տարածքային բաժիններ՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար, սակայն ստացված տեղեկատվության համաձայն՝ հիմնականում իրավախախտողներ չեն հայտնաբերվել և միայն 2 դեպքով է կիրառվել վարչական պատասխանատվություն: Մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ Քաղաքապետարանը բավարար հետևողականություն չի ցուցաբերել իր կողմից վերհանված և լիազոր մարմնին փոխանցված խնդիրներին տրված լուծման արդյունքի ուղղությամբ: Այս ամենը վկայում է նշյալ խնդիրների կանխարգելման և/կամ վերացման արդյունավետ մեխանիզմների պակասի մասին:

Երևանի վարչական շրջաններում և Քաղաքապետարանում գործող «Թեժ գիծ» ծառայությունը 2012 թվականի ընթացքում ստացել է շուրջ 2160 ահազանգեր: Բողոքների գերակշիռ մասը եղել է Քաղաքապետարանի իրավասությանը վերաբերող կոմունալ-կենցաղային ոլորտին վերաբերող հարցերով: Մյուս ահազանգերը վերաբերել են նաև տրանսպորտային միջոցներին, ապօրինի շինությունների իրականացմանը, առողջապահության, կրթության ոլորտին, օգնությունների տրամադրմանը, աղբահանությանը, վերելակների վերանորոգմանը, ձյան մաքրման աշխատանքներին, փողոցների լուսավորությանը, դիմումներին չպատասխանելուն և այլ խնդիրներին: Նշված բողոքները վկայում են Քաղաքապետարանի կողմից իրեն վերապահված պարտականությունների ոչ պատշաճ կազմակերպման մասին: Բողոքներ են ստացվել նաև շենքերի, շինությունների կտուրներից կախված սառցալեզվակների վերաբերյալ: Նշյալ հարցը, մասնավորապես, լուրջ մտահոգության առիթ է հանդիսացել, քանի որ այն կարող է վնաս պատճառել մարդու առողջությանը, ընդհուպ՝ հանգեցնել մահվան:

2012 թվականի չլուծված և ցավոտ խնդիրների թվին է շարունակում դասվել հասարակական տրանսպորտը հաշմանդամների ազատ տեղաշարժմանը հարմարեցնելը: Ողջունելի է Քաղաքապետարանի համագործակցությունը չինական «HIGER-BUS» գործարանի հետ, որն առաջարկել է այդ մակնիշի ավտոմեքենաների համար վերելակային հարմարանք՝ հասարակական տրանսպորտային միջոցներից օգտվելը հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի դարձնելու համար: Սակայն հաշվի առնելով, որ ավտոբուսները

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

դեռ գտնվում են երաշխիքային ժամկետում, ինչի պատճառով հարմարանքների տեղադրման համար Չինաստանի կառավարության կողմից դեռևս թույլտվություն չի տրվել ավտոգործարանին, անհրաժեշտ ենք գտնում հորդորել՝ հետևողական գտնվել ձեռք բերված համագործակցությունը 2013 թվականի երաշխիքային ժամկետի ավարտից հետո գործնականում կիրառելու ուղղությամբ: Ինչ վերաբերվում է հասարակական, բազմաբնակարան և բազմաֆունկցիոնալ նշանակության կառույցներում և դրանց հարակից տարածքներում հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար անարգել տեղաշարժումն ապահովող համապատասխան պայմաններ ստեղծելուն, ապա Քաղաքապետարանը պահանջել է դրանք, որպես պարտադիր պայման, նախատեսել նման տարածքների և կառույցների նախագծային փաստաթղթերի մշակման համար կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքներով տրվող նախագծային լուծումներում, ինչը ողջունելի է: Սակայն վերոնշյալ խնդիրները պահանջում են այնպիսի ծրագրերի մշակում, որոնք կհանգեցնեն անհապաղ լուծումների և պատահական չէ, որ օրենսդիրը «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում նախատեսել է Երևանի քաղաքապետի՝ որպես պարտադիր լիազորություն, քաղաքային նշանակության քաղաքաշինական օբյեկտները և հասարակական տրանսպորտը հաշմանդամների ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու ծրագրերի իրականացումը: Այնուամենայնիվ, 2012 թվականին անհրաժեշտ և Սահմանադրությամբ ամրագրված պահանջներից բխող արդյունքներ չեն ստացվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել միջոցներ Երվանդ Քոչար փողոցի թիվ 8/8 հասցեում գտնվող խանութ զբաղեցնող հողամասը ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերին համապատասխան, սեփականության իրավունքով, անհատույց Վ. Առաքելյանին փոխանցելու և նման այլ դեպքերին իրավաչափ լուծումներ տալու համար:
- Հավասար պայմաններում միասնական վերաբերմունք ցուցաբերել կրպակ տեղադրելու համար դիմած անձանց նկատմամբ և որևէ այլ պարագայում չդրսևորել խտրական վերաբերմունք:
- Իրականացնել մշտադիտարկումներ՝ ինքնակամ շինությունները հայտնաբերելու և դրանց իրավախախտ անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով:
- Հետևողական լինել ուղևորափոխադրումների մակարդակը բարձրացնելուն միտված ծրագրի իրականացմանը:
- Ձեռնարկել միջոցներ Երևանի քաղաքապետարանի ենթակայության ներքո գտնվող մի շարք մանկապարտեզներում երեխաների թիվը թույլատրելի քանակին համապատասխանեցնելու նպատակով:
- Դրսևորել հետևողական քաղաքականություն՝ քաղաքաշինական և վարչական օրենսդրության դրույթների իրավախախտներին համապատասխան պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:
- Քաղաքապետարանի կողմից բավարար հետևողականություն ցուցաբերել իր կողմից վերհանված և լիազոր մարմնին փոխանցված խնդիրներին տրված լուծման արդյունքի ուղղությամբ:

- Բարձրացնել Քաղաքապետարանի և վարչական շրջանների «Թեժ գիծ» ծառայությանը ահազանգած անձանց կողմից բարձրացված խնդիրներին համապատասխան հրատապ արձագանքելու որակը:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց և սակավաշարժ խմբերին պատկանող անձանց համար հասարակական, բազմաբնակարան և բազմաֆունկցիոնալ նշանակության կառույցներից և տրանսպորտային միջոցներից առանց դժվարության օգտվելու համար:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունն ապահովում է փախստականների իրավունքների իրականացումն ու պաշտպանությունը, միգրացիայի և փախստականներին առնչվող հարցերի բնագավառներում քաղաքականության մշակումը, ջրային համակարգերի անվտանգ օգտագործումը, տարածքային կառավարման իրականացումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունները և այլն:

2012 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Շարունակվում է չլուծված մնալ համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարների հետ կապված խնդիրը:
- Չեն կազմակերպվել պատշաճ հանրային քննարկումներ նախքան Սևանա լճից ջրի բաց թողնման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների փաթեթը ՀՀ Կառավարությանը ներկայացնելը:
- Դեռևս չլուծված է մնում փախստականների բնակարանային ապահովման և նրանց բնակարանային պայմանների բարելավման հարցը:
- Առկա են անբարենպաստ պայմաններ Նախարարության միգրացիոն պետական ծառայության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ չգտնվող այլ ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների համար:
- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերի ժամկետները չեն երկարաձգվել այն փախստականների համար, ում նկատմամբ սկսվել է կարգավիճակի դադարեցման կամ չեղյալ հայտարարելու գործընթաց, ինչպես նաև փախստականների կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերում անձի տվյալները, բացի անգլերեն լեզվից, չեն գրանցվել հայերեն և ռուսերեն լեզուներով:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Առանձին միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի շնորհիվ բնակարանով ապահովվել են որոշ փախստական ընտանիքներ:
- Բացահայտվել և արձանագրվել են համայնքի ղեկավարի սեփական կամ պետության կողմից պատվիրակված լիազորությունների սահմանազանցման մի շարք դեպքեր:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Նախարարությունը մշակել է «Ֆինանսական համահարթեցման մասին ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:
- Իրականացվել է համայնքներում ծրագրային բյուջետավարման ներդրում, Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Եվրոմիության երկրների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և բանկային կառույցների հետ համագործակցության միջոցով համայնքներում դրամաշնորհային և վարկային ծրագրերի ներգրավման ապահովում:
- 2012 թվականին գրանցվել է Երևանի և մարզերի միջև եկամուտների տարբերության կրճատում և բնակչության արտահոսքի նվազեցում, հայրենի բնակավայրում ապրելու և աշխատելու ցանկության աճ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շարունակվում է չլուծված մնալ համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարների հետ կապված խնդիրը, համաձայն որի՝ Նախարարության կողմից պարզվել է, որ հանրապետությունում առկա են 33 համայնքներ, որոնք 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ ունեն 300-ից ավելի բնակչություն, սակայն ստանում են 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների համար սահմանված գումարից (3,500 մլն. դրամ) պակաս դոտացիա: Նախարարությունը մշակել է «Ֆինանսական համահարթեցման մասին ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ դեռևս Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրները հաստատելու մասին ՀՀ Կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 77-Ն որոշմամբ: Համաձայն այդ նախագծի՝ այն համայնքները, որոնք ունեն 300-ից պակաս բնակչություն, ինչպես նաև այն համայնքները, որոնց բնակչությունը 300-ից ավելի է, կստանան դոտացիայի հաստատագրված մասնաբաժին՝ հավասար չափով: Ողջունելի է այն, որ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը, սակայն պարզ չէ թե ինչ հիմնավորմամբ է, որ դեռևս այդ նախագիծը չի հաստատվել և մինչ այժմ չի փոխանցվել ՀՀ Ազգային ժողով:

Նախարարության կողմից չեն կազմակերպվել պատշաճ հանրային քննարկումներ՝ նախքան Սևանա լճից ջրի բաց թողնման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների փաթեթը ՀՀ Կառավարություն ներկայացնելը: Պաշտպանի կողմից տվյալ հարցի շուրջ կազմակերպվել է մասնագիտական քննարկում՝ պետական մարմինների և մի շարք բնապահպանական հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Քննարկման արդյունքում պարզ է դարձել, որ օրենսդրական նշված փոփոխությունների ընդունման գործընթացում հասարակական լսումներ չէին կազմակերպվել, և հետևաբար, հասարակական կազմակերպություններին, ազդագիր համայնքին և հասարակության շահագրգիռ այլ անդամներին հնարավորություն չէր ընձեռվել նախքան օրինագծի ընդունումը արտահայտել իրենց դիրքորոշումը և որևէ կերպ ակնկալել դրա ներառումը օրինագծում: Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ հասարակայնության մասնակցության ապահովումը, որպես պետության պարտավորություն, նախատեսված է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Օրհուսի 1998թ. կոնվենցիայով, համաձայն որի՝ յուրաքանչյուր կողմ ապահովում է հասարակայնության մասնակցությունը վաղ փուլում, երբ բաց են բոլոր տարբերակների դիտարկման հնարավորությունները, և հասարակության մասնակցությունը կարող է արդյունավետ լինել: Անընդունելի է շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ սահմանված ընթացակարգային

կանոնների անտեսումը, որի արդյունքում խախտվում են շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացման թափանցիկության, հանրային մասնակցության ապահովման սկզբունքները:

1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած առավել կարիքավոր փախստականների բնակարանային պայմանների վերաբերյալ պարզ է դարձել, որ դեռևս 1172 ընտանիքներ, որոնից 857 ընտանիք Երևան քաղաքում և 315 ընտանիք Հայաստանի տարբեր մարզերում, համարվում են վերոգրյալ ծրագրի առաջնահերթ շահառուներ: ՀՀ պետական բյուջեով անցած չորս տարիների ընթացքում այդ ծրագրի ֆինանսավորում չի նախատեսվել: Չնայած 2008 թվականից սկսած յուրաքանչյուր տարի Նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից ՀՀ կառավարություն է ներկայացվել 4 միլիարդ դրամի բյուջետային հայտ, սակայն հայտը չի բավարարվել, և ՀՀ-ում ապաստանած փախստականներին բնակարանով ապահովելու խնդրին լուծում չի տրվել:

Պաշտպանը 2012 թվականի ընթացքում ստացել է բազմաթիվ դիմում-բողոքներ կապված այն խնդրի հետ, որ «Փախստականներին ժամանակավոր կացարաններում բնակեցնելու համար ուղեգրերի տրամադրման գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի» կանոնակարգը վերաբերում է միայն Նախարարության պետական ծառայության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող հանրակացարաններին: Իսկ այլ ժամանակավոր կացարաններում բնակեցնելու, հաշվառելու և հաշվառումից հանելու հարցը կարգավորվում է միայն այդ կացարանները տնօրինող մարմինների, դրանց սեփականատերերի հայեցողությամբ, ինչը կարող է անբարենպաստ պայմաններ ստեղծել Նախարարության միգրացիոն պետական ծառայության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ չգտնվող ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների համար: Փախստականների բնակեցնելու, հանրակացարաններ տրամադրելու հարցի կարևորությանը անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությանը վերաբերող իրենց եզրակացությունում:

Միաժամանակ փախստականների շահերին վերաբերող խնդիրներից է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերի ժամկետները չերկարաձգելը այն փախստականների համար, ում նկատմամբ սկսվել է կարգավիճակի դադարեցման կամ չեղյալ հայտարարելու գործընթաց: Շարունակվում է նաև չլուծված խնդիր մնալ փախստականների կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերում անձի տվյալները բացի անգլերեն լեզվից նաև հայերեն և ռուսերեն լեզուներով չգրանցելը: Չնայած այն հանգամանքին, որ փախստականներին կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթեր տալու իրավասությունը վերապահված է ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, Նախարարությունը, որպես ոլորտի լիազոր մարմին, պարտավոր է ապահովել փախստականների իրավունքների իրականացումն ու պաշտպանությունը: Հաշվի առնելով այն, որ Նախարարությունը, հանձինս Միգրացիոն պետական ծառայության, հանդիսանում է փախստականների իրավունքների իրականացումն ու պաշտպանությունն ապահովող, միգրացիային և փախստականներին առնչվող հարցերի բնագավառներում քաղաքականության մշակող լիազոր մարմին, տրամաբանական է, որ Նախարարությունը պետք է նախաձեռնի արդյունավետ մեխանիզմների մշակում վերոնշյալ հարցերի լուծման համար:

ՀՀ փոխվարչապետ և տարածքային կառավարման նախարարի կողմից 2012 թվականի հունվարի 30-ին հաստատված «Վարչական հսկողության 2012 թվականի

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 11 հրամանով նախատեսվել և հսկողություն է իրականացվել 10 մարզերի 313 համայնքներում: Հսկողության ընթացքում բացահայտվել և արձանագրվել են համայնքի ղեկավարի սեփական կամ պետության կողմից պատվիրակված լիազորությունների սահմանազանցման մի շարք դեպքեր, օրինակ՝ համայնքների ղեկավարների և ավագանու անդամների կողմից ընդունված անհատական կամ ներքին իրավական ակտերին և դրանց ծանուցմանն առաջադրվող պահանջների, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության պահանջների խախտումներ, առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում համայնքի ղեկավարի կողմից հսկողության չիրականացման դեպքեր, որոշ դեպքերում արձանագրվել են առանց թույլտվության ոգելից խմիչքների կամ ծխախոտի վաճառքի դեպքեր, երբ համապատասխան համայնքների կողմից չեն կիրառվել սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ և այլն: Վերոնշյալ մի շարք խախտումները մարզերում և համայնքներում կրել են համատարած բնույթ, սակայն ողջունելի է, որ դրանց կապակցությամբ ձեռնարկվել են միջոցներ և օրինախախտները ենթարկվել են պատասխանատվության:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համայնքի ղեկավարի սեփական կամ պետության պատվիրակված լիազորությունների չկատարման դեպքերը բացառելու նպատակով, իրականացնել արդյունավետ վերահսկողություն և ձեռնարկել հստակ կանխարգելման միջոցներ:
- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ փախստականների բնակարանային ապահովման խնդրին լուծում տալու, նրանց բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ, ինչպես նաև բարենպաստ պայմաններ ստեղծել Նախարարության միգրացիոն պետական ծառայության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ չգտնվող այլ ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների համար:
- Որպես ոլորտի լիազոր մարմին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել փախստականի կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը օրենքի պահանջներին համապատասխանեցնելու և կիրառելիությունը ապահովելու ուղղությամբ:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարների հետ կապված խնդրի լուծման կապակցությամբ:
- Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղամասային կենտրոններում նախաձեռնել միջոցառումներ՝ ուղղված ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների ընտրելու իրավունքի իրականացման մատչելիության ապահովմանը:
- Որպես օրենքի պահանջ՝ հասարակության մասնակցության ապահովումն իրականացնել օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հրապարակայնության, մատչելիության և թափանցիկության սկզբունքներին համապատասխան:
- Ձևավորել քաղաքացիական հասարակության հետ արդյունավետ համագործակցության մշակույթ և հրատապ միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը հասարակության համար անմատչելի դարձնող որոշումները և գործողությունները բացառելու ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունն իրականացնում է տրանսպորտի և կապի բնագավառներում օրենքով նախատեսված գործունեության տեսակների լիցենզավորումը, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և երթևեկության անվտանգության ապահովումը, միջպետական և միջմարզային ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթների կազմակերպումը, միջմարզային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների միասնական համակարգի ապահովումը և այլն:

2012 թվականին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացվում են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ստացվել են մի շարք բողոքներ ճանապարհների, մասնավորապես գյուղական համայնքներն իրար կապող ճանապարհների անբարեկարգ վիճակի վերաբերյալ:
- Նախարարության կողմից առանձին դեպքերում պատշաճ հսկողություն չի իրականացվել փոխադրողների կողմից կանոնավոր ուղևորափոխադրումները ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան սպասարկումն իրականացնելու նկատմամբ և բավարար միջոցներ չեն ձեռնարկվել 2012 թվականի ընթացքում երթուղիների չվացուցակների խախտման վերաբերյալ բողոքների արդյունավետ լուծման ուղղությամբ:
- Շարունակում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովման խնդիրը:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

- Մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին արձագանքելու ուղղությամբ կառուցողական համագործակցություն է ձևավորվել Պաշտպանի աշխատակազմի և նախարարության միջև:
- Լրացում է կատարվել Կառավարության որոշման մեջ, որի արդյունքում հաշմանդամ երեխային տեղափոխող՝ ծնողին, խնամակալին կամ վարորդին մեքենան արգելված վայրում կանգնեցնելու համար այդ անձինք չեն տուգանվելու:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Մեր կողմից բարձրացված «Զվարթնոց» օդանավակայանում լիցենզավորված մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնելու սահմանափակումները գործնականում վերացվել են:
- Սահմանվել է ինքնաշեն տրանսպորտային միջոցների պետական հաշվառման և պետական գրանցման կարգը, որի արդյունքում հստակեցվել է գործընթացը:
- Նախապես հաստատված ժամանակացույցին համապատասխան Նախարարությունը իրականացրել է ուսումնասիրություններ՝ փոխադրողների կողմից կանոնավոր ուղևորափոխադրումները ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան սպասարկումն իրականացնելու նպատակով:
- 2012 թվականի ընթացքում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից անցկացված միջմարզային և միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների մրցույթներն անց են կացվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ հավասար մրցակցային պայմաններում:
- Հանվել է տրանսպորտային միջոցներին ներկայացվող տարիքային սահմանափակումը, որի արդյունքում 2012 թվականին ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա է տրվել 1960 անհատ ձեռնարկատիրոջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ քաղաքացիների կողմից մտահոգություններ են հնչել ճանապարհների անբարեկարգ վիճակի մասին: Մասնավորապես, ծայրահեղ անբարեկարգ վիճակում են գտնվում ՀՀ գյուղական համայնքներն իրար կապող ճանապարհները, ինչի արդյունքում, երբեմն, նույնիսկ տնտեսվարողները իրենց գյուղատնտեսական ապրանքները շուկա չեն կարողանում հասցնել: Բացի այդ, շատ դեպքերում պատշաճ հետևողականություն չի ցուցաբերվում հանրապետության մի շարք մայրուղիների բարեկարգման աշխատանքների նկատմամբ, ինչի հետևանքով շատ հաճախակի կարիք է առաջանում նույն ճանապարհների բարեկարգման նպատակով կատարել կրկնակի աշխատանք: Բացի այդ, Համաշխարհային տնտեսական ֆորումի (WEF) փորձագետների կատարած ուսումնասիրությունների արդյունքում հրապարակած զեկույցում, ի թիվս մի շարք այլ երկրների, Հայաստանը ճանապարհների վիճակով 80-րդ տեղում է գտնվում: Կազմակերպությունը ուսումնասիրությունները կատարելիս հաշվի է առել, թե ճանապարհատրանսպորտային պատահարների, որ մասն է անբարեկարգ ճանապարհների հետևանք, որքանով են ճանապարհները հետիոտնի համար անվտանգ և այլն:

2012 թվականի ընթացքում մի շարք քաղաքացիներ Պաշտպանին ուղղված բանավոր դիմումներով հայտնել էին, որ Երևան-Աբովյան-Երևան ուղղություններով ուղևորափոխադրումներ չեն իրականացվել «Տիգրան», «Սմարթսվթ» և «Քինգ Դեյլյուքս» ՍՊ ընկերություններին պատկանող թիվ 259, 261 և 267 միջմարզային ավտոբուսային երթուղիներով, ինչը խափանում էր հաստատված չվացուցակների պահանջների կատարումը և խախտում էր «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի դրույթները: Միայն կրկնակի ուսումնասիրում կատարելուց հետո նշվածի վերաբերյալ Նախարարությունը հայտնել է, որ «ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» բարեգործական հիմնադրամի

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

կողմից տրամադրված տրանսպորտային միջոցներով 2012 թվականի մարտի սկզբին Աբովյան–Երևան և հակառակ ուղղությամբ իրականացվել են անվճար ուղևորափոխադրումներ, որի հետևանքով վերը նշված երթուղիներում շահագործվել է չվացուցակով սահմանված թվաքանակից սակավ քանակությամբ շարժակազմ: Միևնույն ժամանակ Նախարարությունը նշել է, որ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան միջոցներ են ձեռնարկվել արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ: Այնինչ, միևնույն ժամանակ անվճար իրականացնող ուղևորափոխադրումները չեն կարող դիտարկվել որպես բարեգործություն, քանի որ համաձայն «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի՝ բարեգործություն չի կարող դիտարկվել այն օգնությունը, որից կարող են օգտվել բոլորը՝ և կարիքավորները, և նյութապես ապահովվածները, բարեգործությունը պետք է որոշակի ուղղվածություն ունենա՝ հաշմանդամներ, ծնողազուրկ երեխաներ, գործազուրկներ, սակավ ապահովված ընտանիքներ, պատերազմից ու տարերային աղետներից տուժածներ և այլն: Այսպիսով, կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացումը բարեգործական համարվել չէր կարող, սակայն չէր կարող նաև կասեցվել՝ պետական լիազոր մարմնի բացակայության պատճառով: Նման պարագայում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության իրավասության մեջ է մտնում արգելել կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ցանկացած կազմակերպության գործունեություն (այդ թվում՝ բարեգործական), որը մրցույթով չի շահել այդ իրավունքը:

2012 թվականի ընթացքում երթուղիների չվացուցակների խախտման վերաբերյալ եղել է թվով 11 բողոք, որոնցից 3-ը առնչվել են միջքաղաքային և մերձքաղաքային կանոնավոր երթուղիների ոչ կանոնավոր աշխատանքներին: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է որ, տվյալ երթուղիները նշված ժամանակահատվածում չեն գործել, քանի որ դրանց սպասարկման ժամկետներն ավարտվել են և երթուղիների սպասարկման համար նոր հայտարարված մրցույթներին ոչ մի կազմակերպության կողմից հայտեր չեն ներկայացվել: Արդյունքում Նախարարության կողմից կայացվել էր որոշում՝ երթուղիների սպասարկման համար կրկնակի մրցույթներ հայտարարելու նպատակով: Այնինչ, նման դեպքերում Նախարարությունը պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի առաջացած խնդիրը ժամանակավորապես իր միջոցներով լուծելու ուղղությամբ, այլ ոչ թե խնդրի լուծումը հետաձգի մինչև կրկնակի նշանակված մրցույթի արդյունքները՝ հաշվի առնելով, որ մրցույթների արդյունքները կարող են նույնը լինել, ինչի հետևանքով միջքաղաքային և մերձքաղաքային կանոնավոր երթուղիների աշխատանքների կազմակերպման խնդրին այդպես էլ կարող է լուծում չտրվել:

Նախարարության կողմից հայտարարված կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման մրցույթներում հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովումը, որպես պարտադիր պայման չի նշվել, քանի որ ՀՀ կառավարության 16.08.2001թ. թիվ 762 որոշմամբ նման պահանջ սահմանված չի եղել, ինչի հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք զրկվում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ազատ տեղաշարժման իրավունքից: Այդ իրավունքի իրականացման միակ տարբերակը վերջիններիս համար տաքսի կամ այլ ծառայություններից օգտվելն է, ինչը ոչ բոլորի համար է մատչելի: Սակայն ողջունելի է այն, որ ՀՀ կառավարության 2013 թվականի գործունեության ծրագրով նախատեսվում է կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների կազմակերպման մրցութային կարգում կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ, որոնք որպես

մրցութային պայման կսահմանեն ավտոբուսային երթուղիներում նախատեսված տրանսպորտային միջոցի մատչելիությունը հաշմանդամների փոխադրման համար:

2012 թվականի ընթացքում մեր կողմից բարձրացվել էր հաշմանդամություն ունեցող երեխաներին տրանսպորտային միջոցներով փոխադրող ծնողներին կամ խնամակալներին տուգանելու վերացման հարցը: Այսպես, գործնականում հաշմանդամություն ունեցող երեխային տեղափոխելիս մեքենան անհամապատասխան վայրում կանգնեցնելու համար ՀՀ ճանապարհային ոստիկանության աշխատակիցները տուգանում էին հաշմանդամություն ունեցող երեխայի տեղափոխող ծնողին, խնամակալին կամ վարորդին: Խնդիրն ուսումնասիրելիս պարզ էր դարձել, որ պատճառը հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխողներին վերաբերող Կառավարության համապատասխան որոշման մեջ առկա բացն էր: ՀՀ Կառավարության 26.10.2006թ. թիվ 1699-Ն որոշմամբ սահմանված է, որ տրանսպորտային միջոցների օգտագործման համար արտոնություններ նախատեսող նշանների ազդեցությունը տարածվում է միայն այն տրանսպորտային միջոցների վրա, որոնք վարում են 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները կամ փոխադրում են նման հաշմանդամների: Այսինքն, Կառավարության սույն որոշմամբ սահմանված դրույթով վերոնշյալ արտոնությունները չեն տրամադրվում «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխաների ծնողներին կամ խնամակալներին: Սա լուրջ մտահոգության առիթ է տալիս երեխաների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ մեր հասարակությունում կան բազմաթիվ այդպիսի երեխաներ և արդյունքում վերջիններիս ազատ տեղաշարժման իրավունքը ոչ իրավաչափորեն սահմանափակվում էր: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ խնդրի լուծման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջարկությունը ընդունվել էր ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից: Ողջունելի է այն հանգամանքը, որ Նախարարության կողմից սեղմ ժամկետներում առաջարկ էր ներկայացվել Կառավարությանը՝ ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամների համար սահմանված արտոնությունները տարածել նաև «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխաների ծնողների կամ խնամակալների վրա: Չնայած վերոնշյալ առաջարկի՝ Կառավարության կողմից քննարկման անհարկի ձգձգումներին՝ 2012 թվականի դեկտեմբերի 20-ին Կառավարությունը ընդունեց որոշում, որտեղ խնդրո առարկա որոշումներում կատարվել են լրացումներ՝ այդ կերպ լուծում տալով «հաշմանդամ երեխայի» կարգավիճակ ունեցող երեխաներ փոխադրողների (ծնող կամ խնամակալ) տրանսպորտային միջոցների տեղաշարժման և կայանման մատչելիության խնդրին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Միջոցներ ձեռնարկել պատշաճ իրականացնելու ճանապարհների՝ մասնավորապես գյուղերի ճանապարհների բարեկարգման աշխատանքները:
- Միջոցներ ձեռնարկել իրականացնելու պատշաճ հսկողություն կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարման նկատմամբ:
- Հետևողական լինել տրանսպորտային միջոցների երթևեկության պատշաճ կազմակերպման ուղղությամբ, հարկ եղած դեպքում առաջացած խնդիրների լուծման նպատակով ձեռնարկել անհրաժեշտ ժամանակավոր միջոցներ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Հետևողական լինել ՀՀ կառավարության 2013 թվականի գործունեության ծրագրով նախատեսված կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների կազմակերպման մրցութային կարգում օրենսդրական համապատասխան փոփոխություններ կատարելու ուղղությամբ՝ հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման իրավունքն ապահովելու նպատակով: